11613

31075)
F-89

1-80 կ.
Ա

Ն. ԲՈՑՎԱՉԵ, Կ. ԲՈՒՐՋԱՆԱՉԵ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. ՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ

II ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՎՐԱՑԵՐԵՆԻՑ
Ա. ՀՈԳԻՋԱՆԵՑԱՆ

ԹԻՖԼԻՍ
ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏՀՐԱՏ 1932 ՈՒՍ.-ՄԱՆԿԱՎԱՐԺ. ՍԵԿՏՈՐ

3(075)
Բ-89

3 [075]
Բ-89

1 DEC 2009
25 SEP 2006

Ն. ԲՈՑՎԱՋԵ, Կ. ԲՈՒՐՋԱՆԱՋԵ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ

II ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

Լ. ՑԻԽԻՄԹԱՎՈՒ խմբագրությամբ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՎՐԱՑԵՐԵՆԻՑ
Ա. ՀՈԳԻՋԱՆՅԱՆ

ԹԻՖԼԻՍ
Վրատասանք Գեսարբա 1932 Ռուսական-մեքենագրական Սեկտոր

06.03.2013

1613

Ծրագրեց և թողարկեց Գ. ԲԱԲՈՒՐՅԱՆ

Վրաստ. Պետհրատի 2-րդ տպարան, Լենինի փող. № 3

Գաղվեր № 510 Գլավլիտ 325-ն Տիրաժ 5100

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясн...
Ս. ՍՍԱՆՅԱՆԻ ան.ով

60878-67

1. ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ԱՌԱՋ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ

Ո՞ւմ էր պատկանում առաջ իշխանությունը

Առաջ յերկրի տերը թագավորն եր։ Նա յեր աշխատավոր ժողովրդի գործերը կառավարում։

Թագավորի թև ու թիկունքն եյին կալվածատերերը, գործարանատերերը և քահանաները։ Սրանք յերկրի գործերն այնպես եյին կառավարում, ինչպես իրենց եր ձեռնտու։

Նրանք աշխատում եյին ժողովրդի աշխատանքից, վորքան կարելի յե, շատ ոգուտ ստանալ, հարստանալ։

Նրանք ժողովրդի կարիքների մասին յերբեք չեյին մտածում։

Թագավորի և հարուստների համար աշխատավոր ժողովուրդը լծկան անասուն եր. նա պարտավոր եր իր տերերին պահել, կերակրել։

Ահա թե ինչպես եյին ճրիակերներն ոգտվում աշխատավոր ժողովրդի ծանր աշխատանքից։

Հեղափոխությունից առաջ ինչպես եյին ապրում բանվորները

Վանոն ապրում եր նկուղներից մեկում։

Նրա սենյակն յերբեք արևի ճառագայթներ չեր տեսնում։

Սենյակը մութն եր ու խոնավ։

Վանոյի մայրը լվացարարուհի յեր։ Ձմեռը տանն եր լվացքը չորացնում, վորովհետև դուրսը ցուրտ եր—ձյուն, ու լվացքը ժամանակին չեր չորանում։

Վոչ Վանոն և վոչ նրա փոքրիկ քույրն ու յեղբայրը խաղալիքներ չունեյին։

Նրանց միակ խաղալիքը փայտն եր ու մեկ ել պարանի կտորը։

Վանոն քրոջն ու յեղբորը լծում եր պարանին, փայտը մտրակի պես շարժում ու ձի խաղում։

Յերեխաները տանից շատ քիչ եյին դուրս գալիս, վորովհետև նրանց հագուստը շատ եր պատառոտված։

Հայրը յերեկոներն աշխատանքից շատ ուշ եր վերադառնում։

Նա շարունակ հազում եր, ախորժակ չուներ և միմիայն թեյ եր խմում։

Հայրը շատ եր սիրում ու խղճում յերեխաներին։ Նա շատ եր ցավում, վոր յերեկոները դատարկաձեռն և տուն վերադառնում ու այնքան միջոց չունի, վոր յերեխաների համար գոնե մի փոքրիկ բլիթ գնի։

Բժիշկը շարունակ կրկնում եր. «ողի և արևի կարիք ունես, պետք է լավ սնվես»։ Բայց վորտեղից կարող եր Վանոյի հայրն այդ բոլորը ձեռք բերել։ Ինչպես կարող եր հետևել իր առողջությանը։

Նա գյուղ գնալու վոչ միջոց և վոչ էլ իրավունք ուներ, իսկ յեթե գնար, անմիջապես գործարանից կարձակեյին։

Վանոյի հայրն այնպես եր ուժասպառ յեղել, վոր հազիվ հազ եր աշխատում, բայց, չնայած այդ բանին, նա ստիպված եր որական 12—14 ժամ գործարանում մնալ, աշխատել։

Գործարանում սոսկալի փոշի յեր։

Գործարանատերը բանվորների առողջության մասին բոլորովին չեր մտածում։ Նա միմիայն մի բան գիտեր—վորքան կարելի յե, շատ հարստանալ։

Գարնան ամիսներից մեկն եր։ Վանոյի հայրը սաստիկ հիվանդացավ։ Նրան հիվանդանոց տեղավորեցին։

Բայց նա այնտեղ յերկար չապրեց։

Յերեխաները վորբ մնացին։

Լալիս եյին յերեխաները, լալիս եր նրանց մայրը։

Թշվառ մայրը մնաց տնոգնական։

Նա գիմեց գործարանատիրոջը.

— Ողնիր իմ վորբերին, նրանց հայրն իր ամբողջ յեռանդն ու առողջությունը նվիրեց այս գործարանին, տասնհինգ տարի շարունակ ծառայեց ձեզ, այժմ նա չկա, հնարավորություն տուր, վոր յերեխաներս սոված չկոտորվեն։

Գործարանատերը բավական սառնասիրտ պատասխանեց.

— Մեր որենքը չի ասում, թե մենք պարտավոր ենք վորբերին ողնել։ Յերեխաները քոնն են, ինքդ մտածիր նրանց մասին։

Ի՞նչ կարող եր անել խեղճ կինը։ Զորս յերեխային պահելն այնքան էլ հեշտ չեր։ Նրանցից ամենամեծին—Վանոյին գյուղ ուղարկեց իր յեղբոր մոտ։

Այնտեղ յերեխան պետք է իր քեռու մոտ աշխատեր և այդպիսով գոնե մի կտոր հաց ուտեր։

Նկարչի արհեստանոցում

Հեղինեյի հայրը նկարիչ եր։

Նա հրավիրեց մեր խմբի յերեխաներին իր նկարները դիտելու։

Մենք գնացինք։

Բավական մեծ եր նրա աշխատանքի սենյակը։

Ամեն տեղ—թե պատերին և թե սեղաններին նկարներ եյին շարված։

Հեղինեյի հայրը կապույտ խալաթ եր հագել։

— Յեկեք, փոքրիկներս, յես ձեզ եյի սպասում,—ասաց նա քաղցր ձայնով։

Նա մեզ տարավ արհեստանոցի անկյուններից մեկը և սկսեց.

— Այս անկյունում դուք կտեսնեք, թե ինչպես եյին ապրում բանվորները հեղափոխությունից առաջ։

Լավ նայեք։

Նկարներից մեկի վրա մենք տեսանք գործարան, մոխրագույն յերկինք, դեպի գործարան շտապող բանվորների մի խումբ։

Նկարի տակ գրված եր։

Շչակը բանվորներին աշխատանքի յե հրավիրում

— Շատ վաղ եր սկսվում աշխատանքը գործարանում և ուշ գիշերով վերջանում,—շարունակեց Հեղինեյի հայրը։ Բանվորներն որական 12-14 ժամ եյին աշխատում։ Նայեք այս բանվորներին, տեսեք, թե ինչպես են



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Յերդից կուչ յեկել։ Նրանք գիշերը չեն հանգստացել... Այն ժամանակ վոչ հանգիստ և վոչ էլ կանոնավոր սնունդ ունեյին։

— Հետևյալ նկարի վրա դուք կտեսնեք բանվորի ընտանիքը,—ուրախ ցույց տվեց նա նկարներից մեկը (նկ. 5-րդ յերեսին)։

Մենք տեսանք մի փոքրիկ, մութ, կեղտոտ սենյակ, մի հասարակ սեղան, վրան կաթսա։ Մի քանի նիհար յերեխաներ շրջապատել եյին սեղանը։ Սեղանի մոտ գլուխը կախ նստել եր մի բանվոր։

Նկարի տակ գրված եր.

Բանվորի ճաշը

— Վողորմելի և աղքատիկ եր բանվորի ճաշը,—բացատրում եր Հեղինեյի հայրը,—յերբեմն ամբողջ ընտանիքը միայն հացով ու թեյով եր ապրում։ Անգույն, անհետաքրքիր եյին անցնում բանվորի որերը։

Սրանից հետո նա մեզ առաջնորդեց դեպի մի նկար և ավելացրեց.

— Իսկ այստեղ կտեսնեք, թե ինչպես եյին ապրում գործարանատերերը։

Նկարի վրա մենք պարզ տեսնում եյինք գեղեցիկ, ծաղիկների մեջ թաղված մի մեծ տուն։ Պատշգամբում դրված եր մի մեծ սեղան, վորի շուրջը շարվել եր գործարանատիրոջ ամբողջ ընտանիքը։ Ծառաները տեսակ-տեսակ կերակուրներ եյին բերում դեպի այդ սեղանը։



Լուռ եր Հեղինեյի հայրը. նա ել չեր բացատրում, ասենք բացատրության կարիք ել չկար։

—Բանվորների մասին մտածող չկար,—արտասանեց Հեղինեյի հայրը։ Գործարանատերերը միայն իրենց շահի մասին եյին մտածում։ Բանվորների համբերության բաժակը լցվում է. նրանք գործադուլ են հայտարարում։

Ահա գործադուլի նկարը։ Նա մատով ցույց տվեց մի մեծ նկար։

Նկարի բովանդակությունը հետևյալն եր.

Բանվորները թողել եյին իրենց աշխատանքը ու դուրս եյին գալիս գործարանից։ Գործարանատերն իր բնակարանից նայում եր։ Նրա յերեսին մի խորամանկ ժպիտ կար և կարծես ուզում եր ասել.

— Գնացեք, գնացեք, միևնույն է, քաղցածությունը շուտով կստիպի ձեզ գործարան վերադառնալ։

—Վորտեղից գիտեք, թե առաջ ինչպես եյին ապրում բանվորները,—հարցրեց փոքրիկ Արտոն, վորի աչքերն արցունքով եյին լցվել։

—Ցես ինքս բանվորի վորդի յեմ, փոքրիկս. բացի այդ, յես մեծացել եմ բանվորական թաղամասում։

Այս նկարի վրա իմ սեփական ապրումներն եմ արտահայտել։ Նա վերցրած է իմ սեփական կյանքից։ Ահա մեր ոենյակը, մեր ճաշը. այս գործադուլին մասնակցել է հայրս,—բացատրեց Արտոյին Հեղինեյի հայրը։

—Գնալու ժամանակ է,—նախազգուշացրեց մեզ ուսուցիչը։

Մենք չեյինք ուզում հեռանալ, բայց արդեն ուշ եր։

—Հունվարի 20-ին նորից յեկեք. այն ժամանակ «Հունվարի 9-ի» նկարը պատրաստ կլինի և ցույց կտամ ձեզ։

Գնում եյինք դեպի դպրոց։

Քայլում եյինք տխուր, տրտում։

Մեր աչքերից չեյին հեռանում բանվորների տխուր, տանջված դեմքերը։

Գրեք. — Բանվորի աշխատանքը գործարանում թաղավորի ժամանակ։

Բանվորի բնակարանն առաջ

Քաղաքի ծայրամասում, հետ ընկած, կեղտոտ փողոցի վերջում, մի փոքրիկ, կիսագետնափոր տուն եր յերևում։

Սա բանվորի բնակարանն եր։

Այս բնակարանն ավելի շուտ մի նկուղ եր։ Ցածր առաստաղով, մութ ու խոնավ սենյակ եր։ Հազիվ եր լույսը պատուհանից յերևում։

Սենյակում կար մի թախտ, յերկու-յերեք ջարդված աթոռ և մի փոքրիկ սեղան։

Ահա բանվորի սենյակի ամբողջ զարդը։

Նիհար, դեղնած դեմքով յերեխաները նստել եյին մի անկյունում ու բորբոնած հաց եյին կրծում։

Քաղցած եյին նրանք։

Ծնողները վաղ առավոտից գործարանում եյին աշխատում։ Նրանք միայն գիշերներն եյին տուն վերադառնում։

Գործարանատիրոջ բնակարանը

Այժմ նայեք գործարանատիրոջ բնակարանին։ Նա ձգվել-բաղմել է քաղաքի ամենաաչքի ընկնող փողոցներից մեկում։ Տունն ունի հոտավետ, գեղեցիկ մի ծաղկանոց, վորի քաղցր բուրմունքը լցրել է շրջակայքը։

Տունը մեծ բակ ունի։

Այստեղ վազվզում են, խաղում գործարանատիրոջ յերեխաները։

Լուսավոր, մեծ սենյակները լի յեն հազար ու մի թանգարժեք կահկարասիքով։ Գործարանատիրոջ ընտանիքն ամեն որ տեսակ-տեսակ կերակուրներ է անուշ անում։ Շտապ-շտապ ներս ու դուրս են անում ծառաները։ Գործարանատիրոջ ընտանիքն ամառնային ամիսներն անց է կացնում այնտեղ, վորտեղ ցանկանում է—յերբեմն ծովափին, յերբեմն մայրի անտառում։

Բանվորի քրտինքով ձեռք բերած փողով է ապրում, գիրանում գործարանատիրոջ ընտանիքը։

Համեմատեցեք բանվորի բնակարանը գործարանատիրոջ բնակարանի հետ։

Կնոջ դրությունը հին ժամանակներում

Անհետաքրքիր ու աղքատության մեջ եր անցնում բանվորի կյանքը հին ժամանակներում։

Աշխատանքի ծանր լծի տակ հեծում եր բանվորը և շատ շուտ ել զրկվում կյանքից։ Որական 12—14 ժամվա աշխատանքը գործարանում մաշում եր նրա կյանքը, զրկում նրան առողջությունից, մանավանդ, վոր չընչին ել աշխատավարձ եր ստանում։

Խոնավ սենյակը, վատ սնունդը և աշատանքի վատ պայմանները հիվանդության ճանկն եյին մատնում բանվորի ընտանիքը։

Կարիքն ստիպում եր կնոջը անտեր, անուշադիր թողնել յերեխաներին և գնալ գործարան աշխատելու։

Բայց կնոջ աշխատանքը տղամարդու աշխատանքից ավելի քիչ եր գնահատվում, գործարանատերը բանվոր-կնոջը շատ չնչին աշխատավարձ եր տալիս։

Եթե կինը գործարան եր գնում աշխատելու, իր հետ տանում եր տան ամբողջ հոգսը, նրան տանջում եր յերեխաների դրությունը։

Չե՞ վոր նրանք մնում եյին տանը բոլորովին անտեր, անոգնական։

Բայց ի՞նչ կարող եր անել մայրը։ Կարիքը ստիպում եր նրան թողնել յերեխաներին բոլորովին անխնամ։

Չնայած յերկուսն էլ՝ թե հայրը և թե մայրն աշխատում եյին, բայց և այնպես չեյին կարողանում ազատվել կարիքի ու աղքատության ճիրաններից։

Ինչո՞ւ. վորովհետև—գործարանատերը շատ փոքր աշխատավարձ եր տալիս, վորպեսզի ինքն ավելի ու ավելի հարստանա։

Յերեխաների դրությունն առաջ

Մեծ տանջանքով ու չարչարանքով եյին մեծանում աշխատավորների յերեխաները թագավորի ժամանակ։

Դպրոցի դռները փակ եյին նրանց առաջ։ Վոչ թագավորը և վոչ հարուստները նրանց ուսման մասին չեյին մտածում։

Ասենք ի՞նչի յեր հարկավոր թագավորին ու հարուստներին ժողովրդի լուսավորությունը։

Նրանց միմիայն բանվորի աշխատանքն եր հարկավոր։ Չե՞ վոր բանվորի աշխատանքը նրանց պահում եր, ապահովում, չե՞ վոր նրանք առանց աշխատելու հարստանում եյին։



Բանվորի վորդին էլ ստիպված եր լինում աշխատանքի համար մտնել գործարան, վորովհետև իրենց ընտանիքը շարունակ կարիքի մեջ եր գտնվում։

Անտանելի էր յերեխայի աշխատանքը գործարանում։ Գործարանատերը նրան լծում էր ամենածանր աշխատանքի։ Սրանից յերեխան հիվանդանում էր։

Յերեխաներին էլ այնքան էին աշխատեցնում, վորքան մեծերին։

Հաճախ հոգնած յերեխայի քունը տանում էր ու մի փոքր աչքը փակում մեքենայի առաջ։ Գործարանատերը նրան այս բանի համար շատ խիստ էր պատժում։

Շատ չնչին էր նաև յերեխայի աշխատավարձը։

Այս նույն տանջանքին էին յենթարկում աշխատավոր յերեխայինն նաև կալվածատերն ու վաճառականը։



Աշխատանքի ծանրությունը, կոպիտ վերաբերմունքը, ծեծն ու ստորացումը—յերեխայի մեջ մեռցնում էին մանկական աշխուժությունը, ժպիտն ու յեռանդը։

Յեվ հաճախ, այս դաժան աշխատանքի հետևանքն այն էր լինում, վոր կենսուրախ, առողջ յերեխան կորցնում էր առողջությունը, հիվանդանում և զրկվում կյանքից։

Գյուղացու դրությունը թագավորի ժամանակ

Անտանելի աշխատանք էր տանում գյուղացին թագավորի ժամանակ։ Նա շատ, չափից դուրս շատ էր աշխատում։

Չէ՞ վոր բացի իր ընտանիքից գյուղացին պարտավոր էր պահել, կերակրել, ապրեցնել նաև կալվածատիրոջ ընտանիքը։

Գյուղացու աշխատանքով էր քեֆեր անում կալվածատերը։

Կալվածատերը չգիտեր ինչ է աշխատանքը, ինչ է քրտինքը, ինչ է կարիքը, ինչպես է ձեռք բերվում մի կտոր հացը։

Նա իր ամբողջ կյանքն անց էր կացնում քեֆերի ու զվարճությունների մեջ։ Նա վոչ մի հոգս չուներ, նրա համար ամեն ինչ պատրաստ էր։

Գյուղացու հոգին դուրս էր գալիս, վորպեսզի կալվածատիրոջ քեֆերն ու ուրախությունները չպակասեն։

Այն ժամանակ, յերբ աշխատավոր գյուղացին մութ ու խոնավ գետնափոր խրճթի մեջ էր ապրում, կալվածատիրոջ գեղեցիկ ապարանքը հպարտ-հպարտ դիտում, իշխում էր շրջակայքի վրա։

Այն ժամանակ, յերբ քրտնախաշ գյուղացին գլխիկոր աշխատում էր հողի վրա, կալվածատերն ու նրա ընտանիքը ճանապարհորդություններ էին կատարում և շռայլ կյանք վարում զանազան յերկրներում։

Վոչվոք գյուղացու լուսավորության մասին չէր մտածում։ Նա խեղդվում էր սնոտիապաշտության ու տգիտության ծովի մեջ։

Բայց գյուղացու սրտում թույն էր կուտակվում։ Նա սպասում էր այն յերջանիկ ժամին, յերբ վերջ կտրվի այս բոլորին։

Յեվ զարմանալու չէ, յեթե միապետության ժամանակ գյուղացին լուռ, հաղիվ լսելի ձայնով, բայց դարդերով լի—հետևյալ յերգն էր յերգում.

Վորտեղ գյուղացին քրտինք է թափում,
— Տանջանք, չարչարանք ու դարդ է իշխում։
Ամեն գյուղացի քրտնքախաշ լինում,
Ամեն մեկը նրա արյունն է ծծում։

Աշխատավորի քրտինք-արցունքից
Այս աշխարհն արդեն փոխվել է ճահճի։
Նա յե՛ աշխատում—ուրիշն է լափում,
Այս ի՞նչ անորեն բան է կատարվում»։

Առաջ հողն ո՞ւմ էր պատկանում

Թագավորի ժամանակ հողի մեծագույն մասը կալվածատիրոջ ձեռքին էր։ Նրան էին պատկանում վարելահողերը, անտառները, այգիները, արոտատեղերը։

Գյուղացին կամ բոլորովին հող չուներ, կամ յեթե ուներ էլ—շատ չընչին էր։

Բնական է, վոր փոքրիկ հողամասի բերքը չէր կարող կերակրել գյուղացու ընտանիքին։ Ու սրա համար գյուղացին ստիպված էր կալվածատիրոջ հողն էլ մշակել։

Կալվածատիրոջ հողերը միմիայն գյուղացիներն էին մշակում, իսկ իրենք տերերը ամենևին չէին աշխատում։

Գիշեր-ցերեկ գյուղացին մեջքը ծռած քրտինք էր թափում կալվածատիրոջ հողի վրա, բայց և այնպես սովից ու աղքատությունից չէր կարողանում ազատվել։

Ասենք, ինչպե՞ս կարող էր ազատվել գյուղացին, յերբ բերքի մեծ մասը կալվածատերն էր տանում, իսկ գյուղացուն հազարյա վոչինչ չէր մնում։

Յեվ այն ժամանակ, յերբ կալվածատիրոջ շտեմարանները ցորենով, իսկ կարասները գինով լի էին, գյուղացու ընտանիքը չոր հացի կարոտ էր մնում։

Ո՞վ էր ոգևվում գյուղացու աշխատանքից

Հուլիս ամիսն էր։

Շիկացած ոդը կարծես այրել էր ուզում շրջակայքը։

Ամեն բանից յերևում էր, վոր այս տոթը նոր չէ պառկել գյուղի վրա։ Ծառերի տերևներն անժամանակ դեղնել էին, իսկ դալկացած բույսերը տխուր, տրտում գլուխներն իջեցրել էին դեպի գետին։ Հասկերը հրաժարվում էին ցորենի հատիկները պահելուց, իսկ հողը տաքությունից ահագին շերտերով կտոր-կտոր էր յեղել։ Վորքան էլ վորոնեիք, վոչ մի տեղ կանաչ խոտ չեյիք գտնի։ Ամեն ինչ դեղնել էր, ամեն ինչ այրվել։

Անասունները բառաչելով աննպատակ թափառում էին մերկ հողի վրա։



Գյուղացիները հուսահատ դիտում էին, թե ինչպես և կորչում իրենց քրտնքի արդյունքը։

Այդ տարին բերքը փչացավ, անասունը սովից կոտորվեց։

Կալվածատիրոջ շտեմարաններն էին միայն, վոր դեռ անցյալ տարվանից լիքն էին մնացել։

Գյուղացիները վճռեցին պարտքով հաց վերցնել կալվածատիրոջից։

Սոված գյուղացիները դիմեցին նրան, բայց նա պատասխանի փոխարեն հայհոյանքներ թափեց նրանց գլխին։

—Մեր քրտինքով է, վոր լցրել ես շտեմարաններդ. չե՞ վոր դու վոչ ցանում ես, վոչ էլ հնձում։ Մի՞թե այս նեղ որերին մեզ չպետք է ոգնես մեր իսկ աշխատանքով ստացածդ ցորենով,—ասացին գյուղացիները։

Կալվածատերը կատաղեց։

Նա հրամայեց ծառաներին ծեծելով հեռացնել գյուղացիներին։



Սովից ու ծեծից ուժասպառ յեղած գյուղացիները դատարկաձեռն տուն էին վերադառնում, բայց միաժամանակ մտածում, թե ինչպես պետք է ազատվեն այդ դրությունից։

Այսպես էին ծեծում—թալանում գյուղացիներին

Հոգնած, դաղարած դեղջուկ Գոգին վերադարձավ իր խրճիթը։ Թոխին պատին հենեց, իսկ ինքը քարի վրա նստեց։

Ցերկու փոքրիկ, բոլորովին մերկ յերեխաներն ուրախ-ուրախ փաթաթվեցին իրենց հորը։

Ամենափոքրը բարձրացավ, նստեց հոր ծնկանը և իր գանգուր գլուխը հենեց նրա քրտնած կրծքին, իսկ ավելի մեծը կախ ընկավ հոր վզից։

Մարինեն ամուսնու վերադարձն իմանալով, սառը ջուրը ձեռքին դուրս եկավ խրճթից և ոգնեց Գոգիին ձեռքերն ու յերեսը լվանալու, իսկ հետո ժճադին (յեգիպտացորենի ալյուրից պատրաստած հաց) դուրս բերեց ու ասաց.

—Բաղցած ես, կեր։

Սա յեր նրանց ամբողջ ճաշը։

Նոր եր կոտրել Գոգին ժճադին և ուտել սկսել, յերբ նրա գլխին կանգնեցին տանուտերն (մամասախլիսի) ու գզիրը (հացվալի)։

—Գոգի,—ասաց հանդիմանական ձայնով տանուտերը,—մի թուման (10 ռ.) պետք է վճարես պետական գանձարանին։ Պետական պարտք է, անմիջապես պետք է վճարես։



—Ի՞նչ ես ասում, այ մարդ, մի՞թե 10 ռուբլին այդքան հեշտ է ճարվում։ Յերեք ամիս աշխատեմ, տասը ռուբլի չեմ հավաքի,—պատասխանեց Գոգին տանուտերին։

—Չե՞ս ճարի... ճարել կտամ,—գոռաց տանուտերը և ավելացրեց—ավելի լավ է քիչ խոսես. յեթե փող չունես, կարող ես ուրիշ բան տալ, այ որինակ՝ հավ, գոճի...

—Հավերս կոտորվեցին, մնացել է միայն յերեք թուխս ու մի հատ էլ գոճի, էլ ուրիշ բան չունեմ,—դողդողալով պատասխանեց Գոգին։

—Ի՞նչ ես շատ հաջում,—կատաղեց տանուտերը,—յեթե կամքով չես տալիս, զորով կտանենք,—ավելացրեց նա ու գզիրի հետ քայլերն ուղղեց դեպի Գոգիի խրճիթը։

Սարսափած Գոգին հրեց տանուտերին։

Տանուտերը մտրակի հարվածներ իջեցրեց Գոգիի մեջքին։

Գոգին վայր ընկավ։

Կինն ու յերեխաները աղի արցունք թափելով շրջապատեցին գետին ընկած Գոգիին։

Սոսկալի պատկեր եր։

Տանուտերն ու գզիրը Գոգիի խրճթումն էյին։ Նրանք խուզարկեցին ամեն տեղ, բռնեցին Գոգիի վերջին յերեք հավը, գոճու վոտները կապկպեցին, Գոգիի հարեվան գյուղացիների շալակը տվին ու ճանապարհ ընկան։

Կապկպեցին Գոգիին ու տարան գյուղի դատարան։

Նրանց լաց ու կոծով հետևում էյին կինն ու յերեխաները։

Մի կտոր՝ Նինոշվիլու—«Գոգիա Ուլիշվիլուց».

Անգրագիտ

Մութ գիշեր է։ Ցուրտ է դուրսը։ Լուռ է գյուղը։ Ցերբեմն միայն շնագի հաջոցն է խախտում գյուղի լռությունը, յերբեմն միայն զգույշ քամին է որորում ձյունով ծածկված ծառերի ճյուղերը։

Հանկարծ ձիերի վոտնաձայն լսվեց։ Շտապ կերպով մարեցին գյուղի ճրագները։ Միայն գյուղի ծայրի տներից մեկում դեռ շարունակվում է լույսը վառ մնալ։ Տան մոտ մի սավեր յերևաց։ Նա զգուշ ոտքերով պատուհանին ու նույն զգուշությամբ թակեց։

Պատուհանը բացվեց և քնաթաթախ մի կնոջ դեմք յերևաց։

—Անիկո, շուտով մարիր ճրագը,—ասաց հարևան Մելոն.—դազախները գալիս են, թագնվիր, վոդորմելի։

Մելոն նույն արագությամբ հեռացավ պատուհանից ու կորավ գիշերային խավարի մեջ։

Անիկոն մի առժամանակ ապշած կանգնած եր, բայց շուտով սթափվեց, շտապ կերպով մարեց հրագը, վազեց դեպի փոքրիկ տղայի անկողինն ու սկսեց արթնացնել։

—Վերկաց, զավակս, շտապիր, փախչենք այստեղից. դաղախները մեր գլխին ելի մի ցավ են բերելու։

Վախեցած տղան ուզում եր լալ, բայց շուտով հիշեց դաղախներին, բանտում կորած իր կոմունիստ մարտիկ հորը, շտապ վեր թռավ և մի ակնթարթում իր մոր հետ անհետացավ գիշերային մթության մեջ։

Ձիերի վոտնաձայնն արդեն գյուղի փողոցներից եր լսվում։

Մարդկային ստվերները շարժվում եյին այստեղ ու այնտեղ և կորչում խավարի մեջ։

Լսվում եյին ախ ու վախի վողբալի ձայներ։

Անիկոն իր վորդու հետ վազում եր դեպի այգիները։

Մթության մեջ նրանք ընկնում եյին, բարձրանում։

Հանկարծ այգիներից մեկի մոտ ձիավոր դաղախը նրանց առաջը կտրեց։ Մայր ու վորդի բաժանվեցին իրարից։ Ցերեխան ինչ վոր փոսի մեջ թաքնվեց, իսկ մայրը կծկվեց ցանկապատի առաջ։

—Ո՞վ ե այստեղ,—գոռաց դաղախը, հետո մտրակեց ձիուն ու հրացանից կրակելով նետվեց գյուղի կողմը։

Ցերկար ժամանակ Բեսոն ընկած եր փոսի մեջ. նա վոչինչ չեր զգում, վոչինչ չեր հասկանում։

Բեսոն ուշքի յեկավ, աչքերը լայն բացեց, այս կողմ ու այն կողմ նայեց ու զգույշ ձայնով «մայրիկ, մայրիկ» կանչեց։

Պատասխան չեր լսվում։

Ցերեխան սկսեց լալ։

Հանկարծ նրա առաջ սոսկալի մի պատկեր բացվեց...

Գյուղն այրվում եր...

Լսվում եյին հրացանի ձայներ, լաց, կոծ, աղաղակ, անասունների բառաչ։

—Անպատճառ մեր տունն են այրում,—ասաց տղան և վեր թռավ։

Չե՞ վոր նրա հայրը կոմունիստ եր... Նրան բանտ տարան, այնտեղ սպանեցին, այժմ ել տունն են այրում։

—Ի՞նչ ե լինելու մեր վերջը... մայրիկ, մայրիկ,—աղաղակում եր տղան։

Լուռ եր շուրջը։

Լուսաբացի հովը փչեց. լուսավորվում եր արևելքը. բնությունը զարթնում եր, իսկ սարսափած գյուղը մոխիր դառնում։

Տղան նկատեց գյուղից հեռացող դաղախներին։

Նա նետվեց դեպի գյուղ։

Տղան սոսկաց։

Մոխիր դարձած տան առաջ կանգնել եր իր մայրը՝ դեղնած, ուժասպառ։

—Մայրիկ, մայրիկ,—աղաղակեց տղան և ընկավ մոր գիրկը։

Մի յերկու տուն եր մնացել կանգուն, մնացածները մոխիր եյին դարձել։

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
60878-67

Մի պատկեր գյուղացու կյանքից

Դաթուան շատ աշխատասեր եր։

Չնայած գիշեր-ցերեկ աշխատում եր, բայց և այնպես չեր կարողանում իր ընտանիքի համար փոքր ի շատե ապահով վիճակ ստեղծել։

Ծանր հարկերը վերջնականապես աղքատության դուռն եյին հասցրել նրա ընտանիքը։

Շատ մեծ հարկեր եր վճարում այն ժամանակ գյուղացին։

Տարվա ընթացքում տանուտերն ու գրիչը մի քանի անգամ կեղեքում, թալանում եյին նրան։

Դաթուան ել չդիմացավ հարկերին... Քանի-քանի անգամ անգութ կերպով տակն ու վրա արին, ավերեցին, թալանեցին նրա տունը, խլեցին, տարան նրա անասունները, հարկի դիմաց ծախեցին նրա միակ հորթը։

Գարուն եր։

Հոգնած ու դադրած Դաթուան աշխատանքից նոր եր վերադարձել ու մի պատառ հաց ուտելու պատրաստություն եր տեսնում, յերբ տանուտերն իր յերկու ոգնականով Դաթուայի առաջ ցցվեցին։

Գունատվեց խեղճ Դաթուան։

Ցերեսուն և հինգ տարեկան տղամարդ եր Դաթուան, բայց յեթե այդ բոպեյին նրան տեսնեյիր—վախտուն և հինգ տարեկան ծերուկ կկարծեյիր։ Հազիվ եր խեղճն աչքերը բաց անում, ամբողջ մարմնով դողում եր։

Դաթուայի կինը կանգնել եր անշարժ և հպարտ ու արհամարհական հայացք ձգել անկոչ հյուրերի վրա։

—Ի՞նչ եք քարացել,—գոռաց կատաղած տանուտերը,—ավելի լավ չի՞ լինի, յեթե մի բան ուտեցնեք։

—Ի՞նչ սև քար պետք է ուտեցնեմ ձեզ, մարդակերներ,—դառն ու վշտալի ձայնով պատասխանեց Դաթուան։

—Շատ մի խոսիր, հիմար, քանի մանեթ ու կես պիտի վճարես, գեհ, շուտ,—հրամայեց տանուտերը։

—Քանի հատ ծակ կոպեկ անգամ չեք գտնի մեր տանը, ինչ պետք է տանք ձեզ. բավական չի՞, որ միակ հորթուկս տարար։

—Ուրեմն, չե՞ս ուզում վճարել, չե՞ս ուզում վճարել,—աղաղակեց տանուտերը և ապա դառնալով ոգնականներին կարգադրեց.

—Դուրս բերեք դրա գոմեշը։

Ոգնականները շարժվեցին տանուտերի հրամանը կատարելու։

—Գոմեշն իմն է և քանի կենդանի յեմ, չեմ թույլ տա տանեք,—գոռաց Դաթուայի կինը և վազեց, կարեց ոգնականների առաջը։

Տանուտերն ու ոգնականները շտապեցին դեպի գոմը։

Դաթուայի կինը վեր ցատկեց և կանգնեց գոմի շեմքին։

—Հեռացրեք, հեռացրեք այդ կատաղածին,—աղաղակում եր տանուտերը։

Տանուտերն ու ոգնականները շրջապատեցին Դաթուայի կնոջը։

Սկսվեց աղմուկ, աղաղակ, լաց, անեծք, հայհոյանք։

Այս աղմուկի մեջ Դաթուայի կինը տանուտերի գլխին թիակի մի ուժեղ հարված իջեցրեց։ Տանուտերն ու ոգնականները նահանջեցին։ Տանուտերի գլխից արյուն եր հոսում։

Ցերեկոյան դեմ Դաթուայի կնոջը, ձեռքերը կապկված, բանտն եյին տանում։

Գոմեշն ել քշեցին, տարան։

Ն. Լոմոուրի։

Ի՞նչ եյին ուզում նրանից

I

Ցերեք տարի յե, ինչ աղքատ գյուղացի Սիմոնն իր կնոջ Մարթայի և յերեք տղայի հետ գյուղից քաղաք եր յեկել։

Սիմոնն ու Մարթան շատ տանջվեցին, չարչարվեցին, մինչև վոր կարողացան մի աշխատանք գտնել։

Ցերբեմն շաբաթներով քաղցած եյին մնում, քիչ եր մնում յերեխաները սովից կոտորվեյին։

Վերջապես մի գործի կպան։

Սիմոնն սկսեց փայտ սղոցել, իսկ Մարթան յերբեմն հարևանների լվացքն եր անում, յերբեմն հաց թխում։ Իսկ յեթե այդ ել չեր լինում, ծախելու համար գուլպա յեր գործում։

Բայց Սիմոնին և Մարթային ամենից շատ տանջում եր այն միտքը, վոր իրենք մինչև այսոր բնակարան չունեն։

Տանտերը դուրս եր անում նրանց սենյակից, ամեն որ կռվում նրանց հետ և նույնիսկ արգելում, վոր Սիմոնի յերեխաները խաղան կամ յերգեն։

Շատ անգամ, յերբ Սիմոնն ու Մարթան տանը չեյին լինում, տանտերը նույնիսկ ծեծում եր նրանց յերեխաներին։

Ահա մի որ Սիմոնը կանգնել եր հրապարակի մի անկյունում ու սպասում, վոր իրեն վարձեն։

Նա լսում է իրեն պես գյուղից յեկած փայտ սղոցողների հետևյալ խոսակցությունը.

—Քաղաքի ծայրին յերկաթուղու ծառայողները մերկ բլրի վրա տներ են շինել ու բնակվել։

Սիմոնն այս լուրը Մարթային հաղորդեց։ Սիմոնը հարց ու փորձով գտավ այդ տեղը և սկսեց իր համար մի խրճիթ շինել։

Ամբողջ ամառը Սիմոնն իր ընտանիքով գիշեր-ցերեկ աշխատեց։ Աշնան դեմ արդեն խրճիթը պատրաստ եր։

Շուտով նրա կողքին Սիմոնի պես չքավորներն ու բանվորները փոքրիկ խրճիթներ կանգնեցրին։

II

Բայց շուտով այս խրճիթների մոտ վոստիկաններ յերևացին և բնակիչներին հայտարարեցին.

—Թույլ չի տրվում այստեղ բնակվել, հավաքեցեք ձեր տները և հեռացեք այստեղից։

Այս հայտարարությունը սարսափեցրեց աղքատության և չքավորության մեջ տապակվող մարդկանց։

Հավաքվեցին Սիմոնի բակում։

Տղամարդիկ գնացել եյին աշխատանքի, իսկ տանը մնային կանայք և յերեխաներն եյին մնացել։

Սոսկալի յեր աղմուկն ու աղաղակը, լացն ու կոծը։ Վոստիկանները կտրուկ հայտարարեցին. «յեթե ինքներդ չեք հեռացնի ձեր խրճիթը—մենք կքանդենք»։



—Կքանդեք, կքանդեք... Ի՞նչ, մեր արյան քրտինքով շինած խրճիթները պետք է քանդեք,—աղաղակում եր Մարթան։

— Եղեցեք մեզ, բաց՝ յերկնքի տակ մի թողեք մեր ընտանիքները, ավելի լավ է կենդանի-կենդանի մեր՝ խրճիթների ավերակների տակ թաղեք մեզ,—աղաչում, խնդրում, պաղատում եյին կանայք գաղաղած վոստիկաններին։

Մայրերի լացին ու պաղատանքին՝ ձայնակցում եյին յերեխաները։

Բայց աշխատավոր ժողովրդի արցունքներն ու աղաչանքը վոչ մի ազդեցություն չունեցան քարասիրտ վոստիկանների վրա։ Նրանք ներս եյին խուժել խրճիթները և կահկարասին դուրս եյին շպրտում։

Կատաղած կանայք սկսեցին փայտերով ու քարերով դիմադրել վոստիկաններին։

Վոստիկանները փրփուրը բերաններին շարունակում եյին ջարդել դռներն ու պատուհանները, վոտներով քանդել վառարանները, կահավորումը և աջ ու ձախ շպրտել։

Շուտով Սիմոնի գեղեցիկ բակն արյունով ներկված պատերազմի դաշտի նմանվեց։ Վիրավորվածների մեջ բավական շատ կանայք և յերեխաներ կային։

Ն. Գոբաշվիլի։

Գյուղացու ի՞նչ գործն է..

I

Ալիկը շատ թույլ յերեխա յեր։

Նրա հայրը շատ շուտ մեռավ և յերեխան մնաց մոր խնամքին։

Մայրը գյուղի չքավորներից եր։

Սովն ու տանջանքն անբաժան եյին նրանց խրճթից։

Մայրն առավոտից մինչև ուշ գիշեր աշխատում եր, իսկ Ալիկը նրան ոգնել չեր կարողանում։

Նա տկար եր։ Յերբեմն միայն հովվություն եր անում։

Շատ հաճախ մորը համբերությունից հանում եր յերեխայի հետևյալ սովորությունը։

Ալիկը շատ էր սիրում յերաժշտություն. սիրում էր նաև մենակություն։ Հաճախ Ալիկն անտառ էր գնում և ագահաբար լսում տերևների անընդհատ խշխշոցը։

Այդ ժամանակ նրա մեծ, կապույտ աչքերը վշտալի, թախիծով լի արտահայտություն էին ընդունում։

Ալիկը յեղեգնից կամ դալար ծղոտից սրինգ էր շինում և զանազան ձայներով տխուր յերգ ածում։

Մի անգամ էլ մի փոքրիկ կտոր տախտակի վրա ձիու պոչի մազ քաշեց և իր համար բավական գեղեցիկ գործիք ստեղծեց։

Ալիկը նստում էր վորևե ծառի տակ և քաղցր-քաղցր ծընգ-ծընգացնում։

II

Ալիկի խրճթից վոչ շատ հեռու կանգնած էր կալվածատիրոջ գեղեցիկ դղյակը։

Յերեխան հաճախ այնտեղից վիոլինի ձայն էր լսում։

Նվագողը կալվածատիրոջ վորդին էր։

Այդ ժամանակ Ալիկը կծկվում էր դղյակի պատի տակ և ագահաբար լսում վիոլինի ձայնը։

Ինչքան էր ուզում, վոր ինքն էլ նվագի վիոլինի վրա, բայց վո՞րտեղից...

Նա վորպես գեղջուկ յերեխա դղյակ մտնելու իրավունք չուներ։ Սա բավական չէր. նրան նույնիսկ արգելում էին, չէին թույլ տալիս խաղալ կալվածատիրոջ յերեխաների հետ։

Ապակե դռնից շատ լավ յերևում էր պատից կախած վիոլինը։

Ալիկն ամեն որ գաղտագողի մոտենում էր այն տեղին, վորտեղից յերևում էր վիոլինը և ագահաբար դիտում։

Ժամերով նայում էր խեղճը, բայց չէր կշտանում։

Բայց ահա, մի որ մի բան տեղի ունեցավ, վորը և Ալիկի մահվան պատճառ դարձավ։

III

Կալվածատերն ընտանիքով քաղաք էր գնացել։ Տանը միայն կառավարիչն (մոուրավ) էր մնացել.

Ամառնային գեղեցիկ, մեղմ, լուսնկա գիշեր էր։

Վիոլինը լողում էր լուսնի ճառագայթների մեջ։

Ալիկը շատ պարզ տեսնում էր վիոլինի բոլոր մասերը։

Վո՞ւ, ինչքան կուզենար նվագել այդ գործիքի վրա...

Յերեխան ներս սողաց սենյակը, վերցրեց վիոլինը...

Նա ամեն ինչ մոռացավ։

—Ի՞նչ ես անում այստեղ, գող,—լսվեց սոսկալի մի ձայն։

Դա կառավարիչն էր. նա բռնեց յերեխային և սկսեց ծեծել։

Հետևյալ որը Ալիկին, վորպես գողի, դատում էին։

Յերեխան թոթովելով բացատրում էր դատարանին, թե ինքը մտել էր սենյակը վիոլինի վրա նվագելու նպատակով։

Ճիշտ է, վոչ մի բան չէր կորել, բայց դատարանը վորոշեց ծեծ տալ յերեխային։

Ալիկին ծեծեցին. նա հիվանդացավ, իսկ այնուհետև շատ յերկար չապրեց։

Յերբ կալվածատերը վերադարձավ ու իմացավ կառավարչի արարքը, շատ գովեց նրան ու ապա կատաղած, թունալից ձայնով ավելացրեց.

—Գյուղացու ի՞նչ գործն է յերաժշտությունը...

Գյուղացիները կռվում են իրենց բնակու դեմ

Շատ սև որեր էր ապրում գյուղացին կալվածատիրոջ ձեռքին։

Նա էլ չէր կարողանում տանել այն լուծը, վոր դրել էր կալվածատերը նրա վզին։

Տանջված գյուղացին էլ չէր դիմանում անչափ ճնշմանն ու ստորացմանը։

Ժամանակ առ ժամանակ գյուղացին վրեժ էր լուծում—սպանում էր կալվածատիրոջը, այրում նրա տունը։

Բայց այս բանը շատ թանգ էր նստում գյուղացուն։

Թագավորն էլ կալվածատիրոջ կողմն էր։ Նրա զորքը սաստիկ պատժում էր ապստամբ գյուղացիներին—սպանում, կոտորում, այրում ամբողջ գյուղեր։

Կալվածատիրոջ մի դիակի դիմաց հարյուրավոր, հազարավոր գյուղացիներ էին կոտորում։

Ահա թե ինչպես էր գնահատում կալվածատերն այն մարդկանց, վորոնք ապրեցնում էին նրան, վորոնց քրանքով ինքը քեֆեր էր անում, զվարճանում, չաղանում։

II. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԿՌԻՎԸ ԹԱԳԱՎՈՐԻ, ՆՐԱ ՉԻՆՈՎՆԻԿՆԵՐԻ. ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՅԵՎ ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻ ԴԵՄ

Բանվորի արդար պահանջին բանտերով էին պատասխանում

Գործարանատերը միայն մի նպատակ ուներ—վորքան կարելի յե, շատ ոգուտ ստանալ, շատ հարստանալ։

Իսկ սրա համար բանվորներին շատ էին աշխատեցնում, փոքր աշխատավարձ տալիս։

Առաջավոր, գիտակից բանվորները չէին յենթարկվում այս պայմաններին և իրենց ընկեր բանվորներին ապստամբեցնում էին գործարանատիրոջ դեմ։

Ահա թե ինչ էին ասում գիտակից բանվորներն իրենց ընկերներին.

—Յեկեք, բոլորս միասին դադարեցնենք մեր աշխատանքը։ Գործարանատերը մենակ չի կարող աշխատել. նա ապրելու միջոցից կզրկվի, կսիջի, աշխատավարձը կավելացնի, աշխատանքի որը կկարճացնի։

Բանվորներն ըմբռնում, հասկանում էին այս մտքի կարևորությունը, դադարեցնում էին աշխատանքը—գործադուլ հայտարարում։

Գործարանատերը սպասում էր մի քանի որ. նա գիտեր, վոր բանվորները զուրկ են ապրելու միջոցներից և ստիպված պետք է դիջեն ու իրենից աշխատանք խնդրեն։

Ճիշտ է, կարիքը նրանց շատ էր նեղում, բայց նրանք միմյանց ոգնում էին, մի կտոր հացն իրար մեջ բաժանում։

Ամենքը մի մարդու պես համարձակ պայքարում էին ձրիակեր գործարանատիրոջ դեմ։

Յերբ գործարանատիրոջ հույսերը չէին արդարանում — բանվորներն աշխատանքի չէին վերադառնում, նա դիմում էր վոստիկանությանը։

Թագավորի ծառաները—վոստիկանները ձերբակալում և բանտ էին նետում առաջավոր, գիտակից բանվորներին։

Այսպես էին Թագավորի ծառաներն ամրապնդում գործարանատիրոջ ժեջը։

Բանվորների կյանքը բարելավող առաջին մարտիկները յեվ մեծ հեղափոխականների ընտանիքը

Թագավորի ժամանակ Լենինգրադ քաղաքը Պետերբուրգ եր կոչվում։

Այստեղ եր ապրում Թագավորը։

Ալեքսանդր Ուլյանով

Ալեքսանդր II Թագավորի ժամանակ հետևյալ դեպքը տեղի ունեցավ։

Թագավորն ամենախոշոր կալվածատերն եր։ Նա ամեն կերպ աջակցում եր կալվածատերերին՝ գյուղացիներին թալանելու գործում։

Թագավորն ոգնում եր նաև գործարանատերերին, վորպեսզի սրանք ավելի շատ շահագործեն բանվորներին։

Բայց այդ ժամանակ յերևան յեկան այնպիսի մարդիկ, վորոնք վճռեցին ոգնել բանվորներին և գյուղացիներին։

Նրանք վորոշեցին սպանել Թագավորին։

Նրանք կարծում եյին, վոր Թագավորին սպանելով աշխատավոր ժողովրդի վիճակը կլավանա։

Ցավ ահա մի որ, յերբ Թագավորը կառքով անցնում եր, նրանք ռումբ նետեցին նրա վրա և սպանեցին։

Վոստիկանությունը վոտի յելավ։

Սպանողներին բռնեցին և կախեցին։

Այս անձնազոհ մարտիկներն եյին՝ Անդրեյ Իվանովիչ Ժելյաբովը և Սոֆիա Լվովնա Պերովսկայան։

Կալվածատերերը, գործարանատերերը և Թագավորի չինովնիկները սպանված Թագավորի փոխարեն դահ բարձրացրին Ալեքսանդր III-ին։

Անցավ վեց տարի։

Ցերիտասարդ ուսանող Ալեքսանդր Իլիչ Ուլյանովը վճռեց սպանել նոր Թագավորին—Ալեքսանդր III-ին։ Բայց նրան չհաջողվեց իրականացնել իր վորոշումը։

Նրան ձերբակալեցին և մահվան դատապարտեցին։

Այն ժամանակ Ալեքսանդր Ուլյանովի մայրը, քույրերն ու կրտսեր յեղբայր Վալոդիան Սիմբիրսկումն եյին։ Վալոդիան գիմնազիայում եր սովորում։

Ալեքսանդրի ձերբակալության լուրը շուտով հասավ նաև նրա մորը։ Նա շտապ կերպով Պետերբուրգ ուղևորվեց։ Մայրն ուզում եր ներում խնդրել եր վորդու համար, բայց բան դուրս չեկավ։

Ալեքսանդրի մահվան դատավճիռն իրագործեցին։

Լենինի մանկությունը

Վլադիմիր Իլիչ Լենինի հազվագյուտ ընդունակություններն աչքի եյին ընկնում հենց մանկությունից։

Վալոդիան հինգ տարեկան հասակում արդեն գրել-կարդալ գիտեր։ Մայրն եր սովորեցրել նրան գրել-կարդալ։

Այնուհետև նա յերբեք գրքից չեր բաժանվում։

Մեծ հետաքրքրությամբ կարդում եր մանկական թերթեր և գրքեր։

Այդպիսի գրքեր բավական շատ ուներ Վալոդիայի հայրը։

Վալոդիան 9 տարեկան եր, յերբ նրան առաջին դասարան ընդունեցին։

Նա շատ քիչ ժամանակ եր նվիրում դասերին, վորովհետև դասարանում մեծ հետաքրքրությամբ լսում եր ուսուցչի պատմածները։

Վալոդիան բավական ազատ ժամանակ ուներ և այդ ժամերը նա նվիրում եր ընթերցանության։

Վալոդիան թռչուններ շատ եր սիրում. նա շատ եր խղճում վանդակում փակած թռչուններին։ Շատ անգամ թռչուններ եր գնում և բաց թողնում, վոր ազատ ապրեն։

Աշխատասեր եր Լենինը հենց փոքր հասակից։

Դռան առաջ այգի ունեյին։ Վալոդիան մեծ վոգևորությամբ աշխատում եր այդ այգում—բահում եր, ցանում, քաղհան անում, ջրում։

Նա մեծ ուշադրություն եր դարձնում նաև ընկերներին—ոգնում եր ուսման մեջ յետ մնացողներին, բացատրում, յեթե նրանք մի բան չեյին հասկանում և այլն։

Այս բոլորը նա անում եր մեծ յեռանդով ու սիրով։

Աշխատանքի այն սերը, վոր ուներ Վալոդիան փոքր հասակում, պահպանեց ամբողջ կյանքում։

Վլադիմիր Իլիչն ու նրա ընկերները Պետերբուրգում (այժմ Լենինգրադ)

Յերբ Ալեքսանդր Ուլյանովին մահվան դատապարտեցին, նրա յեղբայր Վալոդիա Ուլյանովը վերջացնում եր գիմնազիան։

Այդ ժամանակ նա 17 տարեկան եր։

Վալոդիան լսել եր յեղբոր մահվան մասին, նա տեսնում եր մոր անտանելի վիշտը և այս բոլորը շատ եր ազդում նրա վրա։

Գիմնազիան ավարտելուց հետո Վլադիմիր Իլիչը մտնում է համալսարան. բայց նրան հեղափոխական աշխատանքների համար մի քանի անգամ արձակում են համալսարանից։

Համալսարանական քննությունները տալուց հետո Վլադիմիր Իլիչը գնում է Պետերբուրգ աշխատելու։

Այստեղ նա ծանոթանում է նոր ընկերների հետ։ Սրանք շատ եյին պիրում Իլիչին։

Այն ժամանակ նա 23 տարեկան եր։

Ընկերները նրան կատակով «ծերունի» եյին անվանում, վորովհետև նա թե ամենից շատ բան գիտեր և թե շատ իլ խելացի յեր։

Վլադիմիր Իլիչն ու նրա ընկերները վճռեցին պայքար սկսել թագավորի դեմ։

Այս պատճառով նրանք գաղտնի «Բանվորների ազատագրման պայքարի միություն» հիմնեցին։

Գաղտնի խմբակներ

Բանվորները ծարավ եյին ուսման ու գիտության, բայց նրանց ցանկությունը լոկ ցանկություն եր մնում։

Թագավորը բանվորներին ուսման ու կրթության արժանի չեր համարում։ Բայց կային մարդիկ, վորոնք բանվորների համար աշխատում եյին անդադար։

Համառ պայքարողները՝ Լենինը, Ստալինը, Մախարաձեն և շատ ուրիշներն անձնազոհ կերպով մարտնչում եյին աշխատավորության ազատագրման համար։

Հեղափոխականները հիմնել եյին մի շարք խմբակներ։

Խմբերը կազմված եյին բանվորներից։

Այս խմբերը գաղտնի եյին հավաքվում։

Այստեղ հեղափոխականները բանվորների համար կարդում եյին արգելված գրքեր, սովորեցնում եյին, զրույցներ եյին կազմակերպում այն անարդարության շուրջը, վորը ծանր լծի պես ճնշում եր բանվորներին։

Լենին

Ստալին



Փ. Մախարաձե

Սրա հետ միասին ցույց եյին տալիս այն ճանապարհը, որով պետք է ազատություն ձեռք բերի աշխատավոր մարդկությունը։

Ահա թե ինչպես եյին աշխատում խմբերի ղեկավարները, ինչպես եյին պատրաստում բանվոր-հեղափոխականներին։

Վլադիմիր Իլիչը բանվորական խմբակներում

Վլադիմիր Իլիչն ու նրա ընկերները շարունակ լինում եյին բանվորական խմբակներում ու սովորեցնում նրանց, թե ինչպես պետք է պայքարեն իրենց դրությունը բարելավելու համար։

Այսպիսի ժողովները գաղտնի եյին գումարվում։ Բանվորները սիրում եյին Լենինին, սիրում եյին նրա վճռական ու հաստատուն խոսքը։

Ահա ցածլիկ, մրի մեջ կորած սենյակում հավաքվել են բանվորները։

Լռություն է տիրում։

Փոքրիկ ճրագի աղոտ լույսը հազիվ է լուսավորում սենյակը։ Բանվորներն սպասում են իրենց ղեկավարին։

Հանկարծ դուռը բացվեց և յերևաց ամուր կազմվածքով փոքրահասակ մի մարդ։

Սա Լենինն եր։

— Ընկեր բանվորներ,— սկսեց Լենինը հաստատ շեշտով,— հարուստներն ու նրանց սպասավորներն անտանելի կերպով տանջում, չարչարում են ձեզ։ Թագավորի վոստիկանները պաշտպանում են հարուստներին, իսկ ձեզ փտեցնում բանտերում։

Նրանք աշխատում են ձեզ բաժան-բաժան անել։

Աշխատավորության ազատագրումը կուռ միության մեջ է։

Ուրեմն միացեք ու միացյալ ուժով ուժեղ հարձակում գործեք թշնամիների վրա՝ մարդու պես ապրելու, մարդկային իրավունքներ ձեռք բերելու համար։

Այսպես եր Լենինն արթնացնում ու նախապատրաստում բանվորներին՝ ապագա պայքարի, ապագա կռվի համար։

Գաղտնի տպարան

Միապետության ժամանակ հեղափոխական գրքերի տպագրությունը խստիվ արգելված եր։

Այդ պատճառով հեղափոխականներն իրենք եյին գաղտնի կերպով այդպիսի գրքեր տպում։

Հեղափոխական գրքերը տպագրում եյին գաղտնի տպարանում։

Այսպիսի մի տպարան գոյություն ուներ նաև Թիֆլիսում։

Ահա այդ տպարանի պատկերը։

Տպարանը բաղկացած եր յերկու սենյակից, որտեղ ապրում եր ամբողջ մի ընտանիք՝ ամուսիններ և աղախին։

Բայց իսկապես սա մի ընտանիք չեր։ Այս տղամարդն ու յերկու կինը հեղափոխական ընկերներ եյին։ Հյուրասենյակում նրանք պատից կախել եյին Թագավորի պատկերը։ Սա նրա համար եր, որ դռնապանը կասկածի չենթարկեր նրանց աշխատանքը։



Չե՞ որ դռնապանը զանազան գործերով մտնում եր նրանց մոտ։ Այն ժամանակվա դռնապանները Թագավորի լրտեսներ եյին։ Տպագրական տառերն (շրիֆտ) այստեղ բերին տան կահ-կարասիքի հետ միասին։ Ընտանիքի անդամները, ճիշտ է, տարբեր ազգանուններ ունեյին, բայց տնային գրքի մեջ մի ազգանունով եյին գրված։ Սրանց հետ, գաղտնի կերպով, ապրում եր նաև գրաշարը։

Նրա իսկական ազգանունը վոչոք, նույնիսկ ընկերները չգիտեյին։ Յեվ որովհետև նա սուր ձայն ուներ, ընկերները նրան «ծվան» եյին անվանում։

«Ծվանը» վորպեսզի աննկատելի մնա, համարյա յերբեք տանից դուրս չեր գալիս, սովորաբար, հեղափոխականները գիշերով եյին աշխատում։

Պատուհանները ծածկում եյին սև ժամլաթով (կլեոնկա), վորպեսզի լույսը չնկատվի։

Այստեղ եյին տպագրվում շատ ու շատ հեղափոխական գրքեր, լրագրեր, թռուցիկներ։

Բայց շուտով վոստիկանությունը հոտն առավ, որ Թիֆլիսում գաղտնի տպարան կա։

Սկսեց վորոնել։

Վոստիկանությունը գտավ տպարանի հետքերը։

Ու մի գիշեր թակեց տպարանի դռները։

Դուռը ծեծում էին անտանելի կերպով. ընկերների պայմանական ծեծին չեր նմանում։

Հեղափոխականները հասկացան, որ թակողը վոստիկանությունն է և դուռը բաց անելու փոխարեն՝ սկսեցին ներսից կրակել։

Վոստիկանությունն անցավ բակի կողմը և այնտեղից հաջողեցրեց սենյակը մտնել։



Նրանք ձերբակալեցին հեղափոխականներին։
Ձերբակալվածների մեջ «ծվանը» չկար։
Նա անձնասպանություն եր գործել կռվի ժամանակ։
Նա վճռել եր յերբեք կենդանի չընկնել թշնամու ձեռքը։
Նա քսանյերեք տարեկան եր։
Նա զոհվեց հեղափոխության համար։

Առաջադրություն. Գաղտնի տպարանի տպագրական մեքենան տեսնելու համար եքսկուրսիա կազմակերպեք դեպի հեղափոխական թանգարան (մուզեյ)։

Գործադուլներ

Գործարանատիրոջ անհոգ կյանքը շատ մեծ գումարներ եր պահանջում։ Այդ պատճառով նա ամեն կերպ աշխատում եր շատ աշխատեցնել բանվորներին, բայց չնչին աշխատավարձ տալ։

Բանվորի ստացած աշխատավարձը նույնիսկ չոր հացի չեր բավականանում։

Չնայած հայր ու մայր առավոտից մինչև ուշ գիշեր աշխատում էին, բայց և այնպես նրանց զավակները շարունակ քաղցած, շարունակ մերկ էին մնում։

Իսկ գործարանատերը դիզում եր, հա դիզում բանվորների արյան ու քրտնքի արդյունքը։ Նրա ընտանիքը վոչ մերկ եր և վոչ էլ քաղցած։ Ամեն ինչ պատրաստ եր գործարանատիրոջ ընտանիքի համար. նա, ինչպես ասում են, լողում եր յեղ ու մեղրի մեջ։

Բնական է, նման անհավասարությունն ստիպում եր բանվորին յելքի մասին մտածել։ Սրա հետ միասին լցվում եր բանվորի համբերության բաժակը։ Հաճախ բանվորները գաղտնի կերպով հավաքվում էին ու մտածում իրենց անտանելի կացության մասին, խորհուրդ անում, թե ինչպես պետք է ազատվեն ստրկական այդ վիճակից։ Յեվ բանվորները դիմում էին գործադուլի,—այսինքն աշխատանքը դադարեցնում էին։

Գործադուլի ժամանակ, ճիշտ է, գործարանատիրոջ յեկամուտը պակասում եր, բայց նա այնքան հարստություն ուներ, որ նրա ընտանի-



քին, քանի կենդանի յեր, լի ու լի կբավականանար ու մի բան էլ կավելանար։

Իսկ նման գործադուլները բանվորներին սոսկալի կարիքի մեջ էին գցում։ Ինչու. վորովհետև բանվորները գործադուլի ժամանակ վոչ մի կոպեկ չեյին ստանում։

Յեվ քաղցած բանվորն ստիպված եր լինում համաձայնել աշխատանքի այն ծանր պայմաններին, վոր գործարանատերը նրան առաջադրում եր։

Ասենք, մենակ գործարանատերը բանվորներին այդչափ չեր կարող խեղդել, յեթե նրան ոգնություն չհասներ թագավորն իր զորքով ու վոստիկաններով։

Գործադուլ անող բանվորներին ձերբակալում եյին, բանտարկում, սպանում, աքսորում, գործարանից դուրս անում—աշխատանքից զրկում։

Բայց պայքարող բանվորներին վոչինչ չեր վախեցնում։ Նրանց նպատակն եր—պայքարել ու չնահանջել, մինչև բանվոր դասակարգը վերջնականապես չաղ-տագրվի։

Բանտերը

Շատ ու շատ բանտեր ուներ միապետը։ Իսկ այս բանտերը լի եյին հեղափոխական մարտիկներով։

Ամեն մի հեղափոխականի առանձին, շատ փոքր, նեղ, խոնավ բանտային խուցի մեջ եյին փակում։ Այստեղ այնքան խոնավ եր, վոր աղը հալվում, ջրի յեր փոխվում։ Արևի ճառագայթները յերբեք չեյին հասնում այդ խուցերին, մշտական խավարն եր թագավորում այնտեղ։

Խոնավությունից և մթությունից բանտարկյալները հիվանդանում եյին ու մեռնում։

Չնայած այն խիստ պայմաններին, վորոնց մեջ պահում եյին բանտարկված հեղափոխականներին—սրանք ելի հաջողեցնում եյին իրար հետ խոսել, բայց վոչ թե լեզվով, բերանով, այլ պատը ծեծելով։

Որինակ. ասենք հարևան բանտարկյալն ուզում եր հայտնել ընկերներին, վոր ինքը հիվանդ է։ Նա ոգտվում եր, այն տախտակից, վորի գաղտնիքն իր ընկերները գիտեյին։ Վերցնում եր սովորական այբուբենը։ Այբուբենը հետևյալ կարգով եր դասավորված.

ա	բ	գ	դ	ե	զ
ը	թ	ժ	ի	լ	խ
ծ	կ	հ	ձ	ղ	ճ
մ	յ	ն	շ	ո	չ
պ	ջ	ռ	վ	տ	ր
ց	փ	ք	ֆ		

Պատը ծեծելով նախ հաղորդում եր, թե վոր շարքի մեջ է գտնվում տառը, իսկ հետո, թե վորյերորդ տառն է այդ։

«Հիվանդ եմ» բառի համար նախ թակում եր պատը յերեք անգամ. սա նշանակում եր, թե տառը գտնվում է յերրորդ շարքում. հետո դարձյալ յերեք անգամ, ընկերը հասկանում եր, վոր այդ տառը յերրորդ սյունակի յերրորդ տառն է, այսինքն հ։

Մի փոքր դադարից հետո նախ թակում եր յերկու անգամ և ապա նորից չորս անգամ։ Ընկերը գտնում եր ի տառը։ Հինգ հարված և ապա չորս—վ, մեկ հարված և ելի մեկ—ա, չորս հարված և յերեք—ն, մեկ հարված և չորս—դ, մեկ հարված և հինգ—ե, չորս հարված և մեկ—մ։

Այսպիսով կազմվում եր «հիվանդ եմ» խոսքը։

Այս ձևով բանտարկյալները շատ բան եյին հաղորդում իրար։

Առաջադրություն. —1. Ինչպես եր պայքարում աշխատավորությունը թագավորի դեմ։

2. Եքսկուրսիա կազմակերպեք դեպի հեղափոխական թանգարանը և գտնեք այն գործիքները, վորոնցով թագավորի ծառաները տանջում եյին հեղափոխական բանտարկյալներին։

Զիկորը

Գաղտնի տպարանը գտնվում եր քաղաքի հետընկած թաղամասերից մեկում։ Տպարանի բակը մտնելու համար պետք է փողոցից անցնեյիք մի տախտակե դռնակով։

Բակը յերբեք չեր ավելվում։

Բակում դուք կնկատեյիք մի տախտակե կաուրով ցածր տուն։ Դա խոհանոցն եր։ Ինչպես առհասարակ բոլոր խոհանոցներում, այստեղ ել եր «պլիտա» շինված կերակուրներ յեփելու համար։

Խոհանոցի տակ մի նեղ ու խոնավ նկուղ եր փորված։ Այս նկուղումն եր գտնվում գաղտնի տպարանը։ Տպարան մտնել կարելի յեր միմիայն վառարանի միջոցով։ Դրա համար պետք եր բարձրացնել կաթսա դնելու կլոր չուգունը և ներս սողալ դեպի տպարան։ Ոդ ստանալու համար մի անցք (խողովակ) եր փորված, վորը տանում եր դեպի բակի ջրհորը։ Այդ նույն խողովակն եր մասամբ լույս տալիս նեղ ու մութ նկուղին։ Ցածր սեղանի վրա դրված եր տպագրական փոքրիկ մեքենան—«Ամերիկանկա», իսկ սրա կողքին տառերի արկղը և մի աթոռ։

Տպարանի աշխատանքներն ավելի ուժեղացան, յերբ այդտեղ աշխատելու յեկավ տասնևհինգ տարեկան Զիկորը։

Ո՞վ եր նա, կամ վորտեղից եր յեկել, վոչոք չգիտեր։ Վոչ ել նրա իսկական անունն եր հայտնի։ «Զիկորը» նրա կեղծ անունն եր, և այդպես ել հենց կանչում եյին նրան։ Այդտեղից եր բերում Զիկորն արգելված թերթերը։ Յեվ վորպեսզի վոչվոք չնկատի, նա թերթերը դարսում եր զամբյուղի մեջ, իսկ թերթերի վրա ձվեր եր շարում։

Բայց շուտով Զիկորը թերթեր տեղափոխելու այդ ձևից հրաժարվեց։

Տան կտրանը նա աղավնիների բուն շինեց։

Աղաղնիներ բազմացրեց և վարժեցրեց։

Աղավնիներն այնպես եյին սովորել Զիկորին, վոր նրան նկատելուն պես, թևերը թափ եյին տալիս ու նրա հետևից ընկնում։

Զիկորը գրպանից կուտ եր հանում ու տալիս աղաղնիներին։

Զիկորն աղաղնիներին շատ եր սիրում։

Յեվ ինչո՞ւ չսիրեր իր բարեկամներին։

Ահա այս աղավնիների միջոցով եր Զիկորն արգելված թերթեր տեղափոխում և տարածում։

Զիկորը մի զամբյուղ եր շինել, վորը յերկու հատակ ուներ—իրարից մեկ թիզ հեռավորությամբ։

Առաջին հատակի վրա նա տեղավորում եր թռուցիկները, իսկ յերկրորդ հատակի վրա՝ աղավնիներ։ Զամբյուղը ծածկվում եր առանձին ցանցով. նայողը—աղավնիներից բացի վոչինչ չեր տեսնի։

Զիկորը շալակում եր զամբյուղը և աղաղնի ծախողի պես կանչում.

— Աղունիկ, լավ աղունիկ, ով է ուզում լավ աղունիկ...

Հպարտ ու համարձակ նա անցնում եր «դարաղավոյի» առջևից և շրջունակում եր բաձրաձայն կանչել.

— Աղունիկ, աղունիկ, այ լավ աղունիկ...

Այսպիսով Զիկորը տեղ եր հասցնում թռուցիկները, իսկ աղաղնիներին նորից տուն բերում։

ԿԻՆՈ ՆԿԱՐ «Լ ռ ո ւ թ յ ո ւ ն»

Յերեկոյան ժամի վեցն է։ Կինո-դահլիճը լողում է լույսի մեջ։ Յերեխաները կինո յեն շտապում։ Սրանց հետ են նաև իրենց ղեկավարները։ Այսոր նոր կինո նկար է գնում, դեռ վոչվոք չի տեսել։

Յերեխաները լսել են, վոր այսորվա կինոն շատ հետաքրքիր է ու հիանալի։

Քանի՜, քանի աչքեր են կարդում այսորվա աֆիշը։

Խոշոր տառերով գրված է—կինո «Լ ռ ո ւ թ յ ո ւ ն»։

Դահլիճը լցվում է յերեխաներով։ Անհամբեր սպասում են սկսվելուն։

Հանկարծ դահլիճը մթնում է. լռություն է տիրում. սկսվեց։

ՆԿԱՐ I. **Վոստիկանները հետևում են**

Յերեխաները դիտում են հեղափոխականների գաղտնի աշխատանքը։

Թենգիզը մեկ գաղտնի ժողովներում է աշխատում, մեկ՝ գաղտնի տպարանում։

Նա արգելված գրքեր և թռուցիկներ է տպում։

Վոստիկանները հետևում են Թենգիզին, բայց չեն կարողանում գտնել նրա հետքերը։

ՆԿԱՐ II. **Զերբակալեցին**

Կինոն ցույց է տալիս մի փոքրիկ տուն։ Տան բակում բազմաթիվ ծառեր կան։ Յերեկո յե։

Թենգիզը նստել է ծառերից մեկի տակ։ Կողքին կանգնել է իր կինը։ Տասներկու տարեկան մի աղջիկ հենվել է հոր ծնկանը և նրա հետ զրույց է անում։ Աղջիկը մեծ հետաքրքրությամբ լսում է հոր ասածները։

Հայրը պատմում է, թե ինչ ծանր վիճակ են ապրում բանվորներն ու գյուղացիները, թե ինչպես է տանջում-չարչարում նրանց իշխող դասակարգը, ինչպես է այդ դասակարգն անգութ կերպով աշխատեցնում-շահագործում բանվորներին իր ոգտի համար։

Վոստիկանները շրջապատում են տունը։

Վոստիկաններից յերկուսը կապկպում են Թենգիզի ձեռները ու բանտ տանում նրան։ Կինը կանգնել է քարացած։

Փոքրիկ Թինան հետևում է հորը։ Նա ուզում է փաթաթվել հորը։ Վոստիկաններից մեկը կոպիտ կերպով հրում է նրան։ Ցերեխան վայր է ընկ-



նում, բայց իսկույն վեր է ցատկում։ Նա ուզում է հասնել հորը։ Վոստիկանները փակում են բակի դուռը և հեռանում։

ՆԿԱՐ III. | Փ ա խ ա վ |

Մթնում է։ Վոստիկանները տանում են Թենգիզին։ Ցերբեմն նրանք հրացանի կոթով հարվածում են նրան։ Թենգիզը լուռ է, ձայն չի հանում, բայց քայլում է համարձակ։



Մոտենում են անտառին։ Ճանապարհն անցնում է անտառի մոտով։ Արդեն գիշեր է։ Ահա հարմար անկյուններից մեկը։ Թենգիզը վճռում է ոգտվել այդ անկյունից։ Նա փախչում է։ Կրակում են հրացանից։ Թենգիզը վազում է ինչքան ույժ ունի։ Փամփերը նրան վիրավորում են. նա կորչում է արյան մեջ, բայց ավելի և ավելի մեծ թափով է վազում։

Նա գետի ափին է։ Գետը վազում է կատաղի ալիքներով։

Թենգիզը գետն է նետվում։ Հոգնել է, դադրել. դժվարությամբ է պայքարում ալիքների դեմ։

Թենգիզն անցնում է գետի մյուս ափը։

Նա յերկար, շատ է յերկար է վազում։ Ահա մի այր։ Թենգիզը նետվում է այրը։ Ընկնում է. հազիվ է շնչում։

ՆԿԱՐ IV. | Թինիկոն գնում է վորոնելու հորը. նա իմացել է, թե վորտեղ է թագնված հայրը |

Մայրը ուտելիք է դարսում զամբյուղի մեջ։ Թինիկոն վերցնում է զամբյուղը։ Նա վազելով անցնում է դաշտը։ Քրտինքը ջրի պես է հոսում նրա վրայից։ Նա անտառումն է։ Մի նապաստակ վազում է նրա մոտով։ Ցերեխան վախենում է և կանգ առնում։

Հանկարծ նկատում է ինչվոր ստվերներ։ Վոստիկաններ են. Թինիկոյի հորն են վորոնում։

Նրանք նկատում են յերեխային և գազանների պես հարձակվում նրա վրա։

Վայրենի վոստիկաններից մեկն ասիպում է յերեխային, վոր ասի, թե վորտեղ է թաղված հայրը։ Ծեծում է անգութ կերպով, սպառնում ատրճանակով։ Բայց յերեխան միայն լռությամբ է պատասխանում։

Վայրենի վոստիկանը կրակում է ոդի մեջ։
Ցերեխան լուռ է։ Նա դարձյալ լռությամբ է պատասխանում։
Ձերբակալում են աղջկան. բանտ են տանում։

ՆԿԱՐ V. Ձկարողացան խոստովանեցնել

Ցերեխան կանգնել է քննիչի առաջ։ Նրան փայփայում են, շոյում, գուրգուրում, զանազան քաղրավենիներով հյուրասիրում։ Գուցե յերեխան ասի, թե վորտեղ է թաղված իր հայրը։

Բայց յերեխան դարձյալ լռությամբ է պատասխանում։

Ծեծում են յերեխային։ Սպառնում են սպանել։ Հազար ու մի տանջանքով վախեցնում են նրան։

Բայց հերոս յերեխայի պատասխանն այս անգամ ել լռությունն է լինում։

Ցերեխան բանտումն է, քաղցած ու ծարավ։ Սենյակը խոնավ է, մութ։ Լուսաբաց է։

Սենյակի վերևում յերեխան անցք է նկատում։

Բանտի պատը տեղ-տեղ ճեղքեր է տվել։ Ցերեխան բարձրանում է այդ ճեղքերով։ Հասնում է։

Աղջիկը վազում է։ Հանկարծ նա նկատում է իրենց հարևանին, վորը սայլով խոտ է տանում։ Հարևանը նրան թաղցնում է խոտի մեջ։

Վոստիկանները կանգնեցնում են սայլապանին։ Նրանք հարցնում են աղջկա մասին։ Սայլապանը բացասական պատասխանով ճանապարհ է գցում նրանց։



Թինիկոն իրենց տան բակումն է։ Արագ-արագ տուն է վազում։ Նա ընկնում է մոր գիրկը և բարձր ձայնով կանչում.

— Մայրիկ, յես վոչինչ չեմ ասել։ Իմ պատասխանը միայն լռությունն է յեղել։

Մայր ու աղջիկ գրկախառնվում են։

Կինոն վերջացավ։

Յերեխաների վոգևորությանը սահման չկա։ Ամենքը հերոս աղջկա մասին են խոսում։

Վլադիմիր Իլիչը Սիբիրում յեվ արտասահմանում

Թագավորի լրտեսներն ամեն րոպե հետևում եյին Իլիչին։

Նրանք ուզում եյին իմանալ, թե ուր ե գնում Իլիչը, ինչ ե անում, ում հետ ե տեսնվում։

Վերջը նրանց հաջողվեց յերևան հանել ամեն ինչ և ձերբակալել Իլիչին։

Իլիչի հետ ձերբակալեցին նաև նրա ընկերներից շատերին։

Անցավ մի տարուց ավելի, բայց Իլիչն ու նրա ընկերները դեռ բանտերումն եյին։

Մի տարուց հետո հրաման յեկավ՝ չորս տարով Սիբիր աքսորել Լենինին։

Իլիչին շատ հեռու տեղ աքսորեցին։ Այնտեղ, վորտեղ միայն դատարկություն ե տիրում, շատ քիչ մարդ ե ապրում։

Լենինին բոլորովին չեզոքացրին։ Նա հեռու յեր բանվորներից։

Այս մենակության մեջ նրա միակ բարեկամը գրքերն եյին։ Նա անդադար կարդում եր։

Նա գիտեր, վոր ավելի մեծ գիտություն և հարկավոր թշնամիներին տապալելու համար։

Չորս տարին անցավ։

Անցավ և պատժի ժամկետը։

Վլադիմիր Իլիչը վերադարձավ Պետերբուրգ, բայց վոստիկանությունը նրան Պետերբուրգում ապրելու իրավունք չտվեց։

Նա ստիպված եր թողնել Պետերբուրգը. նա ապրում եր Պետերբուրգից վոչ շատ հեռու։

Այդ ժամանակ Պետերբուրգում յեռում եր բանվորական խմբակների աշխատանքը։

Նման խմբակներ գոյություն ունեյին նաև Մոսկվայում, Կիևում և այլ տեղերում։

Բաթումում, Թիֆլիսում և Բագվում բանվորները համախմբվել եյին մի կուսակցության մեջ։ Սրանց ղեկավարը Ստալինն եր։

Բացի խմբակներից պետք եր նաև լրագիր ունենալ. Լրագրի միջոցով բանվորները պետք և ծանոթանային իրականության հետ, պետք և տեղյակ լինեյին, թե ինչ և կատարվում իրենց շուրջը։

Իսկ ցարական Ռուսաստանում հնարավոր չեր այդպիսի մի թերթ հրատարակել։

Վլադիմիր Իլիչը վճռեց անցնել արտասահման և այնտեղ թերթ հրատարակել։

Այնտեղ նա հրատարակում եր «Իսկրա» (Կայծ) թերթը։ Նրա ընկերները գաղտնի կերպով տարածում եյին այդ թերթը Ռուսաստանում։

Բանվորները կարդում եյին «Իսկրան» և տեղեկանում, թե ինչ ե կատարվում իրենց շուրջը։

Բանվորական խմբակների ղեկավարները գինում եյին նայել գյուղացիներին կալվածատերերի դեմ

Հեղափոխականները միայն բանվորական խմբակների մեջ չեյին աշխատում։ Նրանք պատրաստում եյին նաև աշխատավոր գյուղացիներին ապագա կռվի համար։

Նրանք գնում եյին գյուղերը և ճնշված գյուղացիների աչքերը բանում, հասկացնում, թե ինչ անարդարություններ են տեղի ունենում այս աշխարհում։

Իսկ նման աշխատանքը մեծ զգուշություն եր պահանջում։

Վորպեսզի թշնամին չկասկածեր հեղափոխականներին, սրանք սովորում եյին զանազան արհեստներ—հյուսնություն, վորմնադրություն, կոշկակարություն և այլն։

Գյուղում նրանք թե արհեստով եյին զբաղվում և թե հեղափոխական աշխատանք կատարում։

Տգիտության ու խավարի մեջ թաղված ժողովրդին նրանք արգելված գրքեր եյին կարդում։ Այս գրքերը սովորեցնում եյին աշխատավոր գյուղացիներին, թե ֆաբրիկա-գործարանները չպետք և գործարանատերերի սեփականությունը լինեն, թե հողը չպետք և կալվածատերերին պատկանի, թե աշխատավորության ճակատագիրը վոչ թե թագավորը պետք և վորոշի, այլ ինքն աշխատավորությունը։

Շատ դժվար եր հեղափոխականների աշխատանքը։

Նրանց բազմաթիվ լրտեսներ եյին հետևում։

Լրտեսություն եյին անում թագավորի ծառա չինովնիկները, հարուստներն ու քահանաները։

Յոսիֆ Վիսարիոնովիչ Ստալին

(Սոսո Ջուղաշվիլի)

Ստալինը կոմունիստական կուսակցության ղեկավարն է։

Նա այժմ 52 տարեկան է։

Նրա հայրը բանվոր էր։

Ստալինը սովորում էր նախ Գորիում, իսկ այդ տեղից տեղափոխվում է Թիֆլիս, վորտեղ և վերջացնում է իր ուսումը։

Ստալինն իր ամբողջ կյանքն անց է կացրել կռվի ու պայքարի մեջ։ Նա կռվում էր բանվոր դասակարգի թշնամիների՝ թագավորի, գործարանատերերի և կալվածատերերի դեմ։

Բայց ցարական իշխանությունը խիստ կերպով հալածում էր աշխատավորության բարեկամներին։

Շատ անգամ ձերբակալեցին Ստալինին։ Բանտն ու աքսորը սովորական յերևույթ էր Ստալինի համար։

Բայց և վոչ մի պատիժ չսարսափեցրեց Ստալինին։ Նա չնահանջեց։ Ստալինը հաստատ կերպով վճռել էր և նպատակ դրել ոգնել աշխատավորության դատին, կռվին, նրա հաջողություններին։

Նա ստեղծում էր բանվորական խմբակներ, միացնում, գիտակցության և ինքնաճանաչության բերում բանվորներին։

Անձնազոհ հեղափոխականների աշխատանքն ու աշխատավորության կռիվը թշնամիների դեմ—ստեղծեց հոկտեմբերյան հեղափոխությունը։

Ստալինը համաշխարհային պրոլետարիատի ղեկավարն է։

Կապիտալիստական յերկրների աշխատավորությունը դեռ ևս ճնշողների ու շահագործողների ճիրաններում է գտնվում։

Ստալինը ցույց է տալիս նրանց դեպի սոցիալիզմ տանող ճանապարհը։

Ֆիլիպ Մախարաձե

Ֆիլիպ Մախարաձեն հեղափոխական հին մարտիկ և աշխատավորության հավատարիմ բարեկամն է։

Նա ծնվել է Գուրիայի Կարխ-Ղուրի գյուղում 64 տարի առաջ։

Չքավորությունն ու կարիքը բուն եյին դրել նրանց ընտանիքում։ Փոքրիկ Ֆիլիպը շատ էր ոգնում ընտանիքին՝ յերբեմն արտում, յերբեմն անտառ էր գնում վայտ բերելու և առհասարակ շատ ու շատ աշխատանքներ կատարում տանը։

Նա նույնիսկ դասերը պատրաստելու ժամանակ չէր գտնում։ Նա գրել կարդալը տանը սովորեց, իսկ 8 տարեկան հասակում մտավ Ոգուրգեթի

դպրոցը։ Շնորհիվ իր աշխատասիրության, Ֆիլիպպը դպրոցում ամենալավ աշակերտն էր համարվում։

Հաճախ չքավորության պատճառով ստիպված էր լինում վոտով 5—6 կիլոմետր տարածություն անցնել դպրոց գնալու համար։ Բայց ուսման ծարավ յերեխային այս դրությունը չէր հուսահատեցնում։

Ոգուրգեթի դպրոցն ավարտելուց հետո նա տեղափոխվում է Թիֆլիս ուսումը շարունակելու։

Այստեղից է սկսվում Ֆ. Մախարաձեյի հեղափոխական գործունեությունը։ Ցերիտասարդ հասակից Նրա մտահոգության առարկան է դառնում աշխատավորության կյանքի բարելավման խնդիրը։

Իր ամբողջ կյանքում նա անձնազոհ կերպով պայքարել է աշխատավոր ժողովրդին ճնշողների դեմ։

Դպրոցներում այդ ժամանակ գոյության ունեյին աշակերտական գաղտնի խմբակներ։

Այս խմբակներում կարդում եյին արգելված գրքեր, ծանոթանում եյին սոցիալիզմի հարցերին և պատրաստվում ապագա մեծ աշխատանքների համար։

Ֆիլիպպ Մախարաձեն աշխատում էր այդ խմբակներում։

Նրա աշխատանքներն աննկատելի չմնացին դպրոցի ղեկավարների կողմից, վորոնք սկսեցին խիստ միջոցներ ձեռք առնել նրա դեմ։

Թիֆլիսում ուսումն ավարտելուց հետո ընկ. Ֆիլիպպը մտնում է համալսարան, վորտեղ նա շարունակում է գաղտնի աշխատանքները։

Մեծ կարիքների և տանջանքի յե յենթարկվել ընկ. Ֆիլիպպը իր կյանքի ընթացքում։ Շատ անգամ է ցարական իշխանությունը մութ ու խոնավ բանտեր նստեցրել նրան։

Աքսոր, հալածանք, բանտ, սով ու զրկանք—ահա նրա կյանքի ամբողջ պատկերը։

Բայց մթթե բանտն ու կարիքը կարող են հուսահատեցնել անձնազոհ մարտիկին։

Ցեվ պայքարող Ֆիլիպպին ել չհուսահատեցրին։

Մյուս ընկերների հետ միասին նա համարձակ կերպով կռվում էր աշխատավորության թշնամիների դեմ։

Ցեվ պայքարեց այնքան, մինչև աշխատավոր ժողովրդին ազատեց թշնամու ճիրաններից։

Ֆիլիպպին հալածում և բանտարկում եյին նաև մենշևիկները։

Ընկ. Ֆիլիպպը, չնայած իր հասակին, չնայած վոր մեծ տանջանքների ու հալածանքների յե յենթարկվել թշնամիների կողմից, այսոր ել անդադրուն կերպով շարունակում է իր մեծ աշխատանքը։

III. ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես թագավորը հազարավոր մարդ գնդակահարեց յեվ ինչպես գյուղացիները փորձեցին հալածել կալվածատերերին

Բանվորների և գյուղացիների վիճակն որեցոր վատանում եր։

Դրան մի մեծ դժբախտություն ել ավելացավ. թագավորը պատերազմ սկսեց յապոնացիների դեմ։

Անթիվ մարդ կոտորվեց և վիրավորվեց այդ պատերազմում։

Բանվորների դրությունն ել ավելի վատացավ։

Նրանք վորոշեցին գնալ թագավորի մոտ և պատմել նրան իրենց կարիքների ու ծանր դրության մասին։

Բայց թագավորը պատասխանի փոխարեն հրամայեց գնդակահարել բանվորներին։

Այս դեպքն ել ավելի համոզեց բանվորներին, վոր թագավորը չի կարող իրենց բարեկամը լինել, վոր թագավորը բանվորների թշնամին է։

Սրա հետ միասին բանվորները համոզվեցին նաև, վոր միայն պայքարով կարող են բարելավել իրենց դրությունը։

Ու սկսեցին գործադուլներ կազմակերպել ցույցի դուրս գալ կարմիր դրոշակներով։

Դրոշակների վրա գրված եր.

«Կորչի միապետը. բանվորներ բոլոր յերկրների, միացեք»։

Այդ ժամանակ եր, վոր Վլադիմիր Իլիչն արտասահմանից վերադարձավ։ Նա շարունակ բանվորների հետ եր և նրանց հետ ել մասնակցում եր կռվին։ Նա քաջալերում եր բանվորներին և ասում.

«Պետք է պատրաստվել մեծ կռվի համար»։

Այսպես եր բողոքում, ալեկոծվում քաղաքը, այսպես եյին գործադուլ անում բանվորները։

Բողոքի ալիքն անցնում եր նաև գյուղերը։

— Խլենք կալվածատերերի ձեռքից հողերը, — ասում եյին գյուղացիները։

— Սա ինչ անարդարություն է, — ավելացնում եյին նրանք, — կալվածատերը յերեք գյուղի չափ հող ունի, մեր քրտինքով քեֆեր է անում ու անհոգ ապրում, իսկ մեր յերեխաները քաղցած կոտորվում են։

Գյուղացիներն սկսեցին վար անել կալվածատերերի հողերի վրա։

Բայց այսպես չեր բոլոր տեղերում։ Շատերը վախեցան և չհամարձակվեցին դուրս գալ կալվածատերերի դեմ։

Դեռ նրանք միացած չեյին, միատեսակ չեյին մտածում

Հունվարի 9-ը

Այս բանը տեղի ունեցավ սրանից քսանհուք տարի առաջ։

Բանվորները վորոշեցին գնալ թագավորի մոտ և խնդրել, վոր նա ուշադրություն դարձնի իրենց ծանր վիճակի վրա։

Բանվորները կարծում եյին, թե թագավորն իրենց վիճակի մասին տեղեկություն չունի, վոչինչ չգիտե։

Յեվ ահա հունվարի 9-ին (նոր տոմարով հունվարի 22-ին), կիրակի որը, բանվորները դիմեցին թագավորի պալատը։

Սրանց հետ եյին նաև նրանց կանայք ու յերեխաները։ Թափորի առաջից տանում եյին թագավորի ու սրբերի պատկերներ, խաչ ու ավետարան։

Կարծում եյին, թե թագավորը կլսի բանվորների ձայնը ու միջոցներ ձեռք կառնի նրանց վիճակը բարելավելու։

Թագավորի պալատի առաջ մի մեծ պարտեզ կար։

Այդտեղ, ծառերի վրա եյին բարձրացել բանվորների յերեխաները և սրտատրոփ սպասում եյին թագավորի դուրս գալուն։

Բայց թագավորը չցանկացավ բանվորների հետ խոսել ու նրանց դեմ զորք հանեց։

Զորքին հրամայված եր կրակել բանվորների վրա։

Սկսվեց հրացանաձգությունը։

Լսվեց հրապարակում հավաքված ժողովրդի սարսափելի աղաղակը, լացն ու կոծը։

Ձյունը ներկվեց վիրավոր բանվորների, կանանց և յերեխաների արյունով։ Կրակում եյին նաև ծառերը բարձրացած յերեխաների վրա, որոնք սպանված ճնճղուկների պես ներքև եյին գլորվում։

Սոսկալի պատկեր եր։

Թագավորի զորքը շատ ու շատ կին, տղամարդ ու յերեխա կոտորեց։

Բանվորները համոզվեցին, որ թագավորը ճիշտ նույնպիսի թշնամի յե իրենց համար, ինչպես որ գործարանատերը, կալվածատերը։

Այդ որն «արյունոտ կիրակի» կոչվեց։

Յերբ ուրիշ քաղաքների բանվորներն իմացան հունվարի 9-ի կոտորածի մասին, սկսեցին ցույցեր կազմակերպել թագավորի դեմ։

Բայց թագավորը դերևս ուժեղ եր և ամեն տեղ ճնշում եր բանվորական ցույցերը։

Չնայած այս բանին, բանվորները Լենինի ղեկավարությամբ ավելի եյին ուժեղացնում իրենց կռիվը թագավորի, գործարանատերերի և կալվածատերերի դեմ։

Առաջադրություն. Գրեցեք, թե ինչպես պատասխանեց թագավորը բանվորներին։

Նկարչի արհեստանոցում

Հունվարի քսանն եր։

Հեղինեյի հայրը մեզ լուր տվեց.

—Նկարն արդեն պատրաստ է, յեկեք։

Մենք ուրախ-ուրախ գնացինք արհեստանոց։

Ներս մտանք։

Սենյակի մեջտեղում մի մեծ նկար եր դրված։ Նկարը տեղավորված եր սև շրջանակի մեջ և ծածկված սև կտորով։

Հեղինեյի հայրը դիմեց մեզ ժպտալով.

—Բարև իմ թանգագին հյուրերին։ Հիշում եք,—շարունակեց նա,—թե ինչ պատմեցի ձեզ բանվորների վիճակի մասին հեղափոխությունից առաջ։ Այժմ լսեցեք շարունակությունը։

«Եվ չդիմացան բանվորները սովին և զրկանքներին ու վորոշեցին դիմել թագավորին։ Նրանք ուզում եյին խնդրել, վոր թագավորը մի փոքր թեթևացնի իրենց ծանր վիճակը։

Բայց բանվորների շարքերում կային և այնպիսի մարդիկ, վորոնք ասում եյին ընկերներին.

—Զարժե գնալ թագավորի մոտ։ Թագավորը մեզ չի ոգնի. նա միայն հարուստներին է ոգնում, վորովհետև հարուստներն ել իրենց հերթին թագավորին են ոգնում։

Բայց բանվորները նրանց խորհուրդները չուզեցին լսել ու... գնացին։ Հասան թագավորի պալատը, բայց գիտե՞ք, թե ինչպես ընդունեց նրանց թագավորը։ Ահա այս նկարը կպատմի ձեզ»....

Հեղինեյի հայրը բարձրացրեց սև ծածկոցը... Բոլորս ել լուռ դիտում եյինք, չեյինք կարողանում ձայն հանել։

Քաթանի վրա տեսնում եյինք սպանված խեղճ բանվորների դիակների կույտեր, արյան հեղեղ...

Զորքը գնդակահարում է անզեն բանվորներին։

Լռությունը խզեց Հեղինեյի հայրը։

—Այո, այդ ժամանակ միայն հասկացան բանվորները, վոր թագավորն իրենց թշնամին է, վոր պետք է վոչ թե խնդրել, այլ կռվել թշնամու դեմ։

Ու բանվորներն սկսեցին պատրաստվել հեղափոխության համար։

Նրանց ղեկավարն ու առաջնորդը Վլադիմիր Իլիչ Լենինն եր։

Ինչ եր սովորեցնում Լենինը բանվորներին յեվ գյուղացիներին են սեվ որերին

Բանվորների ու գյուղացիների յելույթները սարսափեցրին գործարանատերերին և կալվածատերերին։

Թագավորի հրամանով զինված զազախները վոչնչեցին գյուղերը։ Նրանք հրացանազարկ եյին անում գյուղացիներին, կոտորում թրերով, ծեծում մտրակներով։

Գյուղացիները չեյին կարողանում պաշտպանվել, վորովհետև ինքնապաշտպանության համար զենք չունեյին։

Ի՞նչ անեյին։ Կացիններով, գերանդիներով ու ցցերով ի՞նչ կարող եյին անել զինված զորքի դեմ։

Զորքը քաղաքներում հարձակումներ եր գործում բանվորների վրա։

Բանվորներն սկսեցին ատրճանակներ ու ռումբեր ձեռք բերել։ Մի քանի քաղաքներում նրանք բարիկադներ բարձրացրին։

Անգութ էին զազախները դեպի բանվորները. շատերին կոտորեցին, շատերին բանտերը լցրեցին։

Ձերբակալեցին նաև Իլիչին, բայց նրան հաջողվեց անցնել արտասահման։

Թագավորի զորքի վայրագությունը վոչնչացնում եր ամեն ինչ, հուսահատության գիրկը նետում բանվորներին։

Բայց Վլադիմիր Իլիչը չեր հուսահատվում։

—Ձլքենք սկսած գործը,—ասում եր ու գրում Լենինը,—պատրաստվենք կռվի համար, հավաքենք մեր ուժերը։ Բանվորներն ավելի լավ կզինվեն, գյուղացիները կմիանան բանվորների հետ, և մենք կտապալենք ընդհանուր թշնամուն։

Լենինի այս խոսքերը վոգևորում էին ամենքին։ Մարտնչող բանվորների թիվը հետզհետե մեծանում եր։

Վորոշվեց թերթ հրատարակել Պետերբուրգում։ Բայց դրա համար փող եր հարկավոր։ Բանվորներն սկսեցին փող ժողովել և Պետերբուրգում հրատարակվեց «Պրավդա» («Ճշմարտություն») բայշևիկյան թերթը։

Արտասահմանից Լենինը նամակներ եր ուղարկում այս թերթին և վճռական մարտի կոչ անում ժողովրդին։

Լրագիրը ցույց եր տալիս, թե ինչպես պետք է բանվորները բարելավեն իրենց վիճակը։

Ժանդարմներն ու վոստիկաններն ատում էին այս լրագիրը։

Ձերբակալում և բանտարկում էին այս լրագրում գրողներին։

Բայց պայքարող բանվորները չէին հուսահատվում։

Նոր ու նոր գործիչներ էին ավելանում բայշևիկյան կուսակցությանը։ Ցեվ այդ բոլորին սովորեցնում եր Վլադիմիր Իլիչը։

IV. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ինչու սկսվեց սոսկալի պատերազմը

Գործարանատերերն ու կալվածատերերն աշխատում էին, վորքան կարելի է, մեծ հարստություն դիզել։ Դրա համար էլ սկսեցին համաշխարհային պատերազմը։

Դա մի չտեսնված սոսկալի պատերազմ եր։

Պատերազմի դաշտը քաշեցին-տարան բոլոր առողջ յերիտասարդ բանվորներին և գյուղացիներին։

Ցերիտասարդներին նախ հավաքեցին զորանոցներում։ Այստեղ նրանց սովորեցնում էին, թե ինչպես պետք է թնդանոթներով ու գնդացիրներով մարդիկ կոտորել, կամ ինչպես պետք է սպանել թրերով։

Պատերազմի դաշտում ռուս բանվորներն ու գյուղացիները պետք է կոտորեին ուրիշ յերկրների, բայց ճիշտ իրենց նման յերիտասարդ բանվորներին ու գյուղացիներին։

Կոտորվում էին բանվորներն ու գյուղացիները, իսկ կալվածատերերն ու գործարանատերերը հանգիստ նստած՝ թանգանցնում էին զորքի համար անհրաժեշտ հացն ու մթերքը։

Վլադիմիր Իլիչն արտասահմանից գրում եր.

—Բոլոր յերկրների բանվորներ և գյուղացիներ, դադարեցրեք պատերազմը, վերջ տվեք իրար կոտորելուն, դուք յեղբայրներ եք, դուք միևնույն թշնամիներն ունեք։ Ձեր թշնամիներն են—հարուստները, գործարանատերերը, կալվածատերերն ու թագավորները։ Միացեք բոլորդ նրանց դեմ և ձեր սվիններն ուղղեք նրանց դեմ։ Բավական է վորքան բանվորներն ու գյուղացիներն իրար արյուն թափեցին։

Բայշևիկները Լենինի այս խոսքերը տպում էին և զորքի մեջ ցրում։

Նրանք շատ լավ գիտեին, վոր այս քայլի համար նրանց մահ եր սպասում, բայց նրանց վոչ մի բան չեր վախեցնում։

Ինչպես բանվորները ու գյուղացիները գահընկեց արին թագավորին

Պատերազմը շարունակվում էր։

Պետերբուրգում, որն այսոր Լենինգրադ է կոչվում, չոր հաց կար, չոր միս և չոր էլ կաթ։

Փռների առաջ անգին հերթեր էին ստեղծվել. կանայք գիշերները կանգնած էին փռների առաջ, իսկ ստանը սոված ու քաղցած յերեխաներն էին լալիս։

Մի որ քաղցած բանվորներն ու բանվորուհիները դադարեցրին աշխատանքը և փողոց յելան աղաղակելով.

—Կորչի թագավորը, կորչի պատերազմը։

Սրանց դեմ թագավորը զաղախներ ու զորք ուղարկեց։ Բայց զորքը չկրակեց։ Կրակելու փոխարեն զինվորները զենքերը վեր բարձրացրին և ձայնակցեցին բանվոր-բանվորուհիներին.

—Կորչի թագավորը, կորչի պատերազմը։

Թագավորը նոր միայն հասկացավ, թե ինչ է կատարվում յերկրում։ Զորքը միացավ բանվորներին և թագավորին գահընկեց արին։

Թագավորին գահընկեց անելուց հետո

Թագավորին գահընկեց անելուց հետո յերկրի տեր ու տիրականը դարձան հարուստներն ու մենշևիկները։

Բանվորների և աշխատավոր գյուղացիների վիճակն ավելի վատացավ։ Գործարանատերերն ու կալվածատերերը կենսական անհրաժեշտ ապրանքների գները բարձրացրին և ավելի հարստացան։

Ամեն ինչ չափից դուրս թանգացավ։ Բանվորներն ու աշխատավոր գյուղացիներն ավելի մեծ կարիքի մեջ ընկան, ավելի աղքատացան։

Շատ ու շատ տեսակ հիվանդություններ յերևան յեկան, որոնք հընձում, տանում էին սոված, ուժասպառ մարդկանց։

Սոսկալի յեր պատկերը։

Լենինը վերադառնում է Պետրոգրադ

Վլադիմիր Իլիչն ուզում էր հնար յեղածին չափ շուտ վերադառնալ Ռուսաստան։ Բայց շատ դժվար էր պատերազմող յերկրներով անցնելը։

Վոչ էլ Ռուսաստանի կալվածատերերը, գործարանատերերն ու մենշևիկներն էին ուզում, որ նա վերադառնա։

Չե՞ որ թագավորից հետո նրանք էին յերկրի տեր ու տիրականը։

Բայց չնայած այս բանին, Լենինին հաջողվեց վերադառնալ Ռուսաստան։

Պետրոգրադի բանվորությունը մեծ վոգևորությամբ դիմավորեց նրան։

Կայարանում Լենինին սպասում էր զրահապատ ավտոմոբիլը։

Նա ավտոմոբիլ բարձրացավ ու դիմեց այնտեղ հավաքված բանվորներին.

—Ընկեր բանվորներ և զինվորներ, զենքը ձեռքից բաց չթողնեք։ Քշեցեք կալվածատերերին, գործարանատերերին և մենշևիկներին։ Իշխանությունը ձեր ձեռքը վերցրեք։

Այնուհետև շատ անգամ էր Լենինը յերևան գալիս գործարաններում և ասում. «Ժամանակն է, յերկրի կառավարությունը պետք է բանվորների ձեռքն անցնի»։

Կապիտալիստները, կալվածատերերն ու մենշևիկները հալածում էին Լենինին

Լենինի վերադարձն արտասահմանից սարսափեցրեց կալվածատերերին և գործարանատերերին։

Նրանք վճռեցին սպանել Լենինին։ Բայց բանվորները թագցրին իրենց սիրելի ղեկավարին։

Դաշտում, Պետերբուրգից վոչ շատ հեռու, ուռենուց շինած մի վրան էր կանգնած։ Վրանը ծածկված էր խոտով։

Բանվորներն այդտեղ տարան Լենինին։

Լենինը բանվորի շորեր էր հագել։ Այս նույն վրանում թագնվում էր նաև նրա ընկերներից մեկը։ Վրանի մոտ խարույկ էր վառվում։ Նրանք կրակի վրա թեյ և կերակուր էին յեփում իրենց համար։

Վրանից վոչ հեռու մի թուփ կար։

Իր թագստի տեղից Լենինը բանվորներին և գյուղացիներին նամակ էր գրում։ Այդ նամակներով նա կոչ էր անում բանվորներին ու գյուղացիներին՝ զինվել և զենքը ձեռքին դուրս գալ, քշել կալվածատերերին, գործարանատերերին ու մենշևիկներին։

—Ձեր որինակին կհետևեն ուրիշ յերկրների բանվորներն ու գյուղացիները։ Այսպիսով կվերջանա պատերազմը, իսկ այնուհետև ամենքը կդիմեն ընդհանուր գործի,—գրում էր Լենինը։

Վլադիմիր Իլիչը կոչ էր անում աշխատավորներին, հնար յեղածին չափ, շուտով ապստամբել։

Ինչպես մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները հեռացին կալվածատերերին, գործարանատերերին յեվ մենշեվիկներին

Յերկարատև պատերազմը զորքին շատ մեծ նեղություններ հասցրեց։ Նրանք պատգամավորներ ուղարկեցին Լենինգրադ իմանալու, թե յերբ ե վերջանալու պատերազմը։

Յեվ ահա, մի գեղեցիկ օր, յերբ զորքի պատգամավորները Պետերբուրգ հասան, թնդանոթների ձայներ լսեցին։ Կայսրանի մոտ նրանք տեսան հրացաններով և գնդացիրներով զինված բազմաթիվ բանվորներ, զինվորներ և նավաստիներ։ Սրանք շտապում եյին կալվածատերերի և գործարանատերերի կառավարությունը տապալելու։

Առաջին շաբաթում կարմիր դրոշակներ եյին ծածանվում։ Դրոշակների վրա գրված եր.

—«Կորչի պատերազմը, կորչեն հարուստները»,

«Բոլոր հողերը—գյուղացիներին»,

«Ամբողջ իշխանությունը—խորհուրդներին»։

Յեկած պատգամավորները միացան սրանց։

Ամբողջ որը շարունակվում եր կռիվը։ Բանվորներն ու զորքը հաղթեցին։

Այս դեպքը տեղի ունեցավ սրանից տասնևհինգ տարի առաջ, նոյեմբերի 7-ին։

Բանվորները քշեցին կալվածատերերին, գործարանատերերին և նոր որենքներ ստեղծեցին։ Խորհուրդներ ընտրեցին։ Յերկրի տեր ու տիրականը և կառավարողը դարձավ աշխատավոր ժողովուրդը։

Այսպիսով Ռուսաստանը խորհրդային հանրապետություն դարձավ։

Բանվորության, գյուղացիության և զորքի կողմից ընտրած մարդիկ խլեցին հողը կալվածատերերից, իսկ գործարանները գործարանատերերից և հանձնեցին աշխատավոր ժողովրդին։

Սրա հետ միասին, բանվորա-գյուղացիական կառավարությունը վորոշեց դադարեցնել պատերազմը։

Առաջադրություն. Պատմեցեք (գրավոր) Հոկտեմբերյան հեղափոխության պատճառները։

Մենշեվիկների տիրապետությունը Վրաստանում

Վրաստանը, Միության այլ տեղերի հետ համեմատած, ավելի ուշ խորհրդայնացավ։

Այն ժամանակ, յերբ Խորհրդային Միության բոլոր անկյուններում բանվորա-գյուղացիական կառավարությունը սոցիալիզմի ուղին եր բռնել,

Վրաստանը դեռ ևս մենշևիկյան, բուրժուական կառավարության ձեռքին եր գտնվում։

Մենշևիկյան կառավարությունը չկարողացավ աշխատավոր ժողովրդի վերքերը բուժել, չկարողացավ բարելավել աշխատավորության կյանքը։

Հողը, վոր այնքան անհրաժեշտ եր աշխատավոր գյուղացիությանը, մենշևիկները չխլեցին կալվածատերերից և չհանձնեցին գյուղացիներին։

Գործարանները թողին գործարանատերերին և այդպիսով գործարանների արդյունքից ելի նույն հարուստներն եյին ոգտվում։ Մինչդեռ ֆաբրիկա-գործարանները վոչ թե անհատների, այլ ամբողջ աշխատավորության սեփականությունը պետք ե լիներ։

Այն խոշոր արդյունքը, վոր մասնավոր մարդկանց գրպանն եր գնում, պետք ե գործադրվեր ամբողջ յերկրի շինարարության, ամբողջ աշխատավորության բարեկեցության վրա, ինչպես այսոր ե տեղի ունենում։

Մենշևիկյան կառավարությունից դժգոհ աշխատավորությունը բողոքում, ապստամբում եր նրա դեմ, բայց մենշևիկյան կառավարությունը ճնշում եր այդ ապստամբությունները։

Վրաստանի խորհրդայնացումը

Վրաստանի աշխատավորությունը շատ լավ եր գիտակցում, վոր իր վիճակը միայն խորհրդային կարգերում կարող ե բարելավվել։

Վրաստանի աշխատավորությունը—վրացի, ռուս, թուրք, հայ և այլն միացան յեղբայրական կապերով։

Վրաստանի աշխատավորության իրձն եր յեղբայրների նման ձեռք ձեռքի տված մասնակցել հեղափոխության մեծ գործին և յերկրի հզոր շինարարությանը։

Յեվ իսկապես, միացյալ ուժերով նրանք կարողացան իրականացնել իրենց նպատակը։

Սրանից 12 տարի առաջ, փետրվարի 25-ին, նրանք տապալեցին մենշևիկյան տիրապետությունը Վրաստանում և հաստատեցին խորհրդային իրավակարգ։

Բանվորա-գյուղացիական կառավարությունը հենց առաջին որից անցավ յերկրի շինարարության խոշորագույն աշխատանքներին։

Վրաստանի աշխատավորությունը, կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության ղեկավարությամբ, լծվեց այն մեծ աշխատանքին, որի նպատակն եր աշխատավոր ժողովրդի բարեկեցությունը, աշխատավորության վերջնական նպատակադրումի—կոմունիզմի հաստատումը։

V. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Խորհրդային իշխանության հաստատվելը սարսափեցրեց կալվածատերերին և գործարանատերերին։ Սրանք չեյին հաշտվում այն մտքի հետ, թե իրենք կորցնում են իրենց իշխանությունը։ Կալվածատերերն ու գործարանատերերն սկսեցին կռվել նոր կարգերի դեմ։ Այս կռվում նրանց աջակցում եյին ուրիշ յերկրների գործարանատերերն ու կալվածատերերը։ Նրանք ոգնում եյին իրենց զորքերով։

Բանվորներն ու գյուղացիները վճռեցին կամ պաշտպանել իրենց մանուկ պետությունը, կամ կորչել, անհետանալ։ Ինքնապաշտպանության համար անհրաժեշտ եր ունենալ սեփական ուժեղ բանակ, որը պետք և հերոսաբար և անձնվիրությամբ պաշտպաներ աշխատավորության յերկիրը։

Ահա թե ինչ եյին ասում բանվորներն ու գյուղացիները.

—Կռվենք մինչև մեր արյան վերջին կաթիլը. ավելի լավ և մեռնենք, քան վերադառնանք հին կյանքին. մեզ համար մահն ավելի լավ և, քան հին կյանքը։

Թշնամու բանակն արշավում եր ամեն կողմից։

Բանվորներն ու գյուղացիները դժվարանում եյին հետ մղել նրանց, բայց Վլադիմիր Իլիչը նրանց քաջալերում եր և ասում.

—Մի վախեք, ստեղծենք կարմիր բանակ, և նա պատասխան կտա թշնամուն։

Աշխատավորությունը հավանություն տվեց Լենինի խորհրդին և սկսեց կազմակերպել Կարմիր բանակը։

Կարմիր բանակը շուտով սկսեց հարվածել թշնամուն։ Նա հաղթում եր բոլոր ճակատներում։

Յերբ Կարմիր բանակն այսպես անձնազոհությամբ կռվում եր ազատության համար, Մոսկվայում թշնամիներն ուզեցին սպանել Լենինին։ Նրանք սպասում եյին հարմար ժամանակի՝ իրենց նպատակն իրականացնելու համար։

Մի որ Վլադիմիր Իլիչը գործարաններից մեկում խոսում եր բանվորների հետ այն մասին, թե ինչպես պետք և ջախջախել խորհրդային իշխանության թշնամիներին։

Բանվորները մեծ ուշադրությամբ լսում եյին նրան։

Նրանք խոսք տվին Իլիչին ամբողջ ուժով կռվել թշնամու դեմ։

Լենինը բանվորների ուշադրությունից թեավորված վերադառնում եր։

Հանկարծ մի անծանոթ կին մոտեցավ նրա ավտոմոբիլին և յերկու անգամ կրակեց ատրճանակից Լենինի վրա։

Յերկու գնդակ կպավ Լենինին։

Գնդակները թունավոր եյին։

Լենինին վիրավորելու լուրը կայծակի արագությամբ տարածվեց աշխատավորության մեջ։

Նրանց տխրությանն ու բարկությանը վերջ չկար։

Վախենում եյին՝ Լենինը մեռնի։

Բայց Լենինն ապրեց։

Կարմիր բանակը խորհրդային յերկրի հավատարիմ պահակն է

Մեր շարքերը բաղկացած են զանազան ցեղերի աշխատավոր զավակներից

Կարմիր բանակում, վորպես յեղբայրներ ու բարեկամներ, ծառայում են Խորհրդային Միության ամեն ազգի աշխատավորներ։

Նրանք յեղբայրաբար և հավատարմությամբ պաշտպանում են աշխատավորության հայրենիքը։

Բանակում ամեն մի ազգի աշխատավոր իր լեզվով և սովորում, ունի լրագրեր, դասագրքեր, ընթերցանության գրքեր,

Ընդհանուր գործը և յեղբայրական սերն և միացնում կարմիր բանակայիններին։

Արյունով ձեռք բերած ազատությունը պաշտպանելու և ամրապնդելու հոգսն ավելի յե ուժեղացնում նրանց յեղբայրական կապը, ավելի կուռ դարձնում նրանց շարքերը։

Ցեվ Կարմիր բանակը պատրաստ է մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել ազատ աշխատավորության բարեկեցությունը կապիտալիստական յերկրների հարձակումներից։

Կարմիր զորանոցում

Առաջին անգամն է, վոր գնում ենք կարմիր զորանոց։

Ուզում ենք տեսնել, թե ինչպես են ապրում կարմիր բանակայինները։

Հերթապահ կարմիր բանակայինն ուրախ-ուրախ դիմավորեց մեզ և տարավ, ցույց տվեց ամբողջ զորանոցը։

Զարմանալի մաքրություն և կարգ ու կանոն է տիրում ամեն տեղ։

Ամեն մի կարմիր բանակային ունի իր առանձին մահճակալը, առանձին յերեսսրբիչը և փոքրիկ սեղանը։ Հատակն ու պատերը փայլում են մաքրությունից, պատերին կախված են հեղափոխական պլակատներ ու լոզունգներ։

Մենք այստեղ լսեցինք, վոր կարմիր բանակայինները վոչ թե այն սենյակներում են ճաշում, վորտեղ վոր քնում են, այլ բոլորովին առանձին սենյակում—սեղանատանը։ Այդ սենյակումն են կարմիր բանակայինները ճաշում, թեյ խմում, ընթրում։

Սենյակներից մեկի դռանը մենք կարդացինք «Լենինի անկյուն» մակագրությունը։ Մեզ շատ հետաքրքրեց այս սենյակը և ներս մտանք։

Սա մի մեծ սենյակ եր, վորի պատերը զարդարված եյին հեղափոխական գործիչների պատկերներով և լոզունգներով։

Սեղանների վրա դարսած եյին լրագրեր, թերթեր, շախմատ, նարդի։ Պահարանները լի եյին գրքերով։



Այստեղ դուք կտեսնեյիք նաև հակագազային դիմակներ, այերոպլանների մոդելներ և այլն։

Բավական շատ եյին նմանապես զանազան զենքերի նկարները։

Կարմիր բանակայինները գնացել եյին վարժության, վերադարձան միայն ժաշի ժամանակ։

Հերթապահը մեզ բացատրեց, վոր կարմիր բանակայինները վեր են կենում առավոտյան ժամի $6^1/_2$-ին. կես ժամ տրվում է նրանց լվացվելու և շորերն ու անկողինները շտկելու։ Ժամի 7-ին ազատ աշխատանք է, $7^1/_2$-ին նախաճաշ, 8—2 սովորում են, 2-ին ճաշում։ Ճաշից հետո 1 ժամ հանգստանում են։ Դրանից հետո արտադպրոցական աշխատանք են տանում։

Կարմիր բանակայիններն աշխատում են զանազան խմբակներում։

Ունեն բազմաթիվ խմբակներ—ֆիզկուլտուրայի, անգրագիտության վերացման, լարային յերաժշտության խմբակներ, դրամխսբակ, ռադիոսիրողների խմբակ և այլն։

Վարժություն. Եքսկուրսիա կազմակերպեք դեպի կարմիր զորանոց և ծանոթացեք կարմիր բանակայինների կենցաղին։

Ուժեղացնենք Ֆաբրիկա-գործարանների ու դպրոցի կապը կարմիր զորանոցի հետ

Կարմիր բանակայինների վարժությունները

Զորանոցում կարմիր բանակայիններին սովորեցնում են, թե ովքեր են աշխատավոր ժողովրդի թշնամիներն ու բարեկամները։ Սովորեցնում են նաև, թե ինչպես պետք է դիմադրեն թշնամուն, ինչպես պետք է կռվեն նրա դեմ։

Իսկ սրա համար պետք է ուսումնասիրել ռազմական գործիքները, սովորել նրանց գործածության ձևը, թե ինչպես պետք է քանդել, հավաքել զենքերը և այլն։

Կարմիր բանակայինը պետք է իմանա նաև հարձակում գործել, նահանջել, պաշտպանվել թշնամու կնդակից, գազերից և այլն, Թունավոր գազերի դեմ հատուկ դիմակներ են գործածում։ Դիմակին կապված է փոքրիկ արկղիկ, վորի մեջ ածուխ կա։ Այս արկղը միանում է քթի հետ, վորպեսզի կարմիր բանակայինը թունավորված ոդը չշնչի և չմեռնի։

Ինչպես է ոգնում նրանց ածուխով այս արկղը։ Ածուխը կլանում է թունավոր գազը, իսկ կարմիր բանակայինը մաքուր ոդ է ծծում-շնչում։ Այս արկղի տված ոգուտը շատ մեծ է։

Ահա թե ինչքան բան պետք է սովորի կարմիր բանակայինը, որպեսզի անպարտելի դառնա։

Վարժություն. Գրեցեք, թե ինչ են սովորեցնում կարմիր բանակայիններին զորանոցներում։

Ինչպես են կարմիր բանակայիններն ոգնում կոլտնտեսություններին

Կարմիր բանակը վոչ միայն մեր յերկիրն է պաշտպանում թշնամիներից, այլև գյուղի համար լավագույն շինարարներ է պատրաստում։

Զորանոցներում կարմիր բանակայիններին շատ բան են սովորեցնում։

Սովորեցնում են, թե ինչպես պետք է աշխատեն տրակտորի վրա, ինչպես պետք է մեքենաներ-գործիքներ նորոգեն և այլն։ Մի խոսքով՝ կարմիր բանակայինը սովորում է այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ է կոլտնտեսության համար։

Ագրոնոմը (գյուղատնտեսը) շատ շուտ-շուտ է այցելում կարմիր բանակայիններին։ Նա զրույց է անում նրանց հետ գյուղի վերաշինության, սերմի ընտրության և ցանքսի ու այլ կամպանիաների մասին։

Կոլտնտեսականները գիտեն, թե ինչ մեծ աջակցություն է ցույց տալիս իրենց կարմիր բանակայինը և դրա համար էլ մեծ հաճույքով են ընդունում նրան։

Իսկապես վոր Կարմիր բանակը շատ մեծ աջակցություն է ցույց տալիս կոլտնտեսություններին։

Գարնան ամիսներին, ցանքսի կամպանիայի ժամանակ, կարմիր բանակայինների հարվածային բրիգադները գնում են գյուղերը և ոգնում կոլտնտեսականներին ցանքսի կամպանիան հաջող անցկացնելու համար։

Բացի այդ, նրանք զինում են մինչակ ու չքավոր գյուղացիներին կուլակների դեմ, ջերմ մասնակցություն ցույց տալիս մեքենա-գործիքների վերանորոգության աշխատանքներին և այլն։

Կարմիր բանակը պրոլետարական պետության մարտիկներ յեվ շինարարներ է պատրաստում

«Դ Ե Ն Շ Ի Կ»

Շատ սոսկալի յեր զինվորական ծառայությունը հին զինվորի համար։ Նրան ամբողջ 4 տարի զենքի տակ եյին պահում։

Շատ վատ եյին կերակրում հին զինվորին։ Մեծավորների վերաբերմունքը դեպի զինվորը խիստ եր, կոպիտ և դաժան։

Անուս զինվորի կրթության մասին վոչվոք չեր մտածում։

Ինչպես տգետ քաշ եյին տալիս նրան կազարմանները, այնպես էլ գյուղ եյին վերադարձնում։

Բացի այս բոլորից մի բան էլ կար, վոր շատ եր ստորացնում զինվորին։

Մեծավորներն իրավունք ունեյին զինվորին իրենց մոտ ծառա վերցնել, բոլորովին ձրի աշխատեցնել։

Յեվ զինվորը ձրի յեր ծառայում մեծավորների ընտանիքներին։

Այսպիսի զինվորներին «դենշչիկ» եյին անվանում։

Ճիշտ է, անտանելի յեր կազարմաներում զինվորի դրությունը, բայց ավելի անտանելի յեր «դենշչիկի» վիճակը մեծավորի տանը։

Դենշչիկը համարյա մեծավորի սեփականությունն եր։

Դեպի զինվորն այստեղ նույն վերաբերմունքն ունեյին, ինչ վոր դեպի աշխատող անասունը։

Դենշչիկը կարծես ստեղծված եր մեծավորներին ծառայելու համար։

Վայն յեկել, տարել եր այն զինվորին, վորի վրա մեծավորը կբարկանար։ Մեծավորի բարկության հետևանքը ծեծն եր ու քաղցը։

Հիշում եմ մի դեպք, վորը դեռ այսոր էլ չեմ կարողանում մոռացության տալ։

Այն ժամանակ յես յերեխա եյի։

Մեր բակի յերկրորդ հարկում ապրում եր մի «գեներալ»։

Կոպիտ, խիստ և անգութ եր նա։

Նրա «դենշչիկը» զինվոր Վանոն եր։

Հիանալի աշխատող եր Վանոն։

Շատ հավատարիմ եր ծառայում նա իր իշխանավորին։

Բայց նրա աշխատանքը յերբեք չեր գնահատվում։

Վանոն միաժանակ հրաշալի խոհարար եր։

Բայց նա յերբեք չեր համարձակվում իրիսկ պատրաստած կերակրից ուտել։

Նրան միշտ ճաշարանները եյին տալիս։

Մի որ յես խաղում եյի մեր բակում։

Հանկարծ ինչ վոր աղմուկ բարձրացավ յերկրորդ հարկում։

Նայեցի և ով սարսափ։

Գեներալը Վանոյին վոտների տակ եր գցել և կատաղի կերպով ծեծում եր։

Վանոն պատասխանելու, պաշտպանվելու կամ դիմադրելու իրավունք չուներ։ Դրա համար նրան կգնդակահարեյին։

Ինչպես հետո իմացա, Վանոյին ծեծելու պատճառը հետևյալն և յեղել։

Գեներալը չեր հավանել հոգնած ու դադրած Վանոյի պսպղացրած կոշիկները։

Առաջադրություն. Համեմատեցեք հին, ցարական զինվորի կյանքը կարմիր բանակայինի կենցաղի հետ և գրեցեք։

Մեր տնտեսության վերականգնումը

Պատերազմը քայքայեց մեր ամբողջ տնտեսությունը. փչացան յերկաթուղիները, ջարդվեցին շոգեմեքենաները, քանդվեցին շատ ու շատ գործարաններ ու շենքեր։

Պատերազմը վերջացավ, բայց ամեն տեղ աղքատություն ու սով եր տիրում։

Պատերազմի ճակատից վերադարձան բանվորներն ու գյուղացիները և ամբողջ ուժով ու յեռանդով սկսեցին վերաշինել ավերված յերկիրը։

— Շատ մեքենաներ շինենք, վորպեսզի շատ հաց ունենանք,—ասում եյին բանվորները։

Շինեցին գութաններ, սերմացան, հնձի մեքենաներ։

—Վարենք, ցանենք մեր անծայր հողերը, բանվորների համար մեծ քանակությամբ հաց ստանանք։ Յեվ այն ժամանակ մեր յերկաթուղիներն ել կշինվեն, ապրանքներ ել կբերեն գյուղերը,—ասում եյին գյուղացիները և ամբողջ յեռանդով մշակում իրենց հողերը։

Աշխատում եյին վոգևորությամբ, վորովհետև համոզված եյին, վոր ել վոչվոք չի կարող վոչ հողը և վոչ բերքը խլել նրանցից։

Տեսնում եր Վլադիմիր Իլիչը, թե ինչ մեծ աշխատանք, ինչ շատ յեռանդ ե պահանջվում պատերազմից ավերված ու սնանկացած յերկիրը վերաշինելու համար։

Յեվ բանվորների ու գյուղացիների հետ ինքն ել եր աշխատում անդադար։

— Բանվորների և գյուղացիների յեղբայրական, տոկուն ու վճռական աշխատանքով ամեն ինչ շուտով կվերաստեղծվի։ Նրանց միացյալ ույժը բոլոր դժվարությունները կհաղթահարի,—ասում եր Իլիչը։

Բոլոր յերկրների բանվորներն ու գյուղացիները մեր բարեկամներն են

Մեր յերկրի բանվորները ու գյուղացիները վոգևորությամբ կռվում եյին կալվածատերերի, գործարանատերերի և մենշևիկների դեմ։ Այդ կռվում գործարանատերերին, կալվածատերերին և մենշևիկներին մեծ աջակցություն եյին ցույց տալիս բուրժուական յերկրների հարուստները ու կալվածատերերը։

Բայց այնտեղի բանվորներն աշխատում եյին խանգարել աշխատավորության թշնամիներին և ամեն կերպ աջակցում եյին մեր յերկրի բանվորներին, վորպեսզի սրանք կարողանան ջախջախել թշնամուն։ Դրա համար նրանք գործադուլների միջոցով ամեն կերպ աշխատում եյին խանգարել ռազմամթերք տեղափոխելուն։

Լենինը շատ լավ գիտեր, վոր ինչքան կուռ լինի բոլոր յերկրների բանվորության միությունը, այնքան շուտ և հեշտությամբ հնարավոր կլինի հաղթել թշնամուն, այնքան շուտ կարող ե նոր կյանքը թագավորել յերկրագնդի վրա։

Սրա համար Լենինը վճռեց ստեղծել բոլոր յերկրների բանվորների հաստատուն և հզոր միություն։

Մոսկվայում նա ժողովեց բոլոր յերկրների բանվորների ներկայացուցիչներին և հիմնեց բոլոր յերկրների բանվորների միությունը, կամ Կոմունիստական Ինտերնացիոնալը, կամ յեթե կարճ ասենք — Կոմինտերնը։

VI. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Ինչ տվեց Հոկտեմբերյան հեղափոխությունը բանվորներին յեվ գյուղացիներին

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Խորհրդային իշխանությունը վերջ տվեց ինչպես խոշոր ֆաբրիկա-գործարանների, այնպես եվ հողերի մասնավոր սեփականատիրությանը։

Կալվածատերերի և յեկեղեցիների հողերը գրավեց և հանձնեց գյուղացիներին մշակելու։

Գործարանատերերից խլեց ֆաբրիկա-գործարանները և պետության սեփականություն հայտարարեց։

Խորհրդային իշխանությունը վերացրեց այն սոսկալի լուծը, որ դրված եր բանվորների և գյուղացիների վրա, ինչպես և այն անտանելի կյանքը, որի մեջ հյուծվում եր աշխատավորությունը հեղափոխությունից առաջ։ Սրա հետ միասին Հոկտեմբերյան հեղափոխությունը տվեց բանվորներին և գյուղացիներին այն բոլորը, ինչի համար պայքարում եյին նրանք յերկար ժամանակ։

14—16 ժամի փոխարեն այսոր բանվորն աշխատում է 7 ժամ, աշխատավարձը տարեց-տարի մեծանում է։ Բացի այդ բոլորից Խորհրդային իշխանությունը մեծ ուշադրություն է դարձնում բանվորների կրթության և դաստիարակության վրա։ Բազմաթիվ դպրոցներ է բաց արել նրանց համար։

Խորհրդային իշխանությունը շատ մեծ ուշադրություն է դարձնում նաև բանվորի առողջապահության վրա. բանվորներին ուղարկում է ամառանոցներ, հանգստի տներ, սանատորիաներ, դիսպանսերներ և այլն։ Շինել է նրանց համար լուսավոր, առողջ բնակարաններ և այլն։

Խորհրդային իշխանությունը մեծ ուշադրություն է դարձնում նմանապես աշխատավոր գյուղացիների վրա։

Նա գյուղացիներին է հանձնել կալվածատերերի և յեկեղեցական հողերը մշակելու համար։

Գյուղացիներին միացրել է կոլեկտիվների մեջ, վորովհետև միացյալ ուժերով ավելի լավ կարելի յե մշակել հողը, իսկ լավ մշակած հողն ավելի մեծ բերք է տալիս աշխատավորին։

Ահագին քանակությամբ մեքենա.գործիքներ են ուղարկվում քաղաքից կոլտնտեսությունները։ Այս մեքենաներն ու գործիքները քաղաքի բանվորությունն է պատրաստում գյուղի համար։ Սրա փոխարեն գյուղը քաղաքի բանվորներին տալիս է մթերքներ, իսկ գործարաններին—հումք։

Բացի այս բոլորից, աշխատավոր գյուղացիության համար Խորհրդային իշխանությունը բաց է արել մեծ քանակությամբ դպրոցներ, ագրոկայաններ, խրճիթ-ընթերցարաններ և այլն։ Գյուղ է ուղարկում մեծ քանակությամբ գրքեր, հիմնում թատրոններ, կինո, ռադիո և այլն։

Լուսավորության ճառագայթները հասել են այսոր Խորհրդային Միության բոլոր գյուղերը և այդպիսով վերջ տվել այն սնոտիապաշտություններին, վորոնք այնքան մեծ յեռանդով տարածում եյին գյուղում ցարի կառավարությունն ու յեկեղեցին։

Այսոր ազատագրված բանվորներն ու գյուղացիները, Կոմունիստական կուսակցության և Խորհրդային իշխանության ղեկավարությամբ, սոցիալիստական պետություն են կառուցում։

Հնգամյա պլանը

Յերբ դուք վորևե բան եք ուզում շինել, անպատճառ առաջուց մտածում եք ու հաշվում, թե ինչպես պետք է անեք, վոր ավելի լավ շինեք այդ բանը, ինչքան ժամանակ պետք է ծախսեք նրա վրա և այլն։

Այսպիսով դուք կազմում եք աշխատանքի պլանը։

Առանց այդ պլանի ձեր աշխատանքն արդյունավետ չի լինի։

Յեվ յեթե դուք մի փոքր բան անելու համար այդպես եք վարվում, ապա ինչքան ավելի շատ պետք է մտածի, կշռի, դատի աշխատավորությունը, յերբ նա շատ ավելի մեծ բան է անում—խորհրդային մի նոր յերկիր, մի նոր կյանք է կառուցում։

Ձեք կարող յերևակայել, թե ինչքան մեծ անելիք ունի աշխատավոր ժողովուրդը։

Իսկ չմտածել, չնախագծել այդ աշխատանքը, կնշանակի իզուր աշխատել, ցանկացած հետևանքներին չհասնել.

Սրա համար է, վոր աշխատավորությունը նախագծել է իր աշխատանքը և կազմել է աշխատանքի պլանը։

Այս պլանը պետք է 5 տարվա ընթացքում կատարի։

Սրա համար է, որ այդ պլանը «Հնգամյա պլան» է կոչվում։

Բայց այս պլանում կան և այնպիսի աշխատանքներ, որ հնարավոր է 3–4 տարում կատարել։

Բնական է, այս բանը կախումն ունի աշխատանքի բարդությունից կամ պարզությունից, հեշտությունից կամ դժվարությունից։

Աշխատավորությունն ամբողջ յեռանդով անցել է աշխատանքի— իրականացնում է այդ պլանը։

Աշխատավորությունը վճռել է—

Կառուցել շատ ու շատ Ֆաբրիկա-գործարաններ ու ելեֆտրոկայաններ, շատ քարածուխ հանել Ֆաբրիկա-գործարանների, գնացքների համար։

Շատ նավթ ստանալ յերկրի կարիքների համար։

Ցանել կոլտնտեսությունների յեվ խորտնտեսությունների բոլոր վարելահողերը։

Կոլտնտեսությունների մեջ գրավել չքավոր ու միջակ գյուղացիներին։

Դաստիարակել յեվ կրթել բոլոր յերեխաներին յեվ վերացնել հասակավորների անգրագիտությունը։

Բազմաթիվ յերկաթուղիներ շինել, որպեսզի մարդկանց յերթևեկությունը հեշտանա։

Բացի այս բոլորից, հնգամյա պլանը նախատեսում է ցամաքեցնել ճահիճները և նրանց ոգտագործել վարուցանքի համար։

Նույն պլանը նախագծում է անցկացնել ջրանցքներ, որպեսզի կոլտնտեսությունները վոռոգեն իրենց այգիներն ու բանջարանոցները։

Աշխատավորությունն այս պլանն իրականացնելու համար աշխատում է յեռանդով։

Դուք եք, փոքրիկներ, աշխատավոր ժողովրդի զավակներ եք։ Դուք էլ պետք է մասնակցեք այս շինարարությանը, դուք էլ պետք է մասնակցեք այս մեծ աշխատանքին։

Ձեզ հարմար շատ աշխատանք կգտնեք։

Արագ յեվ մեծ թափով

Աշխատանքը յեռում է գործարաններում և ցեխերում։

Միմյանց սոցմրցման են հրավիրում։

—Ցեվ վոչ մի բոպե խղուր չպետք է կորչի։

—Ապրանքը պետք է առանց «բրակի» դուրս գա։

—Բուքսիրի վերցնենք յետ մնացողներին։

Բանվորները ցեխերում հաբվածային բրիգադներ կազմեցին։

Բրիգադներն աշխատում են յեռանդով։

Աշխատանքը յեռում է։

Աշխատանքի ձայնը դուրս է գալիս գործարանի պատերից և զով քամու թևերով թռչում դեպի կոլտնտեսությունները, կոլխոզնիկներին ուժ, յեռանդ ներշնչելու։

Սոցմրցակցություն

Ֆաբրիկա-գործարանների լավագույն բանվորները, լավագույն կոլխոզնիկները, կարմիր բանակայինները, զանազան հիմնարկությունների ծառայողները, դպրոցներն ու աշակերտները մրցում են իրար հետ։

Մրցում են, թե ով ավելի շուտ և լավ կկատարի իր աշխատանքը։

Սրա հետ միասին նրանք աշխատում են իրենց որինակով վարակել յետ մնացածներին։

Սոցմրցման միջոցով լավագույն աշխատավորությունն ուզում է արագացնել սոցիալիզմի իրականացումը։

Բուֆետը

Դեռ չեր լուսացել։

Գործարանի շչակը դեռ չեր սուլել։

Միտրոֆանն արդեն վեր եր կացել ուղիղ ժամի վեցին և պատրաստվում եր գնալու։

Միտրոֆանը Փոթի նավահանգստի բանվորներից եր։

Ալեզարդ ծերունու աչքերից դեռ յեռանդի կայծեր եյին թափվում։

Քանի՞-քանի տարի յե, ինչ նա աշխատում է նավահանգստում։

Իսկ վերջին տարիները նա շարունակ հարվածային բրիգադներում է աշխատում և որինակելի բանվոր համարվում։

Միտրոֆանն ինքը տարիկան թոռնիկ ունի։

Յերբ Միտրոֆանն ազատ է լինում աշխատանքից, յերեխան իր պապի հետ է լինում։ Նա շատ է սիրում նավաստիների կյանքն ու ծովը։

Մի որ պապն ու թոռնիկը ձուկ վորսալու գնացին։

Նրանց մակույկն ազատ կերպով լողում եր կապտավուն ծովի վրա։

Լուսաբացին արևմուտքից մի նավակ յերևաց, վորն իր հետևից իրենից հինգ անգամ մեծ մի «բարժ» եր քաշ տալիս։

—Տես, տես, պապիկ, իրար կապված յերկու նավ այս կողմն են գալիս, կարծես շոգեմեքենա և վագոններ լինեն...

—Այո, Թոռնիկս, դա բուքսիր է կոչվում։ Այդ փոքրիկ նավակը շատ ուժեղ է։ Նա շատ հեշտությամբ է քաշ տալիս այդ խոշոր բարժին։ Վոր կողմը ցանկանա, այն կողմն էլ կտանի։

Յերեխան ձեռքով հովանի արեց աչքերին և մի փոքր ժամանակ «բարժը» դիտելուց հետո ուրախ ուրախ բացականչեց.

—Գիտե՞ս ինչ, պապիկ Ջան, դպրոցում մենք բրիգադների յենք բաժանված։ Յես մեացող բրիգադին լավագույն բրիգադն է ղեկավարում։ Նա էլ ուղիղ այդպես է քաշ տալիս յետ մեացածին և ուղղում, այո, ուղղում... Ապա փորձեն ծուլանալ։



—Այո, զավակս, այո, դուք էլ եք ուրեմն բուքսիրի վերցրել։ Բուքսիրն անհրաժեշտ է ամեն տեսակ աշխատանքի ժամանակ, վորպեսզի աշխատանքը չտուժի։

—Պապի Ջան, ուրեմն դուք ե՞լ եք բուքսիրի վերցնում, չե՞ վոր դուք էլ հարվածային բրիգադումն եք։

Այս խոսակցության ժամանակ «բուքսիրն» արդեն մոտեցել եր ափին։

Համարձակ կերպով ճեղքում եր նա ալիքները, շուրջը փրփուր բարձրացնում և հեշտությամբ քաշ տալիս «բարժը»։

—Ինչքան լավ է, յերբ ուժեղը թույլին առաջ է քաշում...

Եվ յետ մեացող չի լինի,—ասում եր ինքն իրեն յերեխան և աչքը չեր հեռացնում «բուքսիրից»։

Ցվիտ

Քաղաքի յեվ գյուղի կապը

Քաղաքի բանվորն ու կոլխոզնիկ գյուղացին յեղբայրներ են։

Սրանք միասին կռվել են միապետության դեմ և այսոր էլ միասին են աշխատում։

Սրանք միմյանց թև ու թիկունք են։

Գիտեն, վոր կուռ միությամբ և իսկական յեղբայրությամբ կկարողանան կառուցել մեր շինարարության կայուն պատերը։

Անդադար աղմկում են մեքենաները քաղաքում, անվերջ պտտվում են փոկերը։

Անթիվ բանվոր ձեռքեր քաղաքի և գյուղի համար անհրաժեշտ պաշարներ են ստեղծում։

Հումքի պակաս չի զգացվում։ Ընդհակառակը։

Սայլաշարքը շարժվում է դեպի քաղաք և գործարանների ու քաղաքի համար անհագին քանակությամբ մթերքներ տանում։

Ահա նա։

Շըփ, շըփ, շըփ... շնչում է շոգեմեքենան ու ահագին քանակությամբ նյութ տանում։ Բեռնակիրները դեպի շտեմարան են կրում նյութերը, իսկ այդտեղից էլ այդ նյութերը բաշխվում են գործարաններին։

Ինչ՞ը չի տալիս գյուղը քաղաքին։

Ինչ՞ը չի պատրաստում քաղաքը գյուղի համար։ Կյանքը յեռում է, աշխատանքն աղմկում։ Հասել են ամպերին գործարանների ծխնելույզները։ Ծուխը բարձրանում է, մեքենաներն աղմկում...

Ու մեծանում է տրակտորների բանակն աշխատավորության հողերը վարելու համար։

Տրակտորների բանակի հետ միասին մասնագետ բանվորների հարվածային բրիգադներ են գնում գյուղերը ու սովորեցնում գյուղացիներին, թե ինչպես պետք է նոր գործիքներով հողը մշակեն։

Տպարաններն անդադար անհրաժեշտ գրքեր են տպում կոլխոզնիկների համար։

Դպրոցներն ու հոկտեմբերիկ-պիոներները գնում են գյուղացիներին ոգնելու։ Կոլխոզնիկների հետ է նաև ագրոնոմների խոշոր բրիգադը, որ սովորեցնում է նրանց, թե ինչպես պետք է հավաքել բերքը։

Աշխատանքի աղբյուրը չի ցամաքում յերբեք, և ամեն կողմից յերգի ձայն է լսվում։

Նոր կյանքն ուրախացնում է ամենքին, ազատությունը վոգևորում բոլորին ու յեռանդ տալիս։

Առաջադրություն. Գրեք, թե ինչ է տալիս քաղաքը գյուղին և գյուղը քաղաքին։

Դպրոց ու գործարան

«Դպրոց ու գործարան»—շատ հաճախ ենք լսում մենք իրարից անբաժան այս բառերը։

Ինչո՞ւ։

Վորովհետև դպրոցն ու գործարանը շատ բան ունեն միասին անելու, շատ բանում պետք է իրար ոգնեն։

Ահա դպրոցը լսում է, վոր գործարանում աշխատանքն սկսում է կաղալ։ Աշակերտներն շտապում են դեպի գործարան։

Նրանք մաքրում են, յուղում մեքենաները։ Գործարանը ուտիլ-հումքի կարիք է զգում։

—Դեհ, ձեզ տեսնեմ, փոքրիկ ձեռքեր, աշխատանքի անցեք։

—Ժողովեք, գործարան հասցրեք այդ հումքը։

—Շտապեք, վոր աշխատանքը չտուժի։

—Զմոռանանք, վոր հնգամյակը պետք է իրականացնել։

—Միացյալ ուժերով շատ բան կարող ենք անել։

Պոլիտեխնիզմն իրացնելու համար բանվորների հետ յեղբայրական կապ ստեղծենք։

Աշխատանքի պարին ամենքս էլ մասնակցենք, աշխատենք միասին վորպես ընկերներ։



Իսկ դուք, բանվորներ, աջակցեք դպրոցներին, փոքրիկ ժողովներ պատրաստեք նրանց համար։

Գործարանը լսեց, վոր իր յենթաշեֆ դպրոցի աշակերտությունը կոշկի և շորի կարիք է զգում, լսեց, վոր չքավոր յերեխաներին ուժանդակություն է հարկավոր, վոր դպրոցը վերանորոգության կարիք ունի, նրա արհեստանոցները կարգի չեն դրված։

Հավաքվեցին բանվորներն ու վորոշեցին ոգնել դպրոցին։

Իսկապես մեծ աջակցություն ցույց տվեց գործարանը դպրոցին։

Յեվ այսպես դպրոցն ու գործարանը ձեռք-ձեռքի տված, յեռանդով ու սիրով աշխատում են մեր յերկրի բարեկեցության, մեր յերկրի վերաշինության համար։

Առաջադրություն. Կապ հաստատեք գործարանի հետ։ Մասնակցեք հեղափոխական տոներն անցկացնելու աշխատանքին։

Մեր աշխատանքը յենթաշեֆ գյուղում

Մեր դպրոցի յենթաշեֆ գյուղը Սարթիճալան է։ Այդ նույն գյուղի վրա շեֆություն է վերցրել նաև մեր շեֆ գործարանը։

Այս գյուղում կոլտնտեսություն կա։

Կոլտնտեսությունն ունի դպրոց, վորտեղ սովորում են կոլտնտեսականների յերեխաները։

Սարթիճալայում թե մեր դպրոցը և թե մեր շեֆ գործարանը շատ մեծ աշխատանքներ են տանում։

Մեր ուսուցիչները, աշակերտները ու բանվորները հաճախ գնում են այս գյուղը ներկայացումներ կազմակերպում, աշխատում կոլխոզում, ոգնում կոլխոզնիկներին։

Մենք գրքեր և զանազան պիտույքներ ենք ուղարկում կոլխոզի դպրոցին, իսկ գործարանը՝ կոշիկներ ու հագուստեղեն։ Այս աշխատանքներին մեր խումբն ել է մասնակցում։

Մենք հավաքեցինք զանազան գրքեր ու դասական պիտույքներ և ուղարկեցինք Սարթիճալի դպրոցի յերկրորդ խմբի աշակերտներին։

Մենք հաճախ նամակ ենք գրում նրանց և նրանցից պատասխան ստանում։

Առաջադրություն. Սերտ կապ պահպանեք յենթաշեֆ գյուղի դպրոցի հետ։ Ոգնեք նրան դասական պիտույքներով, նամակագրություն ունեցեք այդ դպրոցի հետ։ Նամակագրության միջոցով պարզեք, թե ինչ կարիք ունի դպրոցը և ոգնեք նրան։

Զ ա գ ե ս

Ցերեկը բաժանվում է գիշերից։

Մայր մտնող արևի վերջին ճառագայթները կարմիր գույն են տալիս բարձր սարերի գագաթներին։

Մութը կամաց-կամաց իջնում է Ավճալայի վրա։

Կամաց-կամաց վերջ է տրվում աղմուկին և այդ պատճառով ավելի պարզ է լսվում Քուռ գետի ձայնը։

Կար ժամանակ, յերբ գիշերային խավարը սև դրոշի պես ծածկում եր Ավճալան իր շրջակայքով.

Իսկ այսոր... այդպես չէ Ավճալան... Ցերեկվա արևին այնտեղ գիշերային արևն է փոխարինում։

Արևը մայր մտնելուն պես շրջակայքը զարդարվում է հազարավոր վոսկեգույն լուսաստղերով—ելեքտրական լույսով։

Հին խրճիթների փոխարեն այսոր հպարտ ու նազանքով նայում են ելեքտրական ճրագներով զարդարված հազարավոր նոր տներ։

Ամեն տեղ, ամեն անկյունում թառել են կրակե թռչնիկներ։

Ելեքտրական լույսից պսպղում է Քուռ գետը։

Լույսի յերկար ճառագայթները պատել են նրա մարմինը։

Տեղ-տեղ կրակե սյուները գրկախառնվել են նրա չարաճճի ալիքներին և որորվում են նրանց հետ։



Բարձր, խրոխտ սյուներին բազմել են վոսկու գույն սփռող լուսատուները։

Շրջակայքը լողում է լույսի ծովի մեջ։

Քուռը, վոր մի ժամանակ ազատ ու գալարուն սողում եր, այսոր կատաղած, բաշը դդզված, աղմկում է, փրփրում...

Նրա խորքերից բարձրացած սյուները սանձահարում են նրա կատաղությունը, նրա փրփրալից ալիքները։

Այստեղ բարձրացել է կայանը, վորի վիթխարի անիվները դառնում են ջրի ուժով։

Մեծ է Քուռ գետի ուժը, բայց ավելի մեծ է մարդու ուժը, վոր ոգտագործում է նրա ուժը։

Ավճալից յերկաթե թելերով դեպի քաղաք է հոսում ելեքտրական ուժը։ Այստեղ նա շարժում, քշում, տանում է տրամվայի վագոնները, բազմաթիվ գործարաններում մեքենաներ է աշխատեցնում և այդպիսով թեթևացնում մարդու աշխատանքը։

Յերբեմնի անոգուտ գետը այսոր թեթևացնում է մարդու աշխատանքը, փոխարինում մարդու ձեռքերին։

Լենինի արձանն է զարդարում Զագեսը։ Աշխատավորության մեծ առաջնորդը վերևից դիտում է Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումներից մեկը—Զագեսը։

Հացի գործարանը

Մեքենան շատ բաներում է ոգնում մարդուն։ Նա թեթևացնում է մարդու աշխատանքը։

Իսկ վերջերս նա մարդու ձեռքից խլել է հաց թխելու արհեստը և ինքն է անցել այդ «փեշակին»։

Չկարծեք, թե հեշտ է հաց թխելը։ Այս աշխատանքը շատ է հոգնեցնում մարդուն, շատ էլ ժամանակ է խլում նրանից։

Ամենալավ հացթուխն օրական 32—48 կիլո հացից ավելի չի կարող թխել։ Իսկ գործարանում դրանից 40 անգամ ավելի շատ է հաց թխվում օրական։ Շատ բանվոր ձեռք չի պահանջում գործարանը։

Ամեն մի մեքենայի առաջ միայն մի մարդ է կանգնած և հետևում է մեքենայի աշխատանքներին։

Ահա բեռնակիր ավտոմոբիլն ահագին քանակությամբ ալյուր հասցրեց պահեստին։ Այստեղ մեքենան շտապ կերպով բարձրացնում է ալյուրով լի տոպրակները և յերբորդ հարկը հասցնում։ Այստեղ մաղող մեքենան է աշխատում—ալյուր է մաղում։ Մաքուր ալյուրը տախտակե խողովակներով հոսում, իջնում է յերկրորդ հարկը, ուր հունցող մեքենան է։ Յերկրորդ խողովակով տաք ջուր է մատակարարվում մեծ կաթսաներին, վորոնց մեջ հատուկ զլաններով խմոր է հունցվում։ Խմորը հունցելուց հետո բանվորները խմորը տեղափոխում են անիվավոր մեծ տաշտերը և մեքենայի մոտ տանում,

Այս մեքենան ձագարաձև ծածկոց ունի։ Այս ձագարի մեջ են լցնում խմորը։ Մեքենան սկսում է աշխատել և գունդ-գունդ խմոր է դուրս հանում։ Գունդերը դարսվում են հատուկ ամանի՝ կաղապարների մեջ։ Խմորով լի 90 կաղապար վերելակով (լիֆտով) առաջին հարկն են իջեցնում, վորտեղ նրանց սպասում են շիկացած վառարանները։ Ամեն մի վառարանի մեջ 180 հաց է տեղավորվում։ Այսպիսի վառարաններ շատ կան գործարանում։

Այս վառարաններում չափավոր տաքություն կա և այդ է պատճառը, վոր հացը լավ է թխվում։

Յերբ հացը թխվում, պատրաստ է լինում, հանում են վառարանից և շարժական փոկի վրա դարսում։

Բանվորները ձեռնոցներով են աշխատում։ Հացը փոկերով պահեստ է տեղափոխվում, վորտեղ սառչում է 8 ժամվա ընթացքում։ Պահեստից նման փոկերով հացը տեղափոխում են նախասենյակ, իսկ այստեղից ավտոմոբիլը կոոպերատիվ խանութներն է տանում։



Առաջադրություն. Եքսկուրսիա կազմակերպեք հացի գործարանի հետ ծանոթանալու համար։

Հասարակական լվացքատուն

Շատ դժվար է լվացք անելը։

Ամբողջ որը վոտի վրա կանգնած մնալն այնքան էլ հեշտ չէ, ուղղակի անտանելի յե։

Բայց Խորհրդային իշխանությունն այս աշխատանքն էլ է թեթևացրել։ Նա հասարակական լվացքատներ է շինել, վորտեղ լվացքը մեքենաների միջոցով է կատարվում։



Հասարակական լվացքատներում գոլորշու միջոցով է տաքանում ջուրը, վորը հետո լցվում է մեքենաները։ Մեքենաների մեջ լվացք է ածած։ Մեքենան աջ ու ձախ է դառնում և հիանալի կերպով լվանում լվացքը։

Լվացքը մի անգամ լվանալուց հետո, կեղտոտ ջուրը դուրս են թողնում առանձին խողովակներով, վորից հետո մաքուր ջուր են բաց թողնում խողովակներով—նորից լցնում մեքենան։

Այսպիսով 3—4 անգամ փոխում են լվացքի ջուրը։

Մեքենայի մոտ կանգնած բանվորը հետևում է մեքենային և ժամանակ առ ժամանակ փոխում լվացքի ջուրը։

Խոհանոց-գործարան

Քաղաքի մեջտեղը մի մեծ ու գեղեցիկ շենք է կառուցված։ Շենքի խոշոր ապակիները հայելու պես փայլում են։ Անթիվ մարդիկ ներս ու դուրս են անում։

Տեսնես—ինչ շենք է այս։

Կարդացեք, պատի վրա խոշոր տառերով գրված է—խոհանոց-գործարան։

Զարմանալի յե մարդու միտքը։ Ինչքա՞ն չի հնարել, ինչքա՞ն մեքենաներ է աշխատեցրել։ Ցեվ վորքան է հեշտացրել մարդու աշխատանքը։ Խոհանոցը գործարանի յե վերածել և անթիվ մեքենաների միջոցով մի քանի

հազար մարդու համար կերակուր է պատրաստում։ Հետո ինչքան էլ արագ ու մաքուր է պատրաստվում կերակուրը։ Այստեղ ամեն ինչ մեքենան է պատրաստում, իսկ մարդը միայն հետևում է նրա աշխատանքին։

Ներս մտնենք և տեսնենք այդ զարմանալի գործարանը։

Ահա բակի դռնով ահագին քանակությամբ ապրանքատար ավտոմոբիլներ են մտնում։ Մի քանիսը միս են կրում, մյուսները ձուկ, հաց, բանջարեղեն, շաքար և ուրիշ մթերքներ։



Կայծակի արագությամբ դատարկվում են այդ անթիվ ավտոմոբիլները։ Միսն ու ձուկը դարսում են սառցատներում, իսկ մնացած մթերքներն իրենց տեղերում։

Ահա մի մեծ սենյակում մեքենաները բանջարեղեն են մաքրում, կտրտում։ Մի այլ մեքենա քերում, մանր-մունր կտրտում է ճակնդեղը, գազարն ու դեղնախնձորը։ Այստեղից մեքենան այս բոլորը տեղափոխում է հարևան սենյակը, վորտեղ գոլորշիով տաքացած վառարանների վրա խոշոր կաթսաներ են շարված։ Սրանց մեջ կերակուրն է եփվում։ Սպիտակ գոգնոցներով ու գլխարկներով կանայք ու տղամարդիկ հետևում են, թե ինչպես է եփվում կերակուրը։

Տեսնես ի՞նչ պետք է անեն այսքան կերակուրը։

Բարձրանանք վերին հարկը և տեսնենք։ Ո՜հ... ինչքան էլ մեծ սենյակ է, մի ծայրից մյուս ծայրը չի յերևում։

Սենյակի ամբողջ յերկարությամբ չորս շարք սպիտակ, մաքուր սրբիչներով ծածկված սեղաններ են յերևում։

Սեղանների շուրջը բանվորներ են նստած։ Կան և հերթի կանգնածներ։ Բայց սրանք շատ յերկար չեն սպասելու։

Մաքուր զոգնոցներով ծառայողներն արագ-արագ կերակուր են բերում։

Տեսեք, ահա այն աղջիկը հեռախոսով խոսում է ներքին հարկի հետ։

— Հազար մարդու համար ապուր ուղարկեք, այդքան էլ տապակած, հաց և քաղցրավենի։

Զարմանալի արագությամբ մեքենան բարձրացնում է պատվիրած ճաշը։



Կեղտոտ ամանները մեքենայով են մաքրում։ Կեղտոտ ամանները դարսում են յերկաթե թելից շինած մի ցանցի մեջ, վորն որորվելով անհետանում է հատակի տակ և դուրս գալիս ամենատորին հարկում։ Այստեղ, ինքնիրեն, առանց մարդու ոգնության, խորասուզվում է տաք ջրով լի ավազանը, իսկ այստեղից էլ չորանալու համար ուղեվորվում մի այլ բաժանմունք։

Այստեղ տաք գոլորշին վերջնականապես սրբում է այդ ամանները։

Մի րոպե էլ, և բոլորովին մաքուր ամանները փայլելով նորից վերին հարկն են բարձրանում։

Մեքենաները կեղևում-կլպում են պտուղները, կեռասը կորզահան անում, հաց կարտում և այլն։

Ամբողջ հացը դրվում է մեքենայի մեջ և մի րոպե հետո բաժանվում հավասար և գեղեցիկ կտորների։

Խոհանոց-գործարանից ճաշի մի մասն էլ բեռնակիր ավտոմոբիլներով անները են ուղարկվում։

Ճաշը պահվում է հատուկ ամաններում, վորոնք տերմոս են կոչվում։ Տերմոսը տաքությունը յերկու որ շարունակ պահում է իր մեջ։ Ուրիշ խոսքով, այս ամաններով պահած կերակուրը յերկու որ շարունակ տաք է մնում։

Ահա թե ինչքան գործ են կատարում խոհանոց-գործարանները, վոր կառուցել է Խորհրդային իշխանությունը Միության շատ և շատ քաղաքներում,

Շուտով մի այդպիսի խոհանոց էլ Թիֆլիսում կունենանք։

Կոոպերատիվ ճաշարանը

—Նախաճաշ պատրաստի, ճաշ յեփի, այս ինչը կեղևի, այն ինչը մաշկի, քերի, յեփի, տապակի, մի քանի ժամ պահապան կանգնի, վոր կերակուրը չայրվի, քափը քաշի, հետևի, վոր կերակուրը չթափվի, սեղանը գցի, ամանները ժողովի և այլն և այլն։

Ամբողջ որն այս հոգսերով է տարված տանտիկինը։ Ամբողջ որը նա կպած է ոջաղին և այդպիսի աշխատանքներով է մթնեցնում իր որը։

Իսկ յերեկոներն այնպիսի հոգնածություն է զգում խեղճը, վոր ուրիշ աշխատանքի մասին մտածել անգամ չի կարողանում։

Հոգնած մարդը տանից դուրս գալու տրամադրություն չի ունենում. որինակ, բարեկամների ու ծանոթների մոտ կամ թատրոն գնալու մասին չի յել մտածում։

Ամբողջ որը ոջաղի առաջ կանգնած, հոգնած ու դաղրած մարդը միայն գլուխը բարձի վրա դնելու մասին կարող է մտածել, վորովհետև նա քնելու կարիք է զգում։

Տան աշխատանքը կնոջը կտրում է հասարակական աշխատանքից, թույլ չի տալիս մի բան կարդա, սովորի, զարգանա։

Իսկ կինը պետք է անպատճառ պետության աշխատանքներին մասնակցի, վորպեսզի մեր շինարարությունն արագ քայլերով առաջ գնա։

Այս բանը շատ լավ է հասկացել Խորհրդային իշխանությունը, ուստի և այնպես է անում, վոր կինն ազատվի տան ծանր հոգսերից։ Որինակ, բաց է անում կոոպերատիվ ճաշարաններ։

Ով ուզում է, կարող է գնալ այդ ճաշարանները և ճաշել։

Կոոպերատիվ ճաշարանը կնոջն ազատում է այնպիսի մեծ աշխատանքից, ինչպես է ճաշ պատրաստելը և առհասարակ կերակուր պատրաստելու, պահելու հոգսը։

Կոոպերատիվ ճաշարաններում կատարյալ մաքրություն է տիրում։ Ճաշը թե մաքուր է և թե համեղ և, վոր գլխավորն է, տանը պատրաստած ճաշից շատ ավելի էժան է նստում։

Տիրապետեցեք տեխնիկային յեվ գիտությանը։ ՍՏԱԼԻՆ

Բանվոր գյուտարարներ

Շատ աչքի ընկնող, կարևոր և թանգագին գյուտեր են արել բանվոր-գյուտարարները գործարանների և արտադրության համար։

Որինակ, շատ դժվար եր առաջ յերկաթ ծռելը։ Իսկ յերկաթ ծռելու կարիքը շատ մեծ է կամուրջների, յերկաթգծերի համար և այլն։

Սրանից վեց տարի առաջ Գորու փայտագործարանի բանվոր-գյուտարար Դաթիկաշվիլին յերկաթը հեշտությամբ ծռելու դաղդյահ հնարեց։

Նրա գյուտը հավանություն գտավ և գործարանը լավ վարձատրեց գյուտարարին։

Բանվոր գյուտարար ընկ. Կաբիշեվը

Մանվածային գործարանի բանվոր-գյուտարարների բջիջի ժողովն է։

Տաք-տաք վիճում են, թե ինչ պետք է հնարեն, վոր աշխատանքն ավելի արդյունավետ լինի։

Պարզվեց, վոր մեքենայի առանցքի վրայի գործվածքը ձեռքով ուղղելը բավական անհարմար է և, բացի դրանից, պատահում է, վոր ուղղելու ժամանակ բանվորը փչասում է իր ձեռքը։

—Ընկերներ,—լսվեց ջուլհակ-բանվոր Կաբիշևի ձայնը,—այդ ուղղությամբ յես բավական մտածել եմ ու մի բան հնարել։ Յեթե ուզում եք, յես գյուտիս հետ կծանոթացնեմ ձեզ։

Բանվորների մեջ ուրախ աղմուկ բարձրացավ։ Հետո հանկարծ լռություն տիրեց, և բոլորն էլ շրջապատեցին Կաբիշևի գծած նկարը։

Ընկ. Կաբիշևը բացատրում եր իր գյուտի էությունը։

Բանվորները շատ հավանեցին իրենց ընկերոջ գյուտը։

Կաբիշևն իր գյուտի հետ ծանոթացրեց նաև գյուտարարներին աջակցող մթուրթենական բյուրոյին։

Բյուրոն նմանապես հավանեց Կաբիշևի գյուտը։

Այս գյուտով գործվածքը վոչ թե ձեռքով է ուղղվում առանցքի վրա, այլ ինքը մեքենան է ուղղում, առանց բանվորի ոգնության։

Այս գյուտը շատ պարզ ու հասարակ է և դրա հետ միասին շատ ժամանակ է նստում։

Նոր յեվ ուշադրության արժանի գյուտ

Դերձակ բանվոր ընկ. Գրիգորյանը մի մեքենա յե հնարել, վորը հեշտացնում է շոր կարելը։

Այս մեքենան ինքն իրեն փռում և հարկավոր դեպքում նաև քանդում է գործվածքը։ Դա հեշտությամբ կարող է փոխարինել 25 բանվորի աշխատանքին։

Այս գյուտը հավանություն է գտել հատուկ հանձնաժողովի կողմից և շատ շուտով յերեք այդպիսի մեքենա յե պատրաստվելու։

Այդ յերեք մեքենան մի տարվա ընթացքում կիջեցնեն արտադրության ծախսն 800 հազար ռուբլով։

Բանվորական տներ

Դուք լավ եք հիշում, յերեխաներ, թե վոստիկանությունն ինչ արեց չքավոր գյուղացի Սիմոնին։

Գյուղի տզրուկներն ու կալվածատերերն արնաքամ եյին արել Սիմոնին, և նա քաղաք եր յեկել մի կտոր հաց վաստակելու։ Նա իր համար խրճիթ եր շինել Նաձալադևում (Նախալովկա)։

Հիշում եք և այն, վոր այն ժամանակ Նաձալադևն ամայի, անմարդաբնակ տեղ եր։

Իսկ այսոր։



Գնանք տեսնենք այդ թաղամասը։ Սա բոլորովին նման չե հին Նախալովկային։ Գեղեցիկ տներն այսոր զարդարում են այդ բլրի լանջերը։ Իսկ լայն, ուղիղ, ելեքտրական լուսով վողողված ծառազարդ փողոցներն ավելի յեն գեղեցկացնում այդ բանվորական թաղամասը։

Այստեղ է ապրում մոտակա գործարանների բանվորությունը։

Այս թաղամասն այսոր Լենինի ռայոն է կոչվում։

Ահա թե ինչպես է ոգտագործում Խորհրդային իշխանությունն այն վայրերը, վորտեղ մի ժամանակ գայլեր ու աղվեսներն եյին բուն դրել։

Նման շատ անմարդաբնակ տեղերի կարող եյինք հանդիպել մի ժամանակ Թիֆլիսի շրջակայքում։

Այսպես եյին Սաբուրթալոն, Վակեն և այլն։

Իսկ այսոր այդ թաղամասերը տեսնելիս—չեք եկ յերևակայում, վոր դրանք մի ժամանակ անմարդաբնակ են յեղել։

Լայն, լուսավոր փողոցներ, բանվորական խոշոր տներ, էլեքտրական լույս, ջրմուղ, ակումբներ, թատրոն, և այլն և այլն։ Ահա թե ինչ են ներկայացնում այսոր այդ բանվորական թաղամասերը։

Բացի այդ բոլորից, որինակ, Վակեյում ձեր ուշադրությունը կդրավեն մի շարք շատ ու շատ խոշոր շենքեր։ Սրանք բարձրագույն դպրոցի (համալսարան) կամ նրա զանազան բաժանմունքների շենքերն են։ Այստեղ սովորում են բանվորների զավակները։ Համալսարանից վոչ շատ հեռու ուսանողական հանրակացարաններն են։

Անցնենք Սաբուրթալո։ Ահա կենդանաբանական այգին, լի զանազան կենդանիներով։

Առաջ այստեղ այգիներ եյին, վորոնք պատկանում եյին ժասնավոր մարդկանց։ Սրանք վաճառում եյին այգիների բերքը, հարստանում և նույնիսկ հասարակ ճանապարհ չեյին ուզում շինել։

Այսոր այդտեղ լայն փողոցներ են ձգվում, շուտով կաշխատի նաև տրամվայը։

Սաբուրթալոն գտնվում է Ֆուռ գետի աջ ափին, իսկ մյուս ափին քաղաքն է։

Սաբուրթալոն քաղաքի հետ միացնելու և այդպիսով ճանապարհը կրճատելու համար Ֆուռ գետի վրա կամուրջ են շինում։

Այսպիսով մեկ ափից մյուսն անցնելու համար ահագին ժամանակ չեք կորցնի. Սաբուրթալոյից անմիջապես կամուրջով կարող եք անցնել քաղաք և ընդհակառակը, քաղաքից Սաբուրթալո գնալ ամենակարճ ճանապարհով։

Այսպիսի մեծ շինարարություն, այսպիսի մեծ աշխատանք է յեռում Խորհրդային Միության բոլոր քաղաքներում։

Առաջադրություն. Եքսկուրսիա կազմակերպեք դեպի բանվորական տները և ծանոթացեք բանվորների կենցաղի ու ապրուստի պայմանների հետ։

«Կարմիր բանակ» կոլեկտիվի ղեկավարը

Ճալա գյուղի կոլեկտիվի ղեկավարը նախկին բատրակ Շաքրոն է։ Շաքրոն նոր է վերադարձել Կարմիր բանակից։ Բանակում Շաքրոն սովորում եր տրակտորային կարճատև դասընթացներում, վոր բաց եր արել ռազմական շտաբը կարմիր բանակայինների համար։

Շաքրոն սովորեց, թե ինչպես պետք է տրակտորի վրա աշխատել, տրակտորը կարգի գցել։ Սրա հետ միասին շատ լավ ծանոթացավ կոլեկտիվի կանոնադրության հետ և այսպիսի գիտելիքներով զինված գյուղ վերադարձավ։

Յեվ ահա, մի գեղեցիկ որ, Շաքրոն աշխատավոր գյուղացիներին ժողովի հրավիրեց։ Ժողովը միաձայն վորոշեց կոլեկտիվ հիմնել։ Յեվ շուտով կոլեկտիվը կազմակերպվեց։

Զքավոր գյուղացիներն ազատ շունչ քաշեցին։ Կոլեկտիվի միացյալ աշխատանքը նրանց դրությունը լավացրեց։

Ճալա գյուղում շուտով տրակտոր եկ յերևաց։

Շաքրոն եր աշխատում տրակտորի վրա։ Տրակտորը շուտով ակոսեց գյուղի վարելահողերը։

Տրակտորի ձայնին ուրախ-ուրախ ձայնակում եր Շաքրոյի յերգը.

Տրակտորների շարանն յեկավ
Ռ. մեր գյուղի միջովն անցավ.
դեհ, ակոսիր, այ տրակտոր ջան,
առանց գոմշի, առանց յեզան։

Առաջադրություն. Պարզեք, թե ինչ ոգնություն է հասցնում ձեր գյուղին Կարմիր բանակը։

Հող վարելու գործիքները հնում

Հող վարելու առաջին գործիքը սրածայր փայտն եր։ Վայրենի մարդն այդ գործիքով եր հողը փորում։ Մի քիչ փորում եր նա հողը և մեջը հատիկներ լցնում։

Այնուհետև նա այդ գործիքն ավելի կատարելագործեց—փայտի վրա վոտք դնելու հարմարություն ստեղծեց և այդպիսով ավելի հեշտացրեց իր աշխատանքը։

Բայց յերևակայում եք, թե ինչքան ժամանակ պետք է կորցներ հին մարդը մի փոքր հողամաս փորփրելու համար։



Հետագայում նա ավելի ու ավելի կատարելագործեց իր գործիքը։ Փայտից բահ ու քլունգ շինեց ու ծայրին քար ամրացրեց։ Բնական է, նման գործիքով հողը շատ խորը փորել չեր կարող։ Այնուհետև նա վարժվեց կոճղ գործածելուն։ Կոճղը ծայրին սուր փայտ ուներ։ Կոճղը քաշ եյին տալիս

մի քանի մարդ։ Նրանք դեռ անասուն չեյին պահում, ուստի իրենք եյին քարշ տալիս կոճղը։ Կոճղը ակոսում եր հողը։ Սա արդեն հող վարել է նշանակում։

Բայց յերբ մարդը սովորեց անասուն պահել, նրա աշխատանքն ավելի հեշտացավ։ Մարդու փոխարեն այժմ գութանին անասուն եյին լծում։ Հետզհետե մարդիկ ավելի ու ավելի եյին կատարելագործում հող վարելու գոր-

ծիքը։ Վերջապես կարողացան նաև յերկաթ գտնել, ոգտագործել։ Մարդը սուր յերկաթ հագցրեց փայտին և հող վարելու գործիքին արորի ձև տվեց։



Իսկ այսոր,

«Անսահման դաշտում-հովտում
Յերկաթե յեզն է աղմկում»։

Արորին և գութանին տրակտորն է փոխարինել, վորը

Վարում, ցանում, կապում...
Նրա փառքն ու գովքն է
Յերգվում, լսվում...



Ելեfտրականությունը գյուղատնտեսության մեջ

Դուք գիտեք, յերեխաներ, վոր Խորհրդային իշխանությունը հնգամյա պլան ունի։ Այս պլանով մեր յերկրում շատ ու շատ ֆաբրիկա-գործարաններ պետք է կառուցվեն։ Իսկ ֆաբրիկա-գործարաններ աշխատեցնելու համար ելեքտրական շատ մեծ ուժ է պահանջվում։

Ելեքտրական ուժը մենք ելեքտրակայաններից ենք ստանում։ Դրա համար հնգամյա պլանը նախատեսել է ստեղծել 42 մեծ, ուժեղ ելեքտրակայան։

Այս կայանների շուրջը մեծ քանակությամբ ֆաբրիկա-գործարաններ պետք է կառուցվեն։ Կշինվեն նաև շատ ու շատ յերկաթգծեր, տրամվայներ։

Ելեքտրականությունը շատ մեծ ծառայություն է անում գյուղատնտեսությանը։

Այդ ույժի միջոցով հող են վարում, հերկում, ցանում, հնձում, կալսում, աղում, խոտ հարում, գետնախնձոր ցանում,—վերջապես ո՞վ կարող է թվել, թե ինչքան աշխատանք կարող են անել կոլխոզներն ելեքտրական ուժով։

Շուտով բոլոր գյուղերի սեփականություն կդառնա այս զարմանալի ույժը։

Ինչքա՞ն կարագանա և կհեշտանա աշխատանքը։

Կոլխոզնիկն այն ժամանակ ավելի քիչ յեռանդ ու ժամանակ է գործ դնելու, բայց ավելի շատ արդյունք է ստանալու։

Այդ ժամանակ մեր ժողովրդական տնտեսությունն ավելի կմեծանա, կծաղկի, կզարգանա։

Կան այնպիսի կոլխոզներ, վորտեղ կոլտնտեսուհին ելեքտրական սանրով է սանրում և ելեքտրական մեքենայով է կթում կովը։

Մեքենան է կթում, իսկ կինը միայն հետևում է։

Առաջադրություն. Պարզեք, թե ինչպես է ոգտագործվում ձեզնում ելեքտրականությունը գյուղատնտեսության մեջ։

Հոկտեմբերյան հեղափոխությունը փոխեց կնոջ դրությունը

Հոկտեմբերյան հեղափոխությունը հիմնովին փոխեց կնոջ դրությունը մեզանում։

Կինն այսորվա շինարարության մեջ շատ մեծ մասնակցություն ունի։

Չկա մի աշխատանք, վորին կինը չմասնակցի։

Այսոր կինն անցել է պատասխանատու աշխատանքների, կինը բանվոր է գործարանում, կինը մեքենավար է և այլն. նա ավտոմոբիլ, տրամվայ գնացք է աշխատեցնում։

Սրա հետ միասին նրա աշխատավարձը հավասար է տղամարդու աշխատավարձին։

Վորպեսզի կնոջ աշխատանքը չխանգարվի, Խորհրդային իշխանությունը բաց է արել մանկամսուրներ, մանկապարտեզներ, մանկահրապարակներ և այլն։

Այդտեղ պահում են մանուկներին, յերբ նրանց մայրերն աշխատում են։

Բայց այդպես չեր առաջ։

Այն ժամանակ կինը չեր կարող հեռանալ տանից։

Նա միայն տուն եր պահում, կերակուր յեփում։

Նա հասարակական աշխատանքներին մասնակցելու իրավունք չուներ։

Առաջ կնոջ աշխատանքը քիչ եր գնահատվում. միևնույն աշխատանքի համար կինը տղամարդուց շատ պակաս աշխատավարձ եր ստանում։

Այսոր ել նույն այդ դրության մեջ է կինը կապիտալիստական յերկրներում։

Մայրս մեքենավար է

—Ինչ գործի յե մայրդ,—հարցրեց փոքրիկ Ալիկը Մարոյին։

—Մայրս ուսուցչուհի յե,—պատասխանեց Մարոն։

—Իսկ իմ մայրը մեքենավար է,—ասաց Ալիկը,—նա շոգեմեքենա յե բանեցնում։

—Սուտ ես ասում, ինչպես կարող է մայրիկդ մեքենավար լինել։ Միայն հայրիկներն են մեքենաներ բանեցնում,—վրա բերեց Մարոն։

—Սուտ չեմ ասում, Մարո, ճիշտ եմ ասում։

—Իհարկե, սուտ ես ասում,—ավելացրեց Պետիկը.—յես ել եմ մեքենավար տեսել—նա տղամարդ է։

* * *

Ալիկը վիրավորվեց։ Նա տուն վերադարձավ։

Մայրը տանը չեր, հաճախ ուշ եր վերադառնում։

Յերեկոյան դեմ մայրը տուն յեկավ։

Ճիշտ է, նրա ձեռներն ու շորերը ձեթի, մրի մեջ կորած եյին ու սեվացած, բայց դրա փոխարեն նա շատ ուրախ եր, ժպտերես։

—Ինչպե՞ս ես, փոքրիկս, հո չտխրեցի՞ր,—փաղաքշական ձայնով հարցրեց մայրը։

—Մայրիկ, ընկերներս չեն հավատում, վոր դու մեքենավար ես,—դանդաղեցրեց Ալիկը։

Մայրը հանգստացրեց նրան և խոստացավ իր փոքրիկ Ալիկին ընկերների հետ «դեպո» տանել և ցույց տալ, թե ինչպես է աշխատում ինքը շոգեմեքենայի վրա։

* * *

Ալիկի մայրն իր հանգստի որը յերեխաներին «դեպո» տարավ։

Յերբ Պետիկն Ալիկի մորը յերկաթգծի ծառայողի գլխարկով և շորերով տեսավ, զարմացած նայեց Մարոյին։

—Ճիշտ վոր մեքենավարի նման ե,—փսփսաց Պետիկը նրա ականջին։ Նրանք հասան «դեպո»։

Զորս կողմը լիքը շոգեմեքենաներ ու վագոններ եյին։

Աժեն տեղ շարժում, աղմուկ։

Ճանապարհի վրա նշաններ են անում, սուլում, փող փչում։

Ալիկի մայրը յերեխաներին ծանոթացրեց «դեպոյի» հետ. նա ցույց ե տալիս և բացատրում ամեն ինչ։

Հետո բոլորին ել շոգեմեքենա նստեցրեց։



Շոգեմեքենան փնչում ե, գոլորշի արձակում, աղմկում։

Ալիկի մայրը շոգեմեքենան դեպոյից դուրս բերեց ու գծի վրա կանգնեցրեց։

—Հիմի ինչ կասեք,—հանդիմանեց Ալիկն ընկերներին,—յես սուտ եյի ասում։

Յերեխաներն ուրախ-ուրախ Ալիկի մոր հետ տուն վերադարձան։

Առաջադրություն. Գրեք, թե ինչպես փոխեց Հոկտեմբերյան հեղափոխությունը կնոջ դրությունը։

Մեր դպրոցի շեփը մետաքսի գործարանն է

Մեր դպրոցը կցված ե մետաքսի գործարանին։ Մենք շուտ-շուտ ենք լինում այդ գործարանում և ոգնում մեր ավագ ընկերներին։

Այս գործարանը մետաքս ե գործում, իսկ պատրաստի թելն ուրիշ տեղից ե ստանում։

Գործարանը մի քանի բաժանմունք ունի։

I. Զուլիականոց

Մեքենաների աղմուկը չի թողնում կողքիդ խոսողին լսես։ Աշխատանքը յեռում ե։ Հսկայական սենյակում ահագին քանակությամբ գործելու մեքենաներ են շարված։ Բարակ թելերի ցանցի միջով մաքոքն ե գնում-գալիս։



Կայծակի արագությամբ կտորն ե գործվում։ Յերկու-յերեք մեքենայի մի մարդ ե հետևում։

Ինչքան ե հեշտացել աշխատանքը

Յեթե առաջ հասարակ դազգյահի վրա մի մարդը հինգ ժամում միայն հինգ մետր եր գործում, նոր մեքենան 10 անգամ ավելի շատ գործ ե կատարում։

Մետաքսի կտորը պատրաստելուց հետո, ներկելու բաժանմունք կամ ներկարան են տեղափոխում։

II. Ներկարան

Ինչքան էլ տաք է այստեղ։ Շնչելն անգամ դժվարանում ես։ Գոլորշու ժեջ է կորել ամեն ինչ։ Մի քայլի վրա մարդու չես նկատում։ Դժվար է այստեղ աշխատել։ Դրա համար էլ այս բաժանմունքի բանվորներն ավելի մեծ աշխատավարձ են ստանում։



Բացի ավելի աշխատավարձից, նրանք ստանում են կաթ, ձու, կարագ։

Այդ ահագին, անծայր սենյակում խոշոր-խոշոր կաթսաներ են շարված։ Սրանց մեջ են ներկվում մետաքսե գործվածքները։

Կաթսաներից մի քանիսում կարմիր ներկ է պատրաստված, մյուսներում կապույտ, կանաչ և այլն։

Գործվածքը չորանալուց հետո տեղափոխվում է հարթուկանոց։

III. Հարթուկանոց

Զկարծեք, թե այստեղ մարդու ձեռքով է կտորը հարթուկվում։ Վոչ։ Խոշոր մեքենաները մի ակնթարթում ահագին քանակությամբ մետաքսեղեն են հարթուկում։

Այստեղ մետաքսը թե հարթուկվում է և թե փաթաթվում և հետո տեղափոխվում մի այլ բաժանմունք, որտեղ նկարազարդվում է, կամ, ինչպես ասում են, կտորը դաջում են։

IV. Դաջելու բաժանմունքը

Ահագին, յերկար սեղանների վրա զանազան գույների մետաքս է փռված, որի վրա տեսակ-տեսակ նկարներ են դրոշմվում՝ տերևներ, բողբոջներ, գծեր և այլն։





* * *

Գործարանին կից մանկամսուր է բացված, որտեղ գործարանի բանվորուհիները մինչև աշխատանք վերջացնելը, թողնում են իրենց փոքրիկ յերեխաներին։ Այստեղ հետևում են, կերակրում փոքրիկներին։ Մայրերը ժամանակ առ ժամանակ գալիս են իրենց ծծկեր յերեխաների մոտ և ծիծ տալիս։ Այդ փոքրիկների համար մեր դպրոցը շատ խաղալիքներ և պատրաստել։

Գործարանին կից բանվորներն ստեղծել են բավական մեծ բանջարանոց։ Մեր դպրոցի աշակերտները հաճախ գալիս են այստեղ և աշխատում բանջարանոցում։

Գարնան ամիսներին մենք բանվորների հետ միասին փորեցինք ու ցանեցինք բանջարանոցը։ Յերբեմն-յերբեմն գալիս ենք այստեղ և քաղհանում, ջրում, բանջարեղեն հավաքում և այլն։

Դրա փոխարեն բանվորները շատ բանով են ոգնում մեր դպրոցին։ Մեր դպրոցի մանկապարտեզի համար նրանք աթոռներ և սեղաններ դնեցին, մեզ համար արհեստանոց սարքեցին և այլն։

Ահա թե ինչպիսի յեղբայրական կապ ենք հաստատել մեր ավագ ընկերների հետ։

Մանկամսուր

Գործարանի շչակը բանվորներին աշխատանքի հրավիրեց։

Փողոցը կենդանություն ստացավ։

Բանվոր-բանվորուհի գործարան են շտապում։ Կանայք հետները տանում են նաև իրենց փոքրիկ յերեխաներին։

Ահա և մանկամսուրը։ Ծառայող կանայք ընդունում են յերեխաներին և տեղավորում մանկամսուրում։

Մայրը յերեխային նստեցնում է բարձր սպիտակ սեղանի վրա ու մերկացնում։ Ծառայողները զննում են յերեխային, քննում նրա առողջու-



թյունը։ Այնուհետև յերեխաներին համապատասխան հագուստ են հագցնում և տանում զանազան սենյակներ։

Մայրերը գնում են աշխատանքի։

Ծծկեր յերեխաներին առանձին սենյակ է հատկացրած։

Սենյակում շարված են միևնույն չափի ու գույնի մահճակալներ։ Յերեխաներին պառկեցնում են այս մահճակալներում։

Նոր մանգալ սկսողների համար ել առանձին սենյակ կա։

Սենյակում ճաղերով բաժանված առանձին տեղ կա, վորտեղ մի տարեկան քաղաքացիներն իրենց վոտի ուժն են փորձում, սողում, նույնիսկ խաղում։

Ավելի փոքրիկ յերեխաների համար ել առանձին սենյակ կա։ Այստեղ նրանք խաղում են, ինչվոր բան են կառուցում, ծիծաղում, լալիս և յերբեմն կռվում։

Յերեխաները նախաճաշում ու ճաշում են սեղանատանը։

Ինչքան ել ծիծաղելի յեն դրանք։ Տեսեք, ով կարողանում է նստել, բազմել է և իր փոքրիկ թաթիկներով կերակուր է անուշ անում։

Ճիշտ է, դժվարությամբ են ուտում, բայց այդ վոչ մի նշանակություն չունի նրանց համար։

Չէ՞ վոր նրանք իրանք են ուտում, առանց ուրիշի ոգնության են ուտում։

Յերբեմն ապուրը թափում են կրծքներին, քիթ ու մռութ շիլի մեջ թաթախում, բայց այդ ել վոչինչ—կվարժվեն, կսովորեն։

Ճաշից հետո յերեխաներն ամբողջ մեկ ու կես ժամ քնում են։ Սա մեռյալ ժամ է կոչվում։

Աշխատանքը վերջացնելուց հետո մայրերը գալիս են իրենց յերեխաներին տանելու։

Յերեխաներին նորից հագցնում են տանից բերած շորերը և մինչև հետևյալ առավոտը մնաս բարով ասում մանկամսուրին։

Զարմանալի հանգիստ և կարգ-կանոն է տիրում մսուրում։

Ամեն ինչ՝ ճաշ, խաղ, քուն, զբոսանք՝ իրեն ժամանակին է լինում։

Յերեխաները շատ են սիրում խաղալիքներ, ժանավանդ փոքրիկ սայլեր, ոահնակներ, թիակներ, արկղիկներ, գնդակներ և այլն։

Նրանց համար պետք է խաղալիքներ շինեք։

Շատ բարդ նյութ չի պահանջվում այդ բանի համար—տախտակի կտորներ, սովարաթուղթ, շորի կտորտանք, անպետք արկղիկներ և այլն։

Առաջադրություն. Եքսկուրսիա կազմակերպեք դեպի մանկամսուր և ծանոթացեք այնտեղի կյանքի հետ։

Ինչ տվեց մանուկներին Հոկտեմբերյան հեղափոխությունը

Դուք լավ գիտեք, թե ինչ վատ դրության մեջ էին աշխատավորության յերեխաները Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ։ Նրանց ուսման, դաստիարակության ու առողջության մասին վոչ թագավորն էր մտածում, վոչ էլ նրա չինովնիկները։

Ձեզ պես փոքրիկ յերեխաները վոչ թե դպրոցում նստած սովորում էին, այլ առավոտից մինչև յերեկո աշխատում էին կեղտոտ ու փոշոտ գործարաններում։

Ցեվ շատ էլ դժվար աշխատանքներ կատարում։

Ո՞վ գիտե, ինչքան յերեխա յե հիվանդացել, մեռել այդ անտանելի աշխատանքից։ Այսոր այդպես չե։

Խորհրդային իշխանությունը առանձին խնամք է տանում յերեխաների վրա։

Արգելված է մինչև 16 տարեկան յերեխաներին գործարաններում աշխատեցնել։

Գյուղերում և քաղաքներում յերեխաների համար անթիվ դպրոցներ, մանկապարտեզներ, մանկամսուրներ, մանկահրապարակներ, ակումբներ, մանկական կինո թատրոններ են բացված։ Ահագին քանակությամբ մանկական գրականություն ու թերթեր են հրատարակվում։

Բացի այս բոլորից Խորհրդային իշխանությունն առանձին ուշադրություն է դարձնում յերեխաների առողջության վրա։ Ամառը յերեխաներին ամառանոցներ է ուղարկում բոլորովին ձրի, դպրոցներում նրանց համար տաք նախաճաշեր կազմակերպում, բժշկական ձրի ոգնություն և դեղեր մատակարարում և այլն։

Ցերեխան այսոր փոքրիկ շինարար է։

Հասակավորի հետ միասին նա աշխատում է սոցիալիզմ կառուցելու համար։

Պատանի հանդիսատեսների թատրոն

Մենք շատ ենք սիրում պատանի հանդիսատեսների թատրոնը։

Այնտեղ շատ լավ ներկայացումներ են տալիս։

Անհամբեր սպասում ենք մեր աբոնեմենտի ներկայացումներին։

Մենք այնտեղ տեսնում ենք սոցիալիստական նկարներ, հին կենցաղը և անմիջապես համեմատում մեր կենցաղի, նոր կյանքի, նոր շինարարության հետ։

Ի՞նչ սոսկալի յե յեղել կյանքը հնում։

Ինչքան մարդ է կորել սնոտիապաշտության պատճառով, ինչպես են տանջել, չարչարել թագավորի ծառաներն աշխատավոր ժողովրդին։

Ներկայացումները շուտ են սկսվում և շուտ էլ վերջանում։ Այդ նրա համար է, վոր փոքրերը չուշանան, ժամանակին տուն վերադառնան։

Ներկայացումներին մեզ հետ են լինում նաև մեր ղեկավարները։

Ներկայացումների մասին խմբակում զրույց ենք կազմակերպում։

Ամեն մի խմբակ հատուկ բրիգադ ունի, վորը հետևում է, թե ինչպես ենք մեզ պահում թատրոնում։

Առաջադրություն. Դիտած ներկայացման մասին խմբակում զրույց և քննադատություն կազմակերպեք։ Ի՞նչը հավանեցիք և ինչո՞ւ։ Ի՞նչը չհավանեցիք ու ինչո՞ւ։

Պատանիների կուլտուրայի յեվ հանգստի այգին

Ամառը յերեխաներից շատերը գյուղ չեն գնում, մնում են քաղաքում։

Խորհրդային իշխանությունն անուշադիր չեր կարող թողնել քաղաքում մնացող յերեխաներին և նրանց համար հատուկ այգի յե ստեղծել։

Այգում շատ խելացի զվարճություններ ու խմբակներ են կազմակերպված։

Այստեղ կան ֆիզկուլտուրայի, դրամատիկ խմբակներ, կա գրադարան, ընթերցարան և այլն. կազմակերպվում են նաև զանազան խաղեր։

Այս նույն այգումն է նաև մանկական հրապարակը,

Մանկահրապարակում տեղավորված են չորսից ութ տարեկան յերեխաները։

Նրանց ձրիաբար կերակրում են, զբաղեցնում, նրանց համար գրքեր կարդում և այլն։

Ցերեխաներն այս այգումն են լինում առավոտյան ժամի 9-ից մինչև յերեկոյան ժամի 4-ը։ Նրանց ծնողները հանգիստ սրտով են աշխատանքի գնում, վորովհետև համոզված են, վոր իրենց յերեխաներն անխնամ չեն մնալու։

Աշխատանքը վերջացնելուց հետո, ծնողները յերեխաների հետ տուն են վերադառնում։

Ցերեկոներն այս այգում լինում են ներկայացումներ, կինո, խաղեր և այլն։

Բացի այս բոլորից կազմակերպվում են նաև եքսկուրսիաներ։

Մանկական հրապարակ

Գյուղում կոլխոզնիկների յերեխաների համար մանկական հրապարակ բացվեց։

Այստեղ են բերում կոլտնտեսուհիներն իրենց յերեխաներին։

Հրապարակում խնամողներ շատ կան։ Հրապարակում լավ են կերակրում յերեխաներին։

Հրապարակում տեղավորում են 4—5 տարեկան յերեխաներին։ Յերեխաներին հրապարակ բերելուն պես փոխում են նրանց շորերը։

Յերեխաները մնում են հրապարակում, մինչև մայրերն իրենց աշխատանքը վերջացնեն։

Փոքրերը բացի կանոնավոր խնամքից և կերակրից ունեն նաև խաղալիքներ։

Աշխատանքը վերջացնելուց հետո մայրերն իրենց յերեխաներին տուն են տանում։

Առաջադրություն. Յեթե ձեր գյուղում մանկական հրապարակ չկա, խնդրեք գյուղխորհրդին, վոր կազմակերպի։

Գրադարանում

1. Իմացեք գրադարանի հասցեն։
2. Ո՞ւմ անունով է կոչվում գրադարանը։
3. Ի՞նչ է պահանջվում գրադարանից ոգտվելու համար։
4. Քանի՞ որով կարելի յե գիրքը տուն տանել։
5. Ցե՞րը և բաց լինում գրադարանը։
6. Գրադարանում մանուկների համար ընթերցանության և զրույցի ժամեր կա՞ն թե վոչ
7. Եքսկուրսիաներ, ցուցահանդեսներ կազմակերպվո՞ւմ են թե վոչ։

Գրադարանում լսածներդ գրի անցրեք։

Դասարանում հայտարարություն փակցրեք և ցույց տվեք գրադարանի հասցեն և այն ժամերը, յերբ գրադարանը բաց է լինում։

Շարժական ընթերցարանը

Գյուղը շարժման մեջ է։ Բոլորն ել վոտի՛ վրա յեն, բոլորն ել աշխատում են—մեծ, փոքր, կին, տղամարդ։

Ահա այնտեղ կարմիր շեմարաններն են լցվում առատ բերքով։

Այստեղ խաղողի անթիվ սայլերն են շարժվում։ Յերեխաներն ուրախուրախ մասնակցում են մեծերի աշխատանքին։

—Գալիս են, գալիս,—լսվեց այս ու այն կողմից, և յերեխաներն աղմուկով դիմավորեցին գրքերով բարձած յերկու սայլի։

Կանաչ ճյուղերով զարդարած սայլերը լի յեն գրքերով։

Սայլի վրա կարմիր դրոշակ է ծածանվում։

Այս սայլերը շրջում են գյուղից գյուղ և քաղաքից բերած գրքերը բաժանում խրճիթ-ընթերցարաններին և գյուղացիներին։

Գրքերը կազմված են գյուղացիներին հասկանալի լեզվով և պատմում են, թե ինչպես պետք է բերքը հավաքել, պահել, ինչպես պետք է խնամել, բազմացնել անասուններին և այլն։ Նման շատ խնդիրների մասին են պատմում այդ գրքերը։

Գյուղն ականատես է, թե ինչպես է Խորհրդային իշխանությունն աշխատում գյուղի համար, ինչպես է ուզում բարելավել գյուղացու կյանքն ու կենցաղը։

Ուսումն ու գիտությունը մեզնում

Շատ մեծ գումարներ են ծախսվում այսոր ժողովրդական լուսավորության վրա։

Ինչպես գիտենք, ցարական իշխանության ժամանակ բանվորներին և գյուղացիներին ուսման անարժան եյին համարում։

Հին կառավարությունն աշխատավորներին ոգտագործում եր միմիայն իր կյանքը բարելավելու համար։

Հին կառավարությունը միլիոնավոր անգրագետ ու տգետ ժողովուրդ թողեց Խորհրդային իշխանությանը։

Իսկ սոցիալիստական յերկրի շինարարության համար անհրաժեշտ են գիտակից, գիտուն, ուսում առած մարդիկ։

Ահա թե ինչու համար են բացվել ու այսոր ել բացվում բազմաթիվ դպրոցներ, մանկապարտեզներ, ֆաբրիկա-գործարանային դպրոցներ, տեխնիկումներ, բանֆակներ, յեղաժշտական, նկարչական, բարձրագույն և այլ դպրոցներ։

Այս դպրոցներում սովորում են բանվորներն ու նրանց զավակները։

«Յեվ վոչ մի անգրագետ։ Վոչվոք դպրոցից դուրս չպետք է մնա»։

Այս է խորհրդային յերկրի լոզունգը։

Յեվ խորհրդային ամբողջ յերկրում շատ շուտով վոչ մի անգրագետ չեք գտնի։

Լուսավորության խնդիրը հնգամյա պլանի խնդիրներից մեկն է։

Այսոր արդեն մենք ուսումն ընդհանուր և պարտադիր ենք հայտարարել։

Լիկկայան

Սարի լանջին գյուղի դպրոցի գեղեցիկ շենքն է գլուխը վեր պարզել։

Առավոտներն այդ դպրոցում փոքրերն են սովորում, իսկ յերեկոները նրանց անգրագետ ծնողները։

Բացի գրել-կարդալուց գյուղացիներն այդ դպրոցում շատ հետաքրքիր և անհրաժեշտ բաներ են սովորում։

Այստեղ նրանք ծանոթանում են հին, ճահճացած, փտած կյանքի հետ, յերբ տգիտությունն աշխատավորներին հարուստների ստրուկ եր դարձրել։ Այստեղ նրանց բացատրում են, վոր զատկի և ծննդի տոները քահանաներն են հնարել իրենց դրպանները հաստացնելու և ցարական կառավարության հիմքերն ամրապնդելու համար։

Խավարի մեջ խարխափող ժողովրդին վախեցնում եյին աստծու անունով, վորն իբր թե ուղարկել է թագավորին ժողովրդի վրա իշխելու և նրանց կառավարելու։

Հենց այս դպրոցումն են գյուղացիները ծանոթանում առողջապահության վերաբերյալ խնդիրների հետ։ Նրանց բացատրում են, թե ինչպիսի կյանք պետք է վարեն, վորպեսզի առողջ լինեն։

Գյուղացիները շատ են հետաքրքրվում բուրժուական յերկրների կյանքով։ Հաճախ գյուղացիների համար կարդում կամ գրույց են կազմակերպում այդ յերկրների մասին։



Մի կողմից հարուստների շռայլ կյանքը բուրժուական յերկրներում, իսկ մյուս կողմից աշխատավորության աղքատ ու ստրուկ վիճակը շատ է բարկացնում գյուղացիներին։

Գյուղատնտեսական խնդիրների մասին ել են տեղեկություն տալիս այդ դպրոցում։ Շատ թանգարժեք տեղեկություններ են ստանում գյուղացիներն այն մասին, թե ինչպես պետք է մշակեն հողը՝ բերքի չափը ժեծացնելու համար, ինչպես պետք է խնամեն ու մշակեն այգին, բանջարանոցը, ինչպես պետք է լավացնեն բույսերի և անասունների տեսակները։

Այս նույն դպրոցումն է ներկայացումներ տրվում գյուղացիների համար։

Ահա թե ինչ կյանք է յեռում այս դպրոցում։

Մեր կուլտարշավը

Յերեկ մեր դպրոցում ժողով կար։

Ժողովի նախագահն եր չորրորդ խմբի աշակերտ Դավթյանը, իսկ քարտուղարը՝ Զաքարյանը։ Ուսուցիչը զեկուցեց մեր կուլտարշավի մասին։ Նա ասաց, վոր մենք պետք է մեծ ուշադրություն դարձնենք մեր գյուղի սանիտարական վիճակի վրա։

Ուսուցիչը շեշտեց, վոր շատերը չեն հաճախում անգրագիտություն վերացնող դպրոցը։ Յերկու յերեք ընտանիք ել կան,—ավելացրեց նա,—վորոնք հարմարություն չունեն փոքրիկ յերեխաներին տանը թողնելու և այդ պատճառով դպրոց չեն գալիս։ Ասաց նաև, վոր լիկկայանի մի քանի աշակերտ գիրք չունեն և այդ պատճառով նրանց աշխատանքները շատ են տուժում։

Ժողովը վորոշեց բրիգադներ ընտրել։ Ընտրվեց չորս բրիգադ։ Այս բրիգադների մեջ մեր խմբակից ել չորս ընկեր մտան։

Բրիգադները պետք է ուսումնասիրեն գյուղի սանիտարական դրությունը և պարզեն, թե ով չի հաճախում լիկկայան և ինչ պատճառով։

Ժողովը վորոշեց նաև ոգնել լիկկայանի աշակերտներին գրքերով, ինչպես և գրել-կարդալ սովորելու գործում։ Դրա հետ միասին մենք պարտավորվեցինք նրանց համար գրքեր կարդալ։

Գալով այն ընտանիքներին, վորոնք փոքր յերեխաներ ունեն և այդ պատճառով կանոնավոր չեն հաճախում լիկկայան, վորոշեցինք «հանձնարարել չորրորդ խմբի աշակերտներին յերեկոները հերթով գնալ այդ ընտանիքները և յերեխաներին պահել, վորպեսզի նրանց ծնողները դպրոց հաճախելու հնարավորություն ունենան։

Առաջադրություն. Մասնակցեք կուլտարշավին։

Խրճիթ-ընթերցարան

Ցերկար տարիների ընթացքում, գյուղի ծայրին լուռ ու մունջ, մենամենակ կանգնել եր գյուղի յեկեղեցին։

Գյուղացիները մտնում եյին յեկեղեցի, խաչակնքում յերեսները, խաչ ու ավետարան համբուրում և ժամերով լսում քահանայի խոսքերը։

Քահանան ամեն անգամ միևնույն բանն եր ներշնչում նրանց։

Նա կրկնում եր շարունակ. «Ժողովրդին պահողն աստված է, թագավորն ու կալվածատերերը ձեր տեր ու տիրականն են, այդ պատճառով պետք է վախենաք նրանցից, հարգեք ու պատվեք ձեր այդ տերերին»։

Հոգնած ու դաղրած գյուղացիները լսում եյին իրենց համար անհասկանալի այդ խոսքերը և տուն վերադառնում։

Ժողովուրդը տեսնում եր, որ յեկեղեցում լսած խոսքերը վոչինչ չենն ասում կամ սովորեցնում իրենց կյանքը բարելավելու մասին, որ քահանայի ասածներն ամենևին չեն համապատասխանում իրականությանը։

Բայց դեռ ևս նրանց համար ամեն ինչ պարզ չեր, ամեն բան բացատրել չեյին կարողանում։

Բայց Հոկտեմբերյան հեղափոխության ալիքները գյուղին ել հասան և նոր կյանքն իր դրոշմը դրեց նաև գյուղի վրա։



Այսոր, այնտեղ, վորտեղ մի ժամանակ յեկեղեցին եր կանգնած, միահարկ գեղեցիկ տուն է յերևում։

Տգիտության խավարից դուրս յեկած գյուղացիները շուտով գիտակցեցին, վոր յեկեղեցին հարկավոր չի ու վորոշեցին սեփական ձեռքով քանդել այն։

Գյուղխորհուրդը յեկեղեցու շենքը խրճիթ-ընթերցարանի վերածեց։

Այստեղ շատ գիրք կարելի յե գտնել։ Գյուղացիները կարդում են այդ գրքերը և ծանոթանում աշխարհի անց ու դարձին։

Այստեղ կազմակերպվում են զրույցներ և զեկուցումներ հին ու նոր կենցաղի և գյուղատնտեսական խնդիրների մասին։

Բակի մեջտեղը կանգնած է ռադիոն։

Ռադիոն գյուղացիներին կարևոր տեղեկություններ է տալիս։

Գյուղացիները շատ են սիրում խրճիթ-ընթերցարանը։ Բոլորն ել՝ մեծ թե փոքր շատ են հետաքրքրվում խրճիթ-ընթերցարանով։

Առաջադրություն. Այցելեք խրճիթ-ընթերցարանի աշխատանքներին. պլակատներ և լոզունգներ պատրաստեք նրա համար։

Խորհրդային իշխանությունը հոգում է աշխատավորության առողջության մասին

Աշխատավորությունը պետության հիմքն է կազմում։

Յեթե այս հիմքն առողջ և կայուն յեղավ—յերկրի շինարարությունը ճիշտ և արագ քայլերով առաջ կգնա։ Դրա համար ել աշխատավորության առողջության վրա մեծ ուշադրություն ենք դարձնում։

Աշխատանքային որը գործարաններում յոթ ժամով է սահմանափակված։

Մի շարք գործարաններում, որինակի համար՝ ծխախոտի գործարանում, բանվորները կաթ են ստանում։

Աշխատավարձը տարեցտարի մեծանում է։

Աշխատավորներն ապահովագրված են։

Հիվանդության դեպքերում նրանք ոգտվում են բժշկական ձրի ոգնությունից և դեղերից։

Հանգստանալու համար նրանք ուղարկվում են հանգստի տներ, իսկ հիվանդանալու դեպքում՝ սանատորիաներ և դիսպանսերներ։

16 տարեկանից փոքրերին արգելված է աշխատեցնել գործարաններում։

Բանվորների համար շատ տներ են կառուցվել ու կառուցվում։ Այս տները թե լուսավոր են և թե չոր։

Բնակարաններն ունեն բաղնիքներ, ելեքտրականություն և այլն։
Այս բոլորը շատ են նպաստում բանվոր դասակարգի առողջությանը։

Հանգստի տունը

Գարունն յեկավ, ոդը տաքացավ։
Հանգստի տները կյանք առան։
Մաքրում են, սրբում, ներկում, ամեն ինչ կանոնավորում։
Մայիսի կեսերին բամբակի գործարանի բանվորուհի Թինան Ցեմի հանգստի տունը հյուր յեկավ։
Թինան հարվածային բանվորուհի յե։

Թինայի յեռանդուն, անդադրուն աշխատանքի մասին ամենքը գիտեն գործարանում։
Նրա յեռանդուն աշխատանքը վոգևորում է ընկերներին։
—Ապա ձեզ տեսնեմ, ընկերներ,—կանչում եր նա,—ամեն մի բոպեն նպատակահարմար ձևով ոգտագործենք և կտեսնեք, վոր թշնամին մեզ վոչ մի վնաս չի կարող տալ։
Այսպիսի մեծ աշխատանքից Թինան թուլացավ։
Սրա համար տեղկոմն առաջին հերթին Թինային ուղարկեց հանգստի տուն։
Կանոնավոր սնունդն ու խնամքը շուտով Թինայի առողջությունը վերականգնեցին։

Մեծ մասամբ Թինան մաքուր ոդում եր լինում։ Թինային գրավում եյին սոճու անտառները, սառը պարզ աղբյուրները և մաքուր ոդը։
Ամբողջ ամիսը նա հանգստի տանն անցկացրեց։
Արտադրությունը Թինայի ներկայության պահանջն եր դնում։
Արդեն հանգստի ժամանակն անցնում եր։
Առողջ և կազդուրված ուժերով Թինան գործարան վերադարձավ։

ԿԻՆՈ ՆԿԱՐ «Ցերկու պատկեր»

5 բաժնով։

Հանգստի որն է։
Ցերեկվա ժամի 12-ը։
Անհագին քանակությամբ յերեխաներ են հավաքվել կինոյում։ Նկատվում է, վոր յերեխաներն անհամբեր սպասում են։ Նրանք նոր նկար պետք է դիտեն։
Աֆիշների վրա խոշոր տառերով գրված է.
«Ցերկու պատկեր»։
Մթնեց։ Լռություն տիրեց։

ՆԿԱՐ I.



Թուրք յեվ հայ աշխատավոր գյուղացիությունը լուռ ու մունջ տանում եր բազավորի ծանր լուծը միապետության ժամանակ։

Կանաչ սարի լանջին մի գյուղ է փռվել։
Այստեղ ապրում են հայեր և Թուրքեր։

Գրավիչ չեր գյուղի պատկերն անցյալում. գետնափոր խրճիթներ, պատառոտած հագուստներով գյուղացիներ, իսկ յերեխաները համարյա թե մերկ, խաղում են դռների առաջ։

Գյուղն աշխատում է։ Կալսում են։ Կալի շուրջը խուրձեր են յերևում։ Ծուլ-ծուլ պտույտ են գալիս անասունները, կամը քաշ տալիս։

Գյուղից հեռու, սարի վրա յերկու հովիվ վոչխար են արածացնում։

Յերկուսն էլ հայ են։ Նրանք սրինգ են նվագում։

Վոչխարները հարմարեցնում են իրենց քայլերը սրնգի ձայնին և կամաց-կամաց դեպի սարի գագաթը շարժվում։

Հոտը ցրվում է։ Հովվական յերկու շուն վազում են հոտի շուրջը և հավաքում ցրված վոչխարներին։

Սարի մյուս կողմը Թուրքերն են արածացնում իրենց վոչխարը։

ՆԿԱՐ II.

Մուր ուժերն այսպես եյին ազգային ատելություն ստեղծում աշխատավոր ժողովուրդների միջև։

Գյուղի գրասենյակն է։ Նստած են տանուտերն ու պրիստավը։ Նրանց առաջ յերկու մարդ է կանգնած։ Սրանք լրտեսներ են—վոստիկանության աշխատակիցները։

Ահա թե ինչ է հրահանգում Նրանց պրիստավը։

«Ապա, դուք գիտեք, թե ինչպես կկատարեք պատվերս. բուրքի շորեր կհագնեք յեվ կհարձակվեք հայ հովիվների վրա, մի քանի վոչխար կգողանեք ու կփախչեք։ Գիտեք, թե ինչքան անգիտակից են գյուղացիները, շուտով բակարդ կընկնեն։ Կկարծեն, թե բուրքերն են սպանել վոչխարներին։ Հայ ու բուրք կկռվեն, իրար կկոտորեն։ Մենք էլ այդ ենք ուզում։ Այսպես պետք է ջլատենք այդ անզգամների ուժերը։ Նրանք չեն հավանում մեր կառավարությունը, բայց այնպես կանենք, վոր հավանեն։ Մենք խելքի կբերենք նրանց։

Յերեկո է։ Հոգնած ու դադրած հայ հովիվները վոչխարները դեպի տուն են քշում։ Հանկարծ անտառից յերկու Թուրք են յերևում։



Դրանք շորերը փոխած խառնակիչներ են։

Դրանք կրակում են հոտի վրա և շտապ անհետանում։ Սպանվում է մի քանի վոչխար։ Սարսափած հոտը ցրվում է աջ ու ձախ։

Այսպես կատարեցին բազավորի չինովնիկները իրենց վրա դրված զզվելի պարտականությունը։

Այս դեպքից կատաղած, հովիվները լուր են տալիս գյուղին։

ՆԿԱՐ III.

Ամառային գիշեր է։ Լուսինն ազոտ լույս է տալիս շրջակայքին։ Ցերեկվա աշխատանքից հոգնած գյուղացիները խոր քնի մեջ են։ Դա Թուրքական գյուղն է։

Կալը լի է խուրձերով։ Անա ճանապարհի վրա յերկու սովեր յերևացին։ Նրանք գաղտագողի մոտենում են խուրձերին։

Դրանք այն հովիվներն են, վորոնց վոչխարները սպանել են ժողովրդի թշնամիները։

Անա մոտեցան նրանք խուրձերին։ Շտապ լուցկի վառեցին ու կրակ տվին խուրձերը։

Հովիվները փախչում են, թաղնվում։

Շուտով կրակի բոցը լուսավորում է շրջակայքը։ Շները սկսում են հաչել։

Գյուղացիները դուրս են թափվում։ Հուսահատ նայում են, թե ինչպես կրակը վոչնչացնում է նրանց քրանքի պտուղը։

Անսահման է նրանց վիշտը։ Համոզված են, վոր սովից կկոտորվեն։ Գյուղացիները լալիս են։

ՆԿԱՐ IV.

Ազգային վրեժն ու ատելությունը վարակել էր նույնիսկ փոքր յերեխաներին։

Անտառի ծայրին փոքրիկ գետակ է վազում։ Գետի ափին նստել են յերկու հայ յերեխայ և կարթով ձուկ վորսում։ Նրանց կողքին մի շուն է պառկել։ Վոչ շատ հեռու մի ման է դրված, վորի մեջ բռնած ձկներն են դցում։

Անա մեծ յեղբայրը՝ Սաքոն մի բավական խոշոր ձուկ բռնեց կարթով։ Նրան ուղնությանն է հասնում փոքրիկ յեղբայրը։ Նա յերկու ձեռքով բռնել է ձուկը։

Սաքոն ձուկը կարթից հանում է տանում է դեպի ամանը։

Մոտենում է Սաքոյին հասակակից Թուրք Հասանը։ Նա խլում է ձուկը և դցում գետը։ Հետո վոտով խփում է ամանին, ձկներով լի ամանը գետն է ընկնում։ Ցերեխաները սկսում են կռվել։ Ծեծում են իրար ինչքան ուժ ունեն։

Շատ սեվ որեր տեսավ աշխատավոր ժողովուրդը մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը։

Ցերեխաների քիթ ու բերանից արյուն է հոսում։



ՆԿԱՐ V.

Հոկտեմբերյան հեղափոխությունը վերջ տվեց ազգային ատելությանը։ Աշխատավոր ժողովուրդը հասկացավ, որ իրար հետ կռվելու բան չունեն յեվ որ ույժը միության մեջ է։

Գարնանային առավոտ է։ Արևը դեռ չի ծագել։ Ցերևում է նույն գյուղը։ Գյուղի հին խրճիթների փոխարեն կանգնել են դեղեցիկ տներ։

Գյուղի մեջտեղը մի տուն է բարձրանում հետևյալ մակագրությամբ՝

Գյուղխորհուրդ

Գյուղխորհրդից քիչ հեռու յերկհարկանի մի տուն է յերևում։ Սա դպրոցն է։

Գյուղի թաղամասերից մեկում խրճիթ-ընթերցարանն է յերևում։

Գյուղը զարթնում է։

Գյուղից վոչ շատ հեռու ընդարձակ դաշտերն են ձգվել։ Դաշտերում սահմանի նշաններ չեն յերևում։

Դա կոլեկտիվի դաշտն է։

Ահա կոլեկտիվի անդամները դաշտ դուրս յեկան միատեղ։

Սրանք հայեր և թուրքեր են։



Գալիս է կոլեկտիվի նախագահը—Սաքոն։ Սրան հետևում է նրա ազգականը—Հասանը։

Ցերեխա ժամանակ, ցնորվի մութ ուժերի, իրար բռնամի—այսոր ամենամտերիմ բարեկամներ են յեվ յեռանդով աշխատում են աշխատավորության գեղեցիկ ապագայի համար։



Ահա յերևաց տրակտորը։ Նա վարում է։

Մի կարմիր բանակային է տրակտորն աշխատեցնում։

Դա Սաքոյի փոքրիկ յեղբայրն է, վորին փոքրիկ հասակում Հասանը ծեծեց։

Տրակտորն արագությամբ ակոսում է։

Ուրախ են գյուղացիները։ Նրանք յերգում են։

VII. ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՄԵՐ ԿԱՊԸ ՆՐԱՆՑ ՀԵՏ

Մեր կապն այլ յերկրների պիոներների հետ

Խորհրդային յերկրի հոկտեմբերիկներն ու պիոներները մասնակից են հասարակական կյանքին։

Նրանք լծված են շատ ու շատ աշխատանքների և ոգնում են մեծերին սոցշինարարության գործում։

Հոկտեմբերիկներն ու պիոներները հավաքվում են կոլեկտիվներում։ Այստեղ հաճախ նրանք քննում են զանազան հարցեր։

Նրանք իրենց հագուստի ձևն ունեն։

Կապիտալիստական յերկրներում էլ պիոներներ կան, բայց բոլորովին այլ է նրանց դրությունը։

Բուրժուական կառավարությունը նրանց հալածում է։ Շատ տեղերում նույնիսկ արգելված է կարմիր փողկապ կրել։

Արգելված է նաև պիոներներին, մինչև 15 տարեկան հասակը, մասնակցել պիոներական հանդեսներին։

Կապիտալիստական յերկրներից մեկում բանտարկյալ հեղափոխականի պատվին պիոներները ցույց կազմակերպեցին։ Վոստիկանությունը ցրեց այդ ցույցը, իսկ ղեկավարներին ձերբակալեց ու բանտարկեց։

Այնտեղ պիոներները շատ մեծ պայքար են վարում կառավարության դեմ։

Այնտեղի կառավարությունը ճնշում է բանվոր դասակարգին։

Որինակ Չինաստանում Ջուլհականոցի բանվոր յերեխաները, վորոնց թվում և պիոներները, գործադուլ հայտարարեցին։ Գործադուլի պատճառն այն եր, վոր բոլորովին ապորինի կերպով մի քանի բանվոր յերեխա եյին հեռացրել աշխատանքից։

Գործադուլավոր յերեխաները պահանջում եյին վոչ միայն յետ ընդունել արձակվածներին, այլև աշխատավարձը մեծացնել, իսկ սրա հետ միասին պահանջում եյին, վոր գործարանատերերն ավելի լավ վերաբերվեն իրենց։

Ցեվ փոքրիկ հեղափոխականներն աշխատանքի չանցան, մինչև վոր գործարանի վարչությունը նրանց պահանջները բավարարեց։

Բուրժուական յերկրներում պիոներներն ոգնում են բանվորներին։ Նրանք այնտեղ ցրում են թռուցիկներ, կոչեր, լուր տալիս վոստիկանության գալու մասին և այլն։

Կապիտալիստական յերկրների պիոներները սերտ կապ ունեն Խորհրդային Միության պիոներների հետ։

Սրանք իրար մոտ պատգամավորներ են ուղարկում, ծանոթացնում միմյանց իրենց աշխատանքների հետ։

Որինակ նրանք իրենց պատգամավորներից մեկի միջոցով խորհրդային յերկրի պիոներներին հաղորդեցին հետևյալը.

—Մենք, պիոներներս, չնայած բոլոր դժվարություններին և հալածանքին, դարձյալ շարունակում ենք աշխատել։

Այս խոսքերի հետ միասին նրանց գրած նամակում ասված եր.

—Խորհրդային յերկրի սիրելի յեղբայրներ։

Մեր ցանկությունն է սերտ կապ ունենալ ազատ յերկրի զավակների հետ։ Ճիշտ է, մեզ այստեղ հալածում են, բայց մենք աշխատանքը շարունակում ենք, վորովհետև գիտենք, վոր մեր բռնած ուղին արդար է, ուղիղ և ճշմարիտ։

Մենք կպայքարենք, մինչև վոր հաղթանակենք։

Կեցցե Խորհրդային Միությունը։

Պատրաստ յեղեք։

Առաջադրություն. «Կարմիր Ծիլեր»-ում գտեք համապատասխան հոդվածներ արտասահմանյան պիոներների կյանքի մասին։

Համեմատեք ձեր դրությունը նրանց դրության հետ։

Տինգ-Ցուն

I.

Չինաստանում մի յերեխա յե ապրում՝ Տինգ-Ցու անունով։

Տինգ-Ցուն վորբ է։ Նա հայր չունի։

Անգլիական զինվորներից մեկն սպանել է նրա հորը։

Տինգ-Ցուն շատ է խղճում իր մորը։

Մայրը թույլ և հիվանդ կին է։ Փոքրիկ յերեխան կաշվից դուրս է գալիս, վոր մի կերպ թեթևացնի մոր հոգսերը, աշխատանքը։

Նա բրինձ է ժողովում, դաշտը ջրում, խնամում, հեռևում ձկներին, ջուր կրում։

Մայրը Տինգ-Յուին մի խոճկոր, այսինքն խոզի ձագ ընծայեց։ Խոճկորը շատ նիհար եր, ամբողջովին շիկահոդով ծածկված, բայց այնքան ուրախ, վոր ամենքի գլուխը տանում եր իր ճղղոցով։

Տինգ-Յուին շատ ուրախացրեց այս ընծան, և նա խոճկորի անունը խա-խա-խա դրեց։

Ցերևի խոճկորն ել եր հավանում այս անունը։ Նա շարունակ հետևում եր փոքրիկ Տինգ-Յուին և ղուտ-ղուտ կանչում։

Խոճկորի համար Ջուրն ել եր ղուտ-ղուտ, Տինգ-Յուն ել ղուտ-ղուտ, կերն ել եր ղուտ-ղուտ, մի խոսքով խոճկորն ամեն բանին ղուտ-ղուտ եր ասում։

Փոքրիկ Տինգ-Յուն ամենից շատ անգլիական վարձկան զինվորներից եր վախենում։

Ասենք, ինչու՞ չպետք է վախենար։ Չէ՞ վոր անգլիական զինվորներն ամեն բան խլում եյին չինացիների ձեռքից—բրինձ ասես, թե ձուկ, խոզի միս, թե մի ուրիշ բան։

Ցերը այդ զինվորները հարձակվում եյին վորևե չինացու տան վրա, նրանք քաշում-տանում եյին ամեն ինչ։

Նրանց հեռանալուց հետո, բացի մահից, ուրիշ փրկություն չեր մնում չինացուն, չին ընտանիքին։

—Ցեթե զինվորներն իմ խա-խա-խան ել փախցնեն, ի՞նչ պետք է անեմ յես,—հաճախ հարց եր տալիս ինքն-իրեն Տինգ-Յուն ու հարձակվում իր խոզուկի վրա, ամուր-ամուր գրկում, վզովը փաթաթվում ու ականջին փսփսում.

—Չեմ թողնի քեզ տանեն, չեմ թողնի...։ Բայց յեթե տանեն, ել ի՞նչ պետք անեմ յես, ել ի՞նչ կմնա ինձ։

II.

Ժամեն անցավ։ Տինգ-Յուի ձկները մեծացան։ Ուրիշ չին տղաների հետ միասին Տինգ-Յուն ձուկ եր բռնում ու չորացնում։

Մի որ տղաները վճռեցին անցնել անգլիացի վաճառականի շաքարյեղեգնի դաշտը։

Տղաները շատ հավանեցին այդ տեղը։ Նրանք թավալվում եյին խոտերի մեջ, ծառերը բարձրանում, ցատկոտում, ծիծաղում։

Ու բոլորովին չեյին շտապում տուն վերադառնալու...

Հանկարծ թնդանոթի ձայն լսվեց։

—Մեծ հրացանի ձայնն է,—աղաղակեց Տինգ-Յուն։

—Զինվորները,—աղաղակեցին սարսափած յերեխաները և նետվեցին դեպի տուն։ Վազում եյին, ինչքան ուժ ունեյին։

Տինգ-Յուն դեռ հեռվից նկատեց, թե ինչպես անգլիական զինվորներից մեկը հրացանի կոթով հարվածներ է հասցնում իր մորը։ Այն ել տեսավ, թե ինչպես զինվորը հրացանի սվինը խրեց իր սիրելի խոճկորի կուրծքը, բարձրացրեց և իբր թե վոչինչ չի պատահել—հեռացավ։

Ո՜հ, ինչպես եր կսկծում Տինգ-Յուի սիրտը։

Ո՞վ գիտե, ինչպես վախեցրեց այդ զինվորը Տինգ-Յուի մորը։

Ո՞վ գիտե, ինչպես եր ճվճվում նրա սիրելի խա-խա-խան։



Ցերեխան նետվեց դեպի զինվորը։ Նա հետևում եր նրան։ Հանկարծ կանգ առավ, մի փոքր մտածեց, յետ դարձավ ու մոր կողմն ուղղվեց։

Մայրն ընկած եր խրճթի առաջ և հազիվ եր շնչում։

Տինգ-Յուն փաթաթվեց մորը, գրկեց, համբուրեց նրա ձեռներն ու աչքերը ու միաժամանակ ինչ վոր բան եր ասում։

Մայրն աչքերը բաց արեց։ Նա տեսավ իր զավակին, փաթաթվեց նրա վզովը և ինչքան ուժ ուներ՝ կրծքին սեղմեց։

Լալիս եր մայրը։

—Ամեն ինչ տարան, սիրելի Տինգ-Յու, ամեն ինչ տարան,—կրկնում եր մայրը հազիվ լսելի ձայնով։

—Ի՞նչ գործ ունեն այստեղ անգլիացիները, ի՞նչ են ուզում մեզնից անգլիական զինվորները...—կրկնում եր Տինգ-Յուն աչքերը լի արցունքով։

Լալիս եր մայրը, լալիս եր և վորդին։

Ընտանիքի փոխարեն

Պիես 2 պատկերով

Պատկեր առաջին

Գործողությունը կատարվում է Չինաստանում, բանտում: Մութ է ու խոնավ, իուցի պատին ամրացրած է մի փայտե նեղ թախտ: Պատի վերևում մի փոքրիկ անցք կա: Թախտի վրա պառկել է Ծերունի չին բանտարկյալը, իսկ նրա առաջ, հատակին փռած ծղոտի վրա, պառկել է տասը տարեկան մի տղա:

Տղան անհանգիստ է: ժամանակ առ ժամանակ բարձրանում է, նստում, յերբեմն էլ կանգնում ու փորձում անցքին հասնել: Վերջը պառկում է: Ծերունին դեռ քնած չէ. նա հայացքը չի հեռացնում տղայից և հետևում է նրա բոլոր շարժումներին:

Տղայի անկողնի վրայով մկներ են անցնում: Տղան վախեցած ցատկում է ու աղաղակում: Ծերունին վերցնում է իր հին կոշիկները և ուժեղ կերպով խփում հատակին, վորպեսզի մկները վախենան ու հեռանան:

(Յերաժշտություն).

Ծերունի—Յեկ ինձ մոտ, յեկ, փոքրիկս: Անիծած մկները հանգիստ չեն թողնում քեզ:

Տղա—Այո, հանգիստ չեն թողնում... Չեն էլ թույլ տալիս, վոր մի փոքր աչքս կպցնեմ, քնեմ:

Ծերունի—Ասենք, չես էլ ուզում քնել... Ասա, տղաս, ինչու չես հանգըստանում, ինչն է տանջում քեզ:

Տղա—(աչքերն արտասուքով լի) Հորս մասին եյի մտածում... մտածում եյի նաև այն անիծած զինվորների մասին, վորոնք... ոհ... ինչ եյին ուզում են գաղանները նրանից... ինչ... ինչու...

Ծերունի— (փաղաքշական ձայնով ու բուունցքը կրծքին խփելով)... Ո՞ւմից... Ի՞նչ է պատահել, տղաս: Պատմիր, փոքրիկս, պատմիր, վոր հանգստանաս:

Տղա—(պատմում է մելոդեկլամացիայով).

Յերկու ամիս առաջ
Տեղի ունեցավ
Այն,
Ինչի մասին քեզ այժմ ուզում եմ պատմել...
Լսիր:
Մորս չեմ հիշում...
Նա վաղուց է մեռել:

Բայց նրա սիրով յես չեմ կշտանում...
Յեվ նրան, յես, դժբախտս, միշտ կարոտ եմ մնում:
Յես ու իմ հայրը
Փոքրիկ խրճիթում
Յերկուսով եյինք
Միասին ապրում... ապրում եյինք քաղցր, սիրով:
Ժպիտ ու արցունք մեր մեջ բաժանում...
Հաճախ միասին գիրք եյինք կարդում...
—Զավակս,—շատ հաճախ
Ասում եր ինձ հայրս..
Մեզ կոմունիստներիս
Հալածում են միշտ:
Յեթե բռնեցին, դու չվախենաս,
Զսոսկաս յերբեք, չլաս ու դողաս..,
Զավակիս համար
Ամոթ է վախը...
Լսիր ծերունի.
Մի ժուռ, սև գիշեր
Չգիտենք թե ո՞վ,
Բայց մեկը ուժեղ, ամուր
Թակեց մեր դուռը:
Դուռը բաց արինք,
Ու ներս թափվեցին զինվորներն անդութ...
Մեզ խուզարկեցին.
Հորս սպանեցին.
Իսկ յես կատաղած,
Փայտը ձեռքս առած
Հարձակվեցի նրանցից մեկի վրա
Յեվ ամբողջ ուժով
Հարված իջեցրի...
Դրանից հետո ահա այս բանտում... (հեկեկում է):

Ծերունի—(բարկացած).

Ոհ, զզվելիներ,
Հրեշներ,
Դահիճներ...
Բավական չեր
Հորն սպանեցին,

Այժմ էլ ահա
Մի մատ յերեխին
Բերել են այստեղ
Ու բանտը նետել։
Տղան—Տանից տանելիս,
Կամ բանտ բերելիս
Քանի, քանի անգամ
Անգութ ու անխնա՝
Հրացանի կոթը
Մեջքիս իջեցրին...
Ծերունի—Դու մի լա, տղաս,
Զգեստք ե մոռանաս, վոր դրանք գաղան են,
Բայց վախկոտ մկներ։
Շատ են վախենում, դողում, սարսափում,
Զլինի ըմբոստ ստրուկը մեկ որ
Նրանց ճիրաններից
Փախչի, ազատվի...
Բայց լսիր ինձ էլ...
Տասը տարի յե, ահա այս բանտում..
Ո՜հ, արևի լույսին կարոտ եմ մնում։
Շուտով,—լսիր իմ փոքրիկ,—
Արև կծագի՛ նաև չինացուն,
Արևը վառ, արևը կարմիր,
Արևը պայծառ մեր լուսաբացի։
Քնիր, իմ բալիկ,
Քնիր ու միշտ հիշիր,
Վոր կարմիր դրոշ ծածանողի պարտքը
Քեզ վրա յե դնում մեր մեծ ապագան։
(Ծերունին նրան պառկեցնում ե իր թախտի վրա, իսկ ինքը նստում նրա կողքին։ Պառկում։ Տղան քնում ե։ Ծերունին խորասուզվում ե մտքերի մեջ։ Քիչ հետո ծերունին որոր ե ասում։ (Մելոդեկլամացիայով)։
Կյանքի ծանր լուծը ճնշել ե մեջքս։
Ու չեմ յերգում... չունեմ էլ յերգ,
Բայց քեզ, իմ փոքրիկ բալաս,
Նանիկ կասեմ, վոր դու չլաս։
Այս սև որերը շուտով կանցնեն,
Կանհետանան ու կկորչեն,
Ցեվ չին յերկրում, նանիկ, նանի,
Կարմիր դրոշ կծածանի։
Դրոշը կարմիր, դրոշը սիրո,
Ցեղբայրական միության։
Ու կլսվի սարերից սար
Հաղթ մեր յերգն ազատության,
Մթթե քեզ այս սառը պատեր
Պիտ վախեցնեն, Սիուն-Սի,
Ապագայի դրոշակակիր,
Նանիկ արա, ժեծացիր։
(Այդ ժամանակ դուռը բացվում ե և ներս ե ընկնում մի զինվոր։ Նա հարձակվում ե քնած յերեխայի վրա ու բարձրացնում։ Տղան վախեցած ընկնում ե ծերունու գիրկը)։
Տղա—Քեզ ի՞ նչ են ուզում սպանել, պապի, ինչ՞ու համար են սպանում քեզ (ծերունին գրկում ե նրան)։
Զինվոր—(հրամայական տոնով). Դուրս յեկ, ազատ ես։
Տղան—Ազատ, բայց ո՞ւր կարող եմ գնալ, էլ ո՞ւմ մոտ։ Պապի, գնանք վիասին (քաշում ե ծերունուն)։
Ծերունի—(համբուրում ե). Գնա, գնա, իմ փոքրիկ,
«Ապագայի դրոշակակիր,
Քեզ ե սպասում ապագան».
Զինվոր—(քաշ ե տալիս տղային, տղան նայում ե ծերունուն. ծերունին աչքերով հետևում ե նրան. լաց ե լինում։ Տղան ու զինվորը դուրս են գնում։ Ծերունին մնում ե անշարժ, հետո ընկնում ե անկողնու վրա ու հեկեկում)։
Հեռվում յերևում ե տղան. կանգնել ե պատի տակ և չգիտե ուր գնա։
Անծանոթ—(մոտենում ե տղային). Դու Սուտի Յավայի տղան ես։
Տղա—(վախեցած). Այո։
Անծանոթ—Յես հորըդ բարեկամն եմ։ Լսել եմ, վոր քեզ այսոր պետք ե ազատեն ու յեկա քեզ տանելու։ Գնանք մեզ մոտ։ Քեզ այնպիսի տեղ տանեմ, վորտեղ ջերմ վերաբերմունք, սեր ու ժպիտ ե սպասում քեզ։ (Ուզում ե տղային տանել, բայց տղան յետ ե քաշվում)։
Տղա—(վախեցած). Չեմ ուզում, չեմ գա։
Անծանոթ—Գնանք, փոքրիկս, յես քեզ չեմ խաբում, գնանք։
(Գնում են)։

(Վարագույր)

Գաղեր յերկրորդ

Գործողությունը տեղի յե ունենում Վրաստանում։ Գեղեցիկ տուն, առաջը այգի. տան վրա խոշոր տառերով գրված ե «Մ ո պ ը».

Բոլոր յերկրների աշխատավորների զավակներ, միացեք։

Սանդուղքի աստիճանները լեփ-լեցուն են յերեխաներով—վրացի, ռուս, թուրք, հայ, չին, գերմանացի և այլն... Նրանք կանգնած են ձեռք ձեռքի տված և յերգում են Ինտերնացիոնալը։

«Ցելիր, ում կյանքը անիծել ե,
Ով ճորտ ե, մերկ ե և ստրուկ։
Արդեն վառվում են մեր սրտերը,
Արդեն կռվի յենք մենք ձգտում։
Այս հին աշխարհը կփորենք
Մենք մինչև հիմքերը և հետո
Մեր նոր աշխարհը կշինենք մենք,
Ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ։
Սա յե վերջին կռիվը
Ցեվ պայքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը աշխարհը կփրկե։

Ինտերնացիոնալ յերգելուց հետո կոլեկտիվ կերպով արտասանում են հետևյալ վոտանավորները։

I.

Ախ, ինչպես վաղ լուսաբացին
Ալ դրոշակն ե ծածանում,
Ապագան վողջ պինդ բռնել ենք
Մեր փոքրիկ կուռ ձեռքերով։
Շուտով, շուտով այս ձեռքերով
Կանենք մի նոր քաջություն –
Աշխատանքը մեզ սիրտ կտա,
Լույս գիտության կուղեկցի։
Սուր մանգաղն ու ծանր մուրճը
Մեզ են սպասում դեռ առաջ,
Ով վոր քաջ ե, ով պատանի,
Ալ դրոշակով դեպ առաջ։

II.

«Մենք պիոներներ ենք անհաղթ, համարձակ,
Նորածին կյանքի քաջ վորմնադիրներ.
Վորքան ել լինի վորոտ ու կայծակ,
Նոր շենք կշինենք բարձր, անվեհեր։
Նրա գագաթին միշտ վառ կմնա
Մեր ջահն անշեջ փարոսի նման։
Ցեվ ինչպես ծովում՝ նա միշտ ցույց կտա
Մեր նոր, լուսավոր, համարձակ ճամբան։
«Պատրաստ ենք, պատրաստ» մենք միշտ կգոչենք,
Անմահ ձայներով կոչը կենդանի,
Մինչ կարմիր դրոշը, մեր արյան գնով
Ամբողջ աշխարհում անվերջ ծածանի։

(Վարագույր)

Առաջադրություն. Այս պիեսը խաղացեք ձեր դպրոցում։ Ներկայացմանը հրավիրեք և այլ ազգությունների յերեխաներ։

Կեցցե «Մ ո պ ը»

Փոքրիկ Ժանն ու Մարին քաղցած եյին։ Նրանք մեծ յեռանդով փընտռում եյին դատարկ դարակը,— գուցե փշրանքներ մնացած լինեն վորևե անկյունում։

—Ժան, մայրիկը գալիս ե,—ասաց Մարին, յերևի ուտելու բան ե բերում։

—Վոչինչ ել չի բերում մայրիկը,—փնթփնթաց Ժանը։ Ջե՞ վոր բանտը գնացել հայրիկին տեսնելու, իսկ դու պետք ե գիտենաս, վոր բանտապետը մեզ համար կերակուր չի ուղարկում։

—Մայրիկ, մայրիկ, տեսա՞ր հայրիկին, ի՞նչպես ե առողջությունը—հարցրին յերեխաներն իրենց մորը։

Գունաթափ և հոգնած մայրը հազիվ ե վոտքի վրա կանգնում։

—Ի՞նչ ասաց հայրիկը, շուտո՞վ կազատվի,—անհամբեր հարցեր եյին տալիս յերեխաները։

—Զգիտեմ, զավակներս, թույլ չտվին տեսնեմ ձեր հայրիկին. նույն իսկ նամակ ել չընդունեցին նրան հանձնելու։

Մոր աչքերից արցունք եր հոսում։

Նա նստեց թախտի վրա։

—Մի լա, մայրիկ,—հուսադրում էին յերեխաները և գրկում իրենց մորը։

—Գիտեմ, քաղցած եք, սիրելի բալիկներս, բայց ինչով ձեզ կերակրեմ։ Ձեր հայրը նստած է բանտում, ինձ էլ վոչվոք աշխատանքի չի ընդունում։ Ցերանի յԷրբ կգա այն որը, յերբ այստեղի բանվորներն էլ այնտեղի բանվորների պես ազատ լինեն։

—ՎՀրտեղի, մայրիկ,—միաձայն հարց տվին յերեխաները։

—Այնտեղ, հեռու—խորհուրդների յերկրում,—զավակներս։

—Ի՞նչ կա այնտեղ, պատմիր մեզ, մայրիկ,—խնդրում էին յերեխաները։

—Պատմեմ, աղավնյակներս. ինչպես այսոր մեր բանվորները վոչինչ չունեն, այնպես էլ այնտեղի բանվորներն առաջ վոչինչ չունեյին։ Այնտեղ էլ բանվորները շատ էին աշխատում, բայց չնչին աշխատավարձ ստանում։ Ինչպես դուք, այնպես էլ նրանց յերեխաները քաղցած էին մնում։

—Հետո, հետո, մայրիկ,—հարցրեց հետաքրքրությամբ փոքրիկ Մարին։

—Հետո, բանվորներն ապստամբեցին, հաղթեցին հարուստներին և ազատություն ձեռք բերին։ Այո, զավակներս, այնտեղ շատ լավ է ձեզ պես փոքրերի դրությունը. նրանք մեծ, արևոտ սենյակներում են ապրում։

—Հետո, այնտեղ բանվորներին չՀն ձերբակալում,—հարցրեց Ժանը։

—Վոչ, զավակս, ասացի, վոր այնտեղի բանվորներն արդեն ազատություն են ձեռք բերել,

—Ինչ լավ է այնտեղ,—ասաց Ժանը։

Մանուկները լռեցին. տիրեց լռություն։

Հանկարծ դուռը ծեծեցին։

—Ո՞վ պետք է լինի,—ասաց զարմացած մայրը և գնաց դուռը բանալու։

Վախեցած Մարին մոր փեշերից չեր պոկվում և ահ ու դողով հետևում եր նրան։

Դռան շեմքին մի յերիտասարդ բանվոր յերևաց։

—Ցերևի մեծ կարիքի մեջ եք, այդպես չՀ,—հարցրեց բանվորը։

—Շատ մեծ, ընկեր Ժորժ, այս բոպեյին էլ քաղցած ենք,—պատասխանեց յերեխաների մայրը։

—Ժան, Մարի, յեկեք այստեղ և լսեք, թե ինչ եմ ասելու,—դիմեց նա յերեխաներին։—Տասնևվեց տարի յե, ինչ խորհրդային յերկրի բանվորները «Մոպր» են հիմնել։

—Անպատճառ այն յերկրում, չՀ, մայրիկ, վորի մասին քիչ առաջ մեզ պատմում էյիր,—հարցրեց Ժանը։

—Այո, զավակս։

—Ի՞նչ բան է «Մոպրը»,—հարցրին յերեխաները։

—«Մոպրը» այն ընկերությունն է, վորն ոգնում է բոլոր յերկրների քանտարկյալ բանվորներին և նրանց ընտանիքներին։

—Ձեր հոր պես բանվորներին,—բացատրեց Ժորժը և շարունակեց,—փոքրիկներս, դրա համար է, վոր յեկել եմ այսոր ձեզ մոտ։ Ցես պետք է ձեզ հանձնեմ այն փողը, վոր ձեզ պես փոքրերի հայրերն են ժողովել։

Այս խոսքերի հետ միասին Ժորժը փողը տվեց յերեխաների մորը։

—Ահա, զավակներս, այս փողերը խորհրդային յերկրից են ուղարկել մեզ,—ավելացրեց մայրը։

—Կեցցե «Մոպրը»,—ուրախ-ուրախ աղաղակեցին յերեխաները։

Առաջադրություն. Անդամագրվեք «Մոպրին»։

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՐԵՐԸ

Հեղափոխական որացույց



Առաջադրություն. *Կազմեք այսպիսի որացույց և կախեք դասարանում։*

Ինչպես անցկացրեց մեր դպրոցը Հոկտեմբերյան հեղափոխության հանդիսավոր յերեկոն

Դպրոցում հանդիսավոր կերպով տոնեցին Հոկտեմբերյան հեղափոխությանը նվիրված յերեկոն։

Յերեկոյին հրավիրել եյինք վրացական, թուրքական, հայկական և ռուսական դպրոցների աշակերտությանը։

Յերեկոն բաց արեց նախագահությունը։ Նախագահության մեջ ընտրվեցին նաև հրավիրված դպրոցների աշակերտներից։

Նրանք մեզ վողջույնի խոսք ասացին։

Շատ հավանեցինք թուրք ընկերոջ ճառը։

Նա ասաց հետևյալը.

«Թանգագին ընկերներ, մեր դպրոցի կողմից վողջունում եմ ձեզ։ Մենք տարբեր ազգությունների յերեխաներս այսոր հավաքվել ենք այստեղ։ Մենք լսել ենք մեր ծնողներից, վոր միապետության ժամանակ կառավարությունն ատելություն եր սերմանում ազգությունների միջև և մի ազգություն թշնամացնում մյուս ազգության հետ։

Բայց Հոկտեմբերյան հեղափոխությունը վերջ տվեց ազգային ատելությանը մեզնում։

Բոլոր ազգությունների աշխատավորությունը միացավ և լծվեց ընդհանուր աշխատանքի։ Այսոր այլևս յեղբայրը յեղբոր արյուն չի թափում մեզնում։

Աշխատավորությունը շատ լավ է հասկանում, վոր ազգային ատելությունն ու ազգերի միջև տեղի ունեցող կռիվները միայն և միայն ուժեղացնում են աշխատավորության ընդհանուր թշնամուն։

Մենք բոլորս յեղբայրներ ենք և բոլորս միևնույն նպատակին ենք ծառայում։

Կեցցե ազգությունների յեղբայրական միությունը։

Կեցցե Հոկտեմբերյան հեղափոխությունը»։

Մենք ու մեր հյուրերը վոտանավորներ արտասանեցինք ու յերգեցինք։

Նրանք շատ հավանեցին մեր «Ցեղբայրներ ենք» պատի թերթը։

Վերջը բոլորս միասին Ինտերացիոնալ յերգեցինք և ուրախ-ուրախ ցրվեցինք։

Արյունոտ կիրակի

Առաջադրություն. Մասնակցեք դպրոցի կազմակերպած ցերեկույթին։

Գյուղի դպրոցների համար

1. Ցերեկույթին հրավիրեք կոլտնտեսության անդամներին,

2. Խնդրեք, վոր պատմեն ձեզ հուշեր 1905 թ. հեղափոխությունից։ Ինչ ազդեցություն է ունեցել ձեր գյուղի վրա այդ հեղափոխությունը։

Քաղաքի դպրոցների համար

1. Ցերեկույթին հրավիրեք ձեր դպրոցի շեֆ-գործարանի բանվորներին։

2. Խնդրեք հին բանվորներին, վոր պատմեն ձեզ 1905 թվի հեղափոխության մասին։ Ինչպես եյին պայքարում այն ժամանակ բանվորները և ինչպես եր կռվում կառավարությունը բանվորների դեմ։

Սգո-առավոտ Լենինի հիշատակին

Ինքը տարի յե, ինչ վախճանվել է համաշխարհային պրոլետարիատի ղեկավար Լենինը։

Այդ որը հավերժացնելու համար մենք դպրոցում սգո-ցերեկ կազմակերպեցինք։

Բոլորը հավաքվել եյին մեծ դահլիճում։

Լենինի արձանը սևով եր պատած։ Արձանի յերկու կողմը յերկու յերեխա պատվո պահակ եյին կանգնել։

Պատվո պահակները վորոշ ժամանակից հետո հերթով փոխվում եյին։

Նախագահություն ընտրեցինք։

Նախագահը դիմեց մեզ և առաջարկեց վոտքի կանգնել և հարգել Մեծ Մարդու հիշատակը։

Դահլիճը վոտքի կանգնեց։ Խումբը սգո յերգ եր յերգում։

Ցերգից հետո զեկուցվեց Լենինի մանկության և գործունեության մասին։

Վոտանավորներ արտասանվեցին։ Մեջընդմեջ խումբը սգո յերգեր եր յերգում։

Փետրվարի 25.

Փետրվարի 25-ի առավոտն եր։

Չնայած ձմեռվա վերջերն եր, բայց արևն արդեն դուրեկան ճառագայթներով շոյում եր մեր դեմքերը։

Փողոցներն անսովոր տեսք եյին ստացել։

Շենքերը զարդարված եյին կարմիր դրոշակներով և գույնզգույն ելեքտրական լույսերով։

Ծով ժողովուրդ եր փողոց դուրս յեկել։

Հաղարավոր բանվորներ անցնում եյին շարքերով։

Ամենքը տոնում եյին Վրաստանի աշխատավորության հաղթանակի որը։

Ավտոները շարժվում եյին կարգով, իսկ ոդում այերոպլաններ եյին սավառնում։

Ընդհանուր յերթին մասնակցում եյին բանվորները, ծառայողները, աշակերտները, զորքը...

Ցերաժշտությունը, ժողովրդի յերգը փառք ու պատիվ եյին տալիս Վրաստանի վերածնության որին։

Լսվում եյին ուրախ աղաղակներ.

—Կեցցե փետրվարի 25-ը, կեցցե աշխատավորության ազատությունը։

Գեղեցիկ եր քաղաքը, մանավանդ գիշերը։

Ամեն անկյուն զարդարված եր գույնզգույն լույսերով։

Թատրոններն ու կինոները լի եյին ժողովրդով։

Մարտի 8-ը

Մեր դպրոցի ամբողջ աշակերտությունն այսոր հավաքվել եր դպրոցի մեծ դահլիճում։

Դահլիճը զարդարված եր կանաչ ճյուղերով, նկարներով և պլակատներով։

Պլակատներից մեկի վրա կարդում ենք—

«Մարտի 8-ը կանանց ազատագրման որն է»։

Յերկրորդի վրա—

«Մեքենան ու մանկամտուրը թեթևացրին կնոջ աշխատանքը»։

Ուսուցիչներից մեկը զեկուցեց մարտի 8-ի մասին.

—Սիրելի յերեխաներ,—ասաց նա,—մենք այսոր կնոջ ազատագրման օրն ենք տոնում։ Շատ ծանր պայմաններում եր ապրում կինը հին ժամանակ։ Նրա համար ուսումն ու գիտությունն ավելորդ եյին համարվում։ Կնոջ պարտականությունն եր տունը պահել։ Մի քանի տեղերում նորածին աղջկան սպանում եյին, վորովհետև ընտանիքում նա ավելորդ բեռ եր համարվում։

Բայց ահա կինը յերևում է գործարանում. նրան աշխատանք են տվել։ Բայց ինչո՞ւ.—վորովհետև ագահ գործարանատերը կնոջ աշխատանքն ավելի պակաս է գնահատում և ավելի պակաս վարձատրում, քան տղամարդու աշխատանքը։ Սրա հետ միասին նրանից նույնչափ աշխատանք է պահանջում, վորքան և տղամարդուց։

Այս եր կնոջ վիճակը հնում։

Կինը չեր հաշտվում այս դրության հետ և պայքարում եր։

Հասավ Հոկտեմբերյան հեղափոխությունը։

Ազատ շունչ քաշեց աշխատավորությունը, ազատագրվեց և կինը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը կնոջն ազատեց ստրկի վիճակից։

Այսոր մենք ականատես ենք, թե ինչպես կինը տղամարդու հետ հավասար լծվել է ամեն տեսակ աշխատանքների։

Բայց, փոքրիկներս, կինն ազատ վիճակ է ապրում միայն Խորհրդային Միության մեջ։ Ուրիշ տեղերում նա դեռ տղամարդուն հավասար բոլոր իրավունքներից չի ոգտվում։

Ցանկանանք, վոր խորհրդային մարտի 8-ը համաշխարհային մարտի 8 դառնա։

Կեցցե մարտի 8-ը,—վերջացրեց նա։

Կեցցե Հոկտեմբերյան հեղափոխությունը,—գոչում եյինք մենք ծափահարելով։

> Մարտի 8-ը պարտավորեցնում է աշխատավոր կնոջը՝ պայքարել սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար։

Մարտի 12-ը

(Միապետության անկման օրը)

Առաջադրություն. Ցարի անկման մասին նյութեր հավաքեք։ Նյութերը տվեք բրիգադին և հանձնարարեք մարտի 12-ի մասին զեկուցում պատրաստել։

Քաղաքի դպրոցների համար. Հավաքած նյութերն ուղարկեք յենթաշեֆ գյուղի դպրոցին։

Գյուղի դպրոցների համար. Մարտի 12-ի մասին զեկուցում կազմակերպեք կոլխոզնիկների համար, ինչպես և այդ որվա մասին ժողոված նյութերը կարդացեք նրանց։

Մայիսի մեկը

Ամբողջ աշխարհը, բացի Խորհրդային Միությունից, յերկու անհաշտ բանակի յե բաժանված—

Աշխատավորներ և վոչ աշխատավորներ։

Այս յերկու բանակների միջև մեծ կռիվ է տեղի ունենում։

Աշխատավորը պայքարում է վոչ աշխատավորի դեմ։

Ինչպես գիտենք, աշխարհի հարստություն ստեղծողը աշխատավորությունն է, բայց այն ել գիտենք, վոր այդ հարստությունից վոչ թե աշխատավորությունն է ոգտվում, այլ բուրժուազիան, այսինքն այն մարդիկ, վորոնք ամենևին չեն աշխատում։

Ահա այս անարդարությունն ու անհավասարությունն է այն կռվի պատճառը, վոր աշխատավորությունը վարում է հարուստների դեմ։

Ամբողջ աշխարհի բանվորությունը մի կուռ միություն է հաստատել։

Բանվորները լավ են գիտակցում, վոր միայն այս միությամբ կարող են հաղթել թշնամուն։

Այս միությունն ել ավելի ամրապնդելու համար, ամեն տարի, մայիսի մեկին, ամբողջ աշխարհի աշխատավոր դասակարգն իր ուժերն է ցուցադրում, փողոց դուրս գալիս, ցույցեր կազմակերպում։

Այս ցույցերով նա սպառնում է հարուստներին—

—Մենք, ամբողջ յերկրագնդի աշխատավորներս, մի մարդու պես, կը-պաշտպանենք աշխատավորների իրավունքները։

—Մենք կռվում ենք բանվորներին ճնշողների դեմ և կկռվենք այնքան, մինչև վոր վերջնականապես հաղթենք։

Այդ որն ամբողջ բուրժուազիան վոտքի յե յելնում. նա ամեն միջոց գործ է դնում ցույցերը խանգարելու։

Նա զորք է ուղարկում ցուցարարների դեմ ցույցերը ցրելու։

Բայց պայքարողները չեն զիջում և համարձակ շարունակում են իրենց կռիվը։

Մայիսի մեկը խորհրդային յեվ բուրժուական յերկրներում

Խորհրդային Միության աշխատավորությունը մեծ հանդիսով է տոնում մայիսի մեկը։

Աշխատավորները դուրս են գալիս փողոց յերաժշտությամբ, յերգերով ու դրոշակներով, վորոնց վրա մուրճ ու մանգաղ է նկարած և մակագրած—

«Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք»։

Ինչու՞ յե ցույցի դուրս գալիս խորհրդային աշխատավորությունը։

Վոչ, իհարկե, կռվի համար։

Ո՞ւմ դեմ պետք է կռվի նա։ Այստեղ նրան ճնշող չկա, և յերկրի կառավարության դեկը նրա ձեռքին է։

Խորհրդային Միության աշխատավորությունն այդ ցույցերով ահա թե ինչ է ասում համաշխարհային աշխատավորներին.

—Կռվեցեք կեղեքիչների, ճնշողների դեմ, կռվեցեք վերջնական հաղթանակի համար այնպես, ինչպես մենք կռվեցինք և հաղթեցինք թշնամուն։

—Մենք ամենքս ձեզ հետ ենք. և յեթե դուք մեզ կանչեք—մենք պատրաստ ենք ձեզ հետ միասին տապալելու համաշխարհային բուրժուազիային։

Այդ որը բուրժուական յերկրներում շատ ու շատ բանվորներ են բանտարկում։

Ի՞նչն է վիրավորում բոլոր յերկրների բանվորներին։

Միևնույն ճնշված վիճակը, միևնույն նպատակը—պայքար բանվորների վերջնական ազատագրման համար։

Պայքար աշխատավորության վերջնական հաղթանակի համար։

Բացի խորհրդային յերկրից, բանվորն ամեն տեղ ճնշված է, իսկ հարուստը ճնշող, հարստահարող։

Բոլոր յերկրների աշխատավորներն ել շատ լավ գիտեն, վոր իրենց կուռ միությամբ են հաղթելու բուրժուազիային և սրա համար հետևյալ լոզունգն են ստեղծել—

«Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք»։

Առաջադրություն. Մասնակցեք մայիսի մեկի առթիվ դպրոցում կազմակերպված ցերեկույթին։ Վոտանավորներ սովորեք։ Կանաչ ճյուղերով և կարմիր դրոշակներով զարդարեք դպրոցը։ «Կարմիր Ծիլեր»-ում գտեք մայիսի մեկի վերաբերյալ նյութեր ու կարդացեք։ Կարդացածը պատմեք ընկերներին։ Ձեր կարդացած նյութերն ուղարկեք ձեր դպրոցի յենթաշեֆ գյուղի դպրոցին։

Մայիսի 2-ը

Մայիսի մեկին հետևում է մայիսի 2-ը—մանկական տոնը։

Այդ որը մանուկները դուրս են գալիս փողոց, յերգում, նվագում, միմյանց վողջունում, կարմիր դրոշակներ ծածանում։

Ահա թե ինչ է գրված այդ դրոշակների վրա—

Բոլոր յերկրների աշխատավորների զավակներ, միացեք։

Զմոռանանք Մոպրը։

Վոչ մեկը Մոպրի շարքերից դուրս չպետք է մնա։

Այդ որը հիշեցնում է բոլոր յերկրների յերեխաներին, վոր նրանք պետք է յեղբայրական կուռ միություն կազմեն թշնամուն տապալելու համար։

Ահա թե ինչ են հանձնարարում Խորհրդային Միության յերեխաները բուրժուական յերկրների աշխատավորների յերեխաներին—

—Թանգագին ընկերներ, մեր հայրերն ու մայրերը կռվով ձեռք բերին ազատություն։

Այսոր մենք ազատ յերկրի ազատ զավակներ ենք։

Թև ու թիկունք յեղեք ձեր ծնողներին և միացյալ ուժերով տապալեք թշնամուն։

Մենք ձեզ հետ ենք, ձեզ հետ միասին կկռվենք ձեզ ազատագրելու համար։

Կեցցե մայիսի 2-ը, մանկական միջազգային որը։

Առաջադրություն. 1. Մասնակցեք դպրոցի կազմակերպած մայիսի 2-ի հանդես-ցերեկույթին։

2. Ցերեկույթին հրավիրեք ձեր շեֆ գործարանի բանվորներին և ուրիշ ազգությունների դպրոցների աշակերտներին։

3. Խաղալիքներ պատրաստեք և նվիրեք ձեր շեֆ գործարանի մանկամսուրի յերեխաներին։

ՅԱՆԿ

ԹԵՄԱ I

Ինչպես եյին ապրում առաջ բանվորները ու գյուղացիները

1. Ո՞ւմ եր պատկանում առաջ իշխանությունը 3
2. Ի՞նչպես եյին ապրում առաջ բանվորները 3
3. Նկարչի արհեստանոցում 5
4. Բանվորի բնակարանն առաջ 7
5. Գործարանատիրոջ բնակարանը 8
6. Կնոջ դրությունը հին ժամանակներում 8
7. Ցերեխաների դրությունն առաջ 9
8. Գյուղացու դրությունը թագավորի ժամանակ 10
9. Առաջ հողն ո՞ւմ եր պատկանում 11
10. Ո՞վ եր ոգտվում գյուղացու աշխատանքից 12
11. Այսպես եյին ծեծում, թալանում գյուղացիներին (Նինոշվիլի) . . 13
12. Անգությները 15
13. Պատկեր գյուղացու կյանքից (Լոմոուրի) 17
14. Ի՞նչ եյին ուզում նրանից (Գարաշվիլի) 19
15. Գյուղացու ինչ գործն է 21
16. Գյուղացիները կռվում են իրենց թշնամու դեմ 23

ԹԵՄԱ II

Բանվորների ու գյուղացիների կռիվը թագավորի, նրա չինովնիկների, կապիտալիստների յեվ կալվածատերերի դեմ

17. Բանվորների արդար պահանջին բանտերով եյին պատասխանում . 25
18. Բանվորների կյանքը բարելավող առաջին մարտիկները և Մեծ Հեղափոխականի ընտանիքը 26
19. Լենինի մանկությունը 27
20. Վլադիմիր Իլիչը և նրա ընկերները Պետերբուրգում (այժմ Լենինգրադ) 28
21. Գաղտնի խմբակներ 28
22. Վլադիմիր Իլիչը բանվորական խմբակներում 30
23. Գաղտնի տպարան 30
24. Գործադուլներ 33
25. Բանտերը 34
26. Ձիկորա (Սուլաշվիլու) 35
27. Կինո-նկար «Լուսություն» 37
28. Վլադիմիր Իլիչը Սիբիրում և արտասահմանում 42
29. Բանվորական խմբակների ղեկավարները ղինում եյին նաև գյուղացիներին կալվածատերերի դեմ 43
30. Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալին 44
31. Ֆիլիպպ Յեվսեևիչ Մախարաձե 44

ԹԵՄԱ III

Առաջին հեղափոխությունը

32. Ի՞նչպես թագավորը հաղարավոր մարդ գնդակահարեց և ինչպես գյուղացիները փորձեցին հալածել կալվածատերերին 46
33. Հունվարի ինը... 47
34. Նկարչի արհեստանոցում 48
35. Ի՞նչ եր սովորեցնում Լենինը բանվորներին և գյուղացիներին են սև որերին 49

ԹԵՄԱ IV

Հոկտեմբերյան հեղափոխությունը

36. Ինչո՞ւ սկսվեց սոսկալի պատերազմը 51
37. Ինչպես բանվորները ու գյուղացիները գահընկեց արին թագավորին 52
38. Թագավորին գահընկեց անելուց հետո 52
39. Լենինը վերադառնում է Պետրոգրադ 52
40. Կապիտալիստները, կալվածատերերն ու մենշևիկները հալածում եյին Լենինին 53
41. Հոկտեմբերյան հեղափոխությունը 54
42. Մենշևիկների տիրապետությունը Վրաստանում 54
43. Վրաստանի խորհրդայնացումը 55

ԹԵՄԱ V

Կարմիր բանակ

44. Կարմիր բանակ 56
45. Մեր շարքերը բաղկացած են զանազան ցեղերի աշխատավոր զավակներից 57
46. Կարմիր զորանոցում 58
47. Կարմիր բանակայինների վարժությունները 59
48. Ինչպես եյին կարմիր բանակայիններն ոգնում կոլտնտեսությունների 60
49. «Դենշիկ» 60
50. Տնտեսության վերականգնումը 62
51. Բոլոր յերկրների բանվորները ու գյուղացիները մեր բարեկամներն են 63

ԹԵՄԱ VI

Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները

52. Ի՞նչ տվեց Հոկտեմբերյան հեղափոխությունը բանվորներին ու գյուղացիներին 64
53. Հնգամյա պլանը 65
54. Արագ և մեծ թափով 66
55. Սոցմրցակցություն 67
56. Բուքսիրը—Ցկվիտի 67
57. Քաղաքի և գյուղի կապը 69
58. Դպրոց ու գործարան 70
59. Մեր աշխատանքը յենթաշեֆ գյուղում 72
60. Զագես 72
61. Հացի գործարան 74
62. Հասարակական լվացքատուն 76

63. Խոհանոց-գործարան 76
64. Կոոպերատիվ ճաշարան 78
65. Բանվոր գյուտարարներ 79
66. Բանվոր գյուտարար ընկ. Կաբիշևը 80
67. Նոր և ուշադրության արժանի գյուտ 80
68. Բանվորական տներ 81
69. «Կարմիր բանակ» կոլեկտիվի ղեկավարը 82
70. Հող վարելու գործիքները հնում 83
71. Ելեքտրականությունը գյուղատնտեսության մեջ 85
72. Հոկտեմբերյան հեղափոխությունը փոխեց կնոջ դրությունը . . . 86
73. Մայրս մեքենավար է 87
74. Մեր դպրոցի շենքը մետաքսի գործարանն է 88
75. Մանկամսուր 92
76. Ինչ տվեց մանուկներին Հոկտեմբերյան հեղափոխությունը . . . 94
77. Պատանի հանդիսատեսների թատրոն 94
78. Պատանիների կուլտուրայի և հանգստի այգին 95
79. Մանկական հրապարակ 96
80. Գրադարանում 96
81. Շարժական ընթերցարան 96
82. Ուսումն ու գիտությունը մեզնում 97
83. Լիկկայան 98
84. Մեր կուլտարշավը 99
85. Խրճիթ-ընթերցարան 100
86. Խորհրդային իշխանությունը հոգում է աշխատավորության առողջության մասին 101
87. Հանգստի տանը 102
88. Կինո-նկար «Յերկու պատկեր» 103

ԹԵՄԱ VII

Յերեխաների դրությունը կապիտալիստական յերկրներում յեվ մեր կապը նրանց հետ

89. Մեր կապն այլ յերկրների պիոներների հետ 110
90. Ցինգ-Յուն 111
91. Ընտանիքի փոխարեն (պիես 2 պատկերով) 114
92. «Կեցցե Մոպրը» 119

Հեղափոխական որերը

93. Հեղափոխական որացույց 122
94. Ինչպես անցկացրեց մեր դպրոցը Հոկտեմբերյան հեղափոխության հանդիսավոր յերեկոն 123
95. Արյունոտ կիրակի 124
96. Սգո առավոտ Լենինի հիշատակին 124
97. Փետրվարի 25-ը 124
98. Մարտի 8-ը 125
99. Մարտի 12-ը 127
100. Մայիսի 1-ը 127
101. Մայիսի 1-ը խորհրդային և բուրժուական յերկրներում 128
102. Մայիսի 2-ը 129
103. Ցանկ 130

Ц. 1 р. 80 к.

Н. БОЦВАДЗЕ и Н. БУРДЖАНАДЗЕ

ОБЩЕСТВОВЕДЕНИЕ

Учебная книга для II группы

Перев. с груз. А. ОЛНДЖАНИ

Госуд. Издательство Грузии

Тифлис — 1932

Ц. 1 Р. 80 К.

Н. БОЦВАДЗЕ и К. БУРДЖАНАДЗЕ

Обществоведение

Трудовая книга для II группы

Перев. с груз. А. ОГИДЖАНЯН

Госуд. Издательство Грузии

Тифлис—1932

4

<< Ազգային գրադարան >>
NL0189706